

ԷՄՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ
«ԱՐԵՎԵԼԶ» ՕՐԱԹԵՐԻԹԸ

ԵՐԵՎԱՆ

ԼՍՐԵՅԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԽԵԿ

Տնօրենության գրասենյակի
պրնպ

ԷՄՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ - իջ

15.10.03 *[Signature]*

**ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ
«ԱՐԵՎԵԼՔ» ՕՐԱԹԵՐԹԸ**

A II
88364



ՀՏԴ 002 (091)

ԳՄԴ 76.12

Կ – 755

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագիր պատմ. գիտ. դոկտոր Ալբերտ Խառատյան

Կ – 755

Աշխատությունը նվիրված է Կ.Պոլսի «Արևելք» օրաթերթի պատմությանը (1884-1908թթ.): Մանրամասն վերլուծված է օրաթերթի տեղն ու դերը արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքում: Բացահայտված է այդ պարբերականի վերաբերմունքը Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում կապիտալիստական արտադրանական և հարաբերությունների զարգացման նկատմամբ, նրա բերած նպաստը արևմտահայ գավառի, այսինքն՝ բուն Արևմտյան Հայաստանի իրական կացությանը օսմանյան մայրաքաղաքի հայ գաղթօջախին հաղորդակից դարձնելու, նրա նկարագիրը հետագա սերունդներին հասցնելու գործում: Զննարկված են նաև Ազգային սահմանադրության, հայ եկեղեցու և հոգևորականության, Մեծ տերությունների վարած քաղաքականության, դպրոցական գործի, կնոջ իրավահավասարության, ազգային արվեստի և գրականության զարգացման, հայ ազգային-ազատագրական շարժումների հիմնախնդիրները: Թերթում քննարկված հարցերի թվարկումն անգամ ցույց է տալիս նրա գործունեության լայն շառավիղները: Բացահայտվում է «Արևելքի» ներդրումը հայ լրագրական մշակույթի և լրատվության ասպարեզում: Այս աշխատությունն առաջին փորձն է «Արևելքի» պատմության ուսումնասիրության ասպարեզում:

Կ $\frac{4502010000}{703(02) - 2003}$ 2003

ԳՄԴ 76.12

ISBN 5 – 8080 – 0538 – 8

© ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2003

Հայ մշակույթի պատմության մեջ առանձնահատուկ տեղ ունի պարբերական մամուլը: Այն սկզբնավորվել է հայրենիքից դուրս /1794թ.Մադրաս/, ապա տարածվել ու արմատավորվել հայկական տարբեր գաղթօջախներում: Բուն հայրենիքում պարբերական մամուլը ծլարձակել է ավելի քան կես դար ուշ. դա Վասպուրականի Վարագա վանքում վարդապետ Սկրտիչ Խրիմյանի ջանքերով, հոգածությամբ և խմբագրությամբ 1858թ. հրատարակվող «Արծուի Վասպուրական» ամսագիրն էր, որը մինչ այդ՝ 1855թ. հունիսից մինչև 1856-ի հունիսը ներառյալ լույս էր տեսել Կ.Պոլսում: Հայրենի հողի վրա լույս տեսնող ամսագիրը մեծ գործ կատարեց հայ գյուղացու և արևեստավորի ազգային ինքնագիտակցության արթնացման և մարդկային արժանապատվության զարգացման գործում:

Պատմական հանգամանքների բերումով հայ պարբերական մամուլը զարգացման բարձր աստիճանի հասավ Եվրոպայում, ռուսական կայսրության մշակութային տարբեր կենտրոններում, օսմանյան կայսրության ծովամերձ երկու գաղթօջախներում /Կ.Պոլիս և Ջնյուռնիա/: Արևելահայ մշակութային կենտրոնը Թիֆլիսն էր, արևմտահայը՝ Կ. Պոլիսը: Հայ մամուլը զարգացման վերելք ապրեց առանձնապես 19-րդ դարի վերջին քառորդին և մեծ գործ կատարեց հասարակական-քաղաքական կյանքի հեղաբեկման մեջ, սատարեց լուսավորական նպատակներ հետապնդող մշակութային ընկերություններին: Պետերբուրգում, Մոսկվայում, Թիֆլիսում, Կ.Պոլսում, Ջնյուռնիայում սկզբում լույս տեսան քաղաքական-գաղափարական տարբեր հոսանքներին պատկանող մամուլի օրգաններ, ավելի ուշ՝ դարավերջին, ձևավորվեց կուսակցական մամուլը:

Արևելահայ մշակութային կյանքում մեծ էր Ստ. Նազարյանցի խմբագրությամբ Պետերբուրգում հրատարակվող «Հյուսիսսևիայի», առանձնապես նրա երիտասարդ աշխատակից Միքայել Նալբանդյանի դերը, որի անունը երկար ժամանակ ուղենիշ եղավ հետագա սերունդների համար: Արևելահայ մամուլի պատմության մեջ առանձնակի պետք է ընդգծել Թիֆլիսում հրատարակվող «Սշակ»-ի դերը, որի անփոփոխ խմբագիրը 1872-

1892թթ. եղավ Գրիգոր Արծրունին: «Մշակը» ցանկանում էր իր էջերում մեկնաբանել նաև արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքի զանազան երևույթները: Չնայած Արծրունին գործում էր նպատակաուղղված, սակայն դիպվածն արագացրեց նրա իրականացումը: Ժամանակավորապես Թիֆլիսում գտնվող արևմտահայ գործիչ Մկրտիչ Փորթուզալյանը Կ Պոլսի իր ընկերներից մեկից՝ Արփիար Արփիարյանից լուրեր է խնդրում տեղի իրադարձությունների վերաբերյալ: Վերջինս նամակներում արտահայտում է իր «անաչառ, համակողմանի մոտեցումը, հանրության կենսական խնդիրներին արծազանքելու և գործնական լուծումներ գտնելու վճռականությունը»¹: Այդ նամակներին պատահաբար ծանոթանում է Գր. Արծրունին: Առանց հեղինակի կարծիքը հարցնելու, նա դրանք զետեղում է «Մշակում» «Նամակ Կ. Պոլսից» խորագրով և դնում «Հ» ստորագրությունը: Այդ հայտնությունն անակնկալ էր Արփիարյանի համար: Արծրունու խորհրդով նա շարունակում է թղթակցությունները Փորթուզալյանի վերադարձից հետո էլ:

Աշխատակցությունը «Մշակին» որոշիչ նշանակություն ունեցավ Արփիարյանի հասարակական գործունեության համար: Դա նրա հրապարակախոսական գործունեության սկիզբն էր, որը եղավ արգասաբեր և հող նախապատրաստեց հետագա գործունեության համար: Մինչ այդ Կ. Պոլսում արդեն հրատարակվում էին «Հայաստան», «Մասիս», «Նոյյան աղավնի», «Արփի Արարատյան», «Ներհակ», «Մեղու», նույնիսկ հայատառ թուրքերեն թերթեր: Բայց նույն Արփիարյանի բնորոշումով թեև պարբերական հրատարակությունների քանակն զգալի էր, «բայց չի տեսնվեր հաստատ համոզումներով սպառնազինյալ խմբագիր մը, որ ազգային առաջադիմության գլուխ անցնի և նոր թվականի մը իբր մարմնացումը հանդիսանա»²: Քայլեր էին կատարվում այդ բացը վերացնելու ուղղությամբ:

Եվ ահա 1884թ. հունվարի 1-ին Պոլսում սկսեց հրատարակվել «Արևելք» օրաթերթը: Նրա առաջին համարում հայտարարություն կար թերթի հրատարակման մասին, որն ուներ ծրագրի հավակնություն: Դատողություններ անելով արևմտահայ

¹ Լ. Սուրադյան, Արփիար Արփիարյան, կյանքը և ստեղծագործությունը. Երևան, 1991, էջ 31:

² Ա. Արփիարյան, Պատմություն ժԹ դարու Թուրքիո հայոց գրականության, Գահիրե, 1994, էջ 86:

մամուլի մասին, այն համեմատելով արևելահայ մամուլի հետ, հայտարարության հեղինակը, որը Արփիար Արփիարյանն էր, նախապատվությունը տալիս էր արևելահայ մամուլին. «Ստեփանոս Նազարյանց գծեց ռուսահայոց մամուլին համար միանգամ ընդմիշտ մի այնպիսի ուղղություն, որուն սթափիչ ազդեցության ներքև հասարակաց գիտակցությունը զարգանալով, պարբերական մամուլը դարձավ անհրաժեշտ պիտույք մը ռուսահայոց ժողովրդի մտավորական պահանջներուն համար» /Արևելք, 1884թ. N 1/: Փաստորեն, առանց արևմտահայության մեջ Նազարյանց ունենալու, անտեսելով արևմտահայ մամուլի մոտ քառասնամյա պատմությունը, թերթի աշխատակիցներն իրենց գաղափարական հերոսն ու չափանիշն ընտրում էին արևելահայերից, ջերմ ցանկություն արտահայտելով սերտ հարաբերություններ հաստատել հայ ժողովրդի արևելահայ և արևմտահայ հատվածների միջև:

«Արևելքը» նորություն էր արևմտահայ կյանքում. այդ նորությունը հավաստվում էր բազմաթիվ գործոններով: Թերթը տնօրինում էր հատուկ վարչությունը, որն զբաղվում էր նյութական հարցերով, ֆինանսապես ապահովում թերթի հրատարակության գործը: Վարչության անդամները 6 հոգի էին, թուրքական իշխանությունների աչքին «երևելիների» համարում ունեցող բարձր պաշտոնեության ներկայացուցիչներ, որոնք իրենց ունեցած հարաբերությունների և դիրքի շնորհիվ ապահովեցին թերթի հրատարակությունը: Գրական կյանքը տնօրինում էր երիտասարդ լրագրողներից կազմված խմբագրական մարմինը. Արփիար և Տիգրան Արփիարյաններ, Մելքոն Կյուրճյան, Լևոն Բաշալյան, Բյուզանդ Քեչյան, Տիգրան Կամսարական և ուրիշներ, որոնք նոր շունչ ու կյանք հաղորդեցին ընդհանրապես արևմտահայ կյանքին ու մտքին

«Արևելքին» վիճակված էր մեծ դեր խաղալ արևմտահայ լրագրության պատմության մեջ, ջրբաժան գիծ հանդիսանալով հին ու նոր լրագրության միջև: Այդ փաստը նկատի ունենալով Գրիգոր Չոխրապը, երբ գրում էր. «Պոլսո նոր լրագրությունը Արևելքով կը սկսի. ավելի շատ իմաստասիրություն հանրային խնդիրներու, ավելի մոտ տեղեկություն եվրոպական ազգերուն վրա, անհատական գծուծ խնդիրներն ու վեճերը՝ տեղի տալով ընդհանուր տեսություններու, հայ լեզուն այս կամ այն խմբագրապետի գծած անձուկ սահմանները կոխտելով,

վերստացած էր ժողովրդյան բարբառի անկախությունը, խմբագրությունը դադարեցրելով արհեստ մը լինելէ, արվեստ դառնալու համար, գրական նոր սեռերը նոր մտողերու ձեռքով, ամենքը միևնույն անփոփոխ նպատակին կապված, հասարակության պետքերու ըմբռնումը: Ահավասիկ նոր լրագրությունը»¹:

«Արևելքի» արտոնատերը Ս. Տամատյանն էր: Թերթի ճակատին գրված էր՝ «Օրագիր քաղաքական և ազգային»: Թերթն ուներ ազգային, քաղաքական լուրերի, ներքին լուրերի, գրադատական, գիտական բաժիններ: Իբրև թերթն անընդհատ լույս էին տեսնում եվրոպական գրականության նմուշներ, ընթերցողի մեջ ճաշակ զարգացնում գեղարվեստական գրականության նկատմամբ:

Սինչ «Արևելքի» հրատարակությունը արևմտահայ կյանքում իշխող դիրք էր գրավում «Մասիսը»՝ երկար տարիների անփոփոխ խմբագիր Կ. Ութունյանի գլխավորությամբ: «Մասիսը» պատրիարքարանի ձայնավողն էր: 1879-ից նրա գլխավոր աշխատակիցն է դառնում երիտասարդ հրապարակագիր Բ. Քեչյանը, որին հաջողվեց թարմացնել թերթը և այն դարձնել հասարակական կարծիքի, վիճաբանությունների հանդիսարան: «Արևելքի» հրատարակությունը մեծ հարված հասցրեց «Մասիսին», որի բաժանորդների զգալի մասը հեռացավ նրանից, բաժանորդագրվեց «Արևելքին»:

Կ.Պուլսի հայությունն ի վիճակի չէր պահպանելու այդպիսի մեծ ծավալի երկու թերթի հրատարակությունը, մեկը պիտի դադարեր և դա եղավ «Մասիսը»²: Հաղթեց երիտասարդությունը: Պատահական չէ, որ Ա. Արփիարյանը «Արևելքը» համարում է երիտասարդության օրգան և նրան է վերապահում վերափոխիչ դեր ազգային և հասարակական կյանքում. «Մեր հաստատ համոզումն է, թե երիտասարդությունը ազգի մը կենսատու ուժն է: ... Մեր պարտքն է նվիրել մեր հոգածությունն ուսումնասիրելու այդ երիտասարդության վիճակը և ջանալ օգտակար ծառայություններ մատուցել նմա: Երիտասարդությունը դեր մը ունի կատարելիք և հզորապես կը ներգործի մեր ազգային կենաց վրա»: /«Արևելք», 1884, N 9/ Մատնանշվում է երիտասարդության

¹ «Մասիս», 1892թ., 1 օգոստոսի:

² 1884թ. հուլիսի 1-ին «Մասիսի» խմբագիր Կ. Ութունյանը թերթի արտոնատիրությունը վաճառեց «Արևելքին», որն այն վերածեց գրական շարժարարների:

կատարելիք աշխատանքը. նրա գործունեության ծրագիր է մշակվում: Դրա մեջ գլխավորը երիտասարդության պարտքն է՝ մեծ աշխատանք ծավալել կոթության, լուսավորության, դպրոցական ասպարեզում, անդամագրվել ստեղծված ընկերություններին, մեկնել հայ գավառները: /Արևելք, N 169/ Օրաթերթի շուրջը համախմբված երիտասարդ գրողների փաղանգը դարձավ 80-ականների նոր գրական հոսանքի՝ ռեալիստական գրականության սկզբնավորողն ու զարգացնողը: Նոր գրականության առաջին շրջանի հեղինակներից մեկը եղավ Մելքոն Կյուրճյանը Յրանտ ծածկանունով: 1888-89թթ. «Պանդուխտի կյանքեն» ընդհանուր խորագրով նկարագրությունները մեծ գործ կատարեցին պոլսահայության ուշադրությունը Պոլսում ապրող պանդուխտների վրա դարձնելու, նրանց կյանքը բարելավելու ուղղությամբ: Պոլսաբնակ պանդուխտներն իմացան, «թե իրենց համար խորհող մտքեր կան, իրենց համար բաբախող սրտեր կան: Դարիպն ու պոլսեցին պիտի միանային»¹:

Գոյություն ուներ հակասություն թերթի առաջին երկու և երրորդ էջերի միջև: Առաջին երկու էջերը պաշտոնական հոդվածներն էին, որոնց հեղինակները ազգային կյանքում պաշտոններ գրաված գործիչներ էին: Փաստորեն, այդ էջերն արտահայտում էին թերթի վարչության տեսակետները:

Երրորդ էջի հոդվածների հեղինակները արևմտահայ դեմոկրատ մտավորականության ներկայացուցիչներն էին: Առաջին էջերն արտահայտելով թերթի պաշտոնական կարծիքը և նրա դիրքորոշումը հայ ժողովրդի ներքին և արտաքին հարաբերությունների վերաբերյալ, քննարկում էին իմպերիալիստական պետությունների վարած աշխարհավարական քաղաքականությունը, նշում մեծ տերությունների վեհապետների ծննդյան տարեդարձները, ուղեկցելով դրանք գովազդներով:

Երրորդ էջի նյութերը, մեծ մասամբ, վերաբերում էին Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներին, ժողովրդի ծանր սոցիալական կացությանը, նրա վճարած տուրքերին ու հարկերին, վաշխառուների քայքայիչ գործունեությանը:

¹ Ա. Արվիհարյան, Պատմության ժՅՍ դարու Թուրքիո հայ գրականության, էջ 133:

«Արևելքը» արևմտահայ կյանքում խաղում էր նույն դերը, ինչ արևելահայ կյանքում «Մշակը»: Պատահական չէ, որ մշակութային կյանքին վերաբերող նյութերում մեծ տեղ էին գրավում «Մշակի» գործունեության լուսաբանումը, Արծրունուն նվիրված հոդվածները: Հետ մղելով արևմտահայ մշակութային գործիչներից ոմանց հարծակումները «Մասիս» օրաթերթի դադարեցման և «Արևելքի» կողմից «կուլ տալու մեջ», թերթի խմբագիրներից մեկը՝ Բյուզանդ Բեչյանը պատասխանում էր, որ «Արևելքը» շարունակում է «Մասիսի» ավանդույթները, չկա բռնի մահ, այլ բնական սերնդափոխություն: Ապա շարունակելով միտքը, նա պարզորոշ գծում է թերթի ուղղությունը. «Արևելքի ուղղությունն է, ինչ որ եվրոպական բառով շատ լավ կբացատրվի օբյեկտիվիստ անվամբ- հառաջադիմական, առանց արմատական լինելու, պահպանողական՝ առանց հետադեմ լինելու; Այսպես պարտի լինել նաև մեր ազգային քաղաքականությունն: Այդ եղած էր նաև «Մասիսի» ուղղությունն յուր լավագույն ժամանակաց մեջ» /Արևելք, 1884, N 227/: «Արևելքը» լիբերալ բուրժուազիայի օրգանն էր, որ երբեմն արտահայտում էր նրա ֆշ, երբեմն ձախ թևի հայացքները, նայած, թե խմբագրական մարմնում որ տարրն էր գերակշռում: Իր հարմարվողական էությանը հավատարիմ, նա հանգրվան էր տալիս նաև դեմոկրատ մտավորականության ներկայացուցիչներին: Այդտեղից էլ՝ նրա տարբեր էջերում տեղ գտած հոդվածներում արտահայտած հայացքների տարբերությունն ու հակասությունը:

«Արևելքը» կապիտալիստական արտադրանական կարգացման քարոզիչ

Խմբագրությունը միասնական էր հանդես գալիս թուրքիայում և նրա կազմի մեջ մտնող Արևմտյան Հայաստանում կապիտալիստական հարաբերությունների զարգացման օգտին: Տնտեսության զարգացումը, արդյունաբերության և գյուղատնտեսության կապիտալիստական արտադրանական անցնելու հարցերը, հաղորդակցության ճանապարհների ցանցի ընդլայնացումը, ներքին և արտաքին մաքսային սիստեմի աշխատանքների բարելավումը, գյուղացիության վրա բարդված անասելի ծանր հարկերը, պայքարը վաշխառության և նրա

վատթար տեսակի՝ փոլիսաճիության դեմ¹, - այս բոլոր հարցերն իրենց արտացոլումն են գտնում «Արևելքի» էջերում:

Արևմտյան Հայաստանի տարածքում, ինչպես նաև ողջ թուրքական կայսրությունում, երկրագործությունը գտնվում էր նախնադարյան վիճակում: Արևմտահայ ժողովրդի մեծ մասը զբաղվում էր երկրագործությամբ, սակայն ֆեոդալական արտադրանքային հնարավորությունն չէր տալիս գյուղացուն ընդլայնել իր տնտեսությունը, շահույթով վարել այն, ներդնել գյուղատնտեսական տեխնիկա, ստացված բերքը դուրս բերել շուկա: Ուժ չունենալով վճարել պետական հարկերը, գյուղացին գրավ էր դնում իր փոքրիկ հողակտորը, պարտք վերցնում վաշխառուից: Թերթի խմբագրական հոդվածները /որոնք մեծ մասամբ գրում էր Բ. Քեչյանը/ հորդորում էին կառավարությանը, որ գավառներում չծանրացնի հարկերի չափը: Հաղորդելով, որ պետական բյուջեի դեֆիցիտը փակելու համար կառավարությունը ավելացրել է զինվորական տուրքը 1/3-ով, կալվածական տուրքը՝ 1-4-ով և մյուս տուրքերը՝ համապատասխան չափով, հոդվածագիրը նշում է. «Ուղղակի և անուղղակի տրոց մեծագույն բաժինն ալ հողագործ դասուն վրա կիյնա: Հողագործները համեմատապես ամենեն ավելի անպաշտպանն են և հետևապես ամենեն ավելի արժանի են կառավարության հայրական հոգատարության»: /Արևելք, 1888, N 1280/: Ըստ հոդվածագրի, այդ հոգատարությունը պետք է արտահայտվեր նրանով, որ կառավարությունը ամեն գավառում պետք է բացեր «Հողագործական սնդուկ» /փոխատվական բանկ/, որոնց պարտականությունը պետք է լիներ «գյուղացվոց կալվածները գրավ առնելով, դրամ փոխ տալ օրինավոր տոկոսով»: Այդ դրամագլուխը պետք է հենարան դառնար գյուղացուն իր տնտեսությունը զարգացնելու:

Մի այլ հոդվածում հայտարարվում էր, որ կառավարությունը բացել է «երկրագործական դրամատուն» և հրատարակում էր դրա կանոնագիրը, ըստ որի կայսերական իրատեն այդ դրամատան կենտրոնը հաստատում էր Կ. Պոլսում, իսկ մասնաճյուղերը՝ նահանգների կենտրոններում. դրամ կարող են ստանալ այն երկրագործները, որոնք դրամի փոխարեն իբրև

¹ Թերթը հատուկ ծանոթություն է տալիս «փոլիսաճիության մասին». դա այն վաշխառությունն է, որ «հարյուրեն հարյուր ոչ պակաս տոկոս կստանա առ տարին» /Արևելք, 1884, N 85/:

ավանդ կարող են դնել համապատասխան անշարժ կալվածք: Այսինքն՝ այդ միջոցառումը նախատեսված էր ոչ թե օրվա հացի կարոտ չարքաշ երկրագործին վաշխառուի ճանկերից փրկելու համար, այլ նպաստում էր խոշորացված տնտեսությունների ստեղծմանը, որին կուլ էր գնում մանր հողատերը: Արևելք, N 1402/:

Գյուղատնտեսության զարգացման համար անհրաժեշտ էր համարվում «լավ ճամբաներ և աժան դրամագլուխ», որը պետք է փրկեր գյուղացուն վաշխառուի ճանկից, ազատեր պանդխտության չարիքներից և օգներ զարկ տալու գյուղատնտեսության — նոր ճյուղերի հիմնադրմանն ու զարգացմանը: Քննարկելով Կ.Պոլսում վաճառվող գյուղատնտեսական ապրանքների տեսականին իրենց գներով, թերթը ցույց է տալիս, որ հսկայածավալ կայսրության գյուղատնտեսական մթերքների մեծ մասը ներմուծված է դրսից՝ եվրոպական երկրներից, Ռուսաստանից: «Այսօր Պոլսո հրապարակները եվրոպական գյուղատնտեսական բերքերով լեցված են. Միլանի յուղ, շվեյցարական պանիր, հոլանդական պանիր, չըսթըր պանիր, եվրոպական յուղ, Սիպիրի յուղ, կաթնատու կով, մսացու կով, տավարի խոտ...» Արևելք, 1888թ., N 1325/: Խմբագիրը գտնում է, որ պետք է զարկ տալ հատկապես անասնապահությանը, դրա համար առաջարկվում էր քաղաքի հարուստների և գյուղի անասնապահների միացյալ ընկերություն ստեղծել:

Այդ «հավաքական գործունեությունը» անհրաժեշտ էր գավառի քրդական թալանին դիմակայելու համար: Զինական ուժով իրենց ձեռքում կենտրոնացնելով արևմտահայ գավառների ընտիր մարզագետիներն ու արոտավայրերը, որպեսզի թույլ չտան հայերին օգտվել անասնապահության վերջնական արդյունքից, քրդերն ստիպում են հայերին չնչին գներով իրենց վաճառել գառը կամ ոչխարը, իսկ մի տարի հետո, իրենք իրացնում են թանկ գներով: Միացյալ ուժերով, քաղաքացի հայ հարուստները պարտավոր են օգնել գյուղացի հայ անասնապահներին, դատ վարել, արոտավայրերը վերադարձնել գավառի հայությանը և միասնական գործելակերպ մշակել անասնապահության զարգացման համար: Խմբագիրը խնդիր էր դնում, որ հայ մեծահարուստները ներդնեն իրենց դրամը գյուղատնտեսության զարգացման համար, կազմեն

կուլտուրական ազարակային տնտեսություններ և իրենց արտադրած մթերքներով ողողեն թուրքական շուկան: Սակայն դա անհնարին էր ամենից առաջ հաղորդակցության միջոցների հաճարյա բացապայության պատճառով: Կառավարական պաշտոնյաների ուշադրությունը հրավիրելով Արևմտյան Հայաստանի տարածքում ճանապարհների բացակայության վրա, թերթը հարց էր բարձրացնում սկզբնական շրջանում գավառներն իրար հետ կապել գեթ կառուղիներով, մինչև երկաթուղիների կառուցումը: «Ուր որ լավ ճամբաներ չկան, փոխադրությունքն իհարկե շատ սուղ են, փոխադրյալ ապրանքը սուղ է և այս պայմանաց մեջ մեծ քաղաք մը հասնող ապրանքը չի կրնար մրցել այնպիսի ապրանաց հետ, որք ավելի աժան կվաճառվին, զի առավել աժան կրցած են փոխադրվիլ» /Արևելք, 1884, N 240/: Գնանապարհների բացակայության պատճառով գյուղացին արտադրում է միայն սեփական կարիքների համար, նա չի հրապուրվում շատ բան արտադրելու: Իսկ առանց ճանապարհների գավառները կարող են սովամահ լինել:

Գյուղատնտեսության զարգացմանը պետք է հետևեր գյուղատնտեսական մթերքների պատրաստումը գործարանային եղանակով. պանրի, յուղի և այլ մթերքների պատրաստումը տնայնագործությամբ թույլ չէր տա զարգացած առևտուր վարելու: Թուրքիան, նաև նրա կազմում գտնվող Արևմտյան Հայաստանն արտաքին աշխարհին մատուցում է միայն հումք, «Թուրքիայից միմիայն մեծ քանակությամբ հում նյութեր Եվրոպա կերթան, որոնք լավ մշակվելով և կատարելագործվելով մեզ կվերադառնան մեր գրպանները պարպելու համար»: Այդպես, Եվրոպական երկրները բուրդը գնում են էժան գներով, իրենք մշակում և տասնապատիկ թանկ վաճառում Թուրքիայում: Նույնը կատարվում է և կենդանիների կաշիների հետ: Թերթը հարց է բարձրացնում գործարանային արտադրության կազմակերպման համար. «Մի երկիր, որ չունի գործարանային կյանք, չունի և վաճառականության ապագա: Թուրքիո առևտրականները վաճառականությամբ չեն պարապիր, այլ միջնորդի դեր կխաղան միայն արևմուտքի և արևելքի միջև: Եվրոպական թե Ասիական Թուրքիան յուր ունեցած ընդարձակ բարեբեր հողերով, մարգագետիններով, ազարակներով և հում նյութերով մեծ հարմարություն ունի գործարանային կյանքի... Հեշտ է բանալ զանազան տեսակի գործարաններ մեր երկրի հում նյութերը

կատարելագործելու, որով թե ժողովուրդը կօգտվի և թե վաճառականությունն ալ մոտիկ ապագայում կարող է առաջ երթալ»: Գործարանների կառուցումը համարվում էր վաճառականների առաջնահերթ խնդիրը: Խմբագիրը հարց էր դնում, որ փոքր դրամագլխի տեր 10-15 վաճառականներ միանան, ընկերություններ կազմեն և գործարաններ հիմնեն, նկատելով, որ կան այնպիսի դրամագլխի տեր վաճառականներ, որոնցից մեկը կարող է հիմնել մի քանի գործարան: Գյուղատնտեսության զարգացումը պետք է նշանավորվի նոր ճյուղերի զարգացմամբ, իսկ այդ նոր ճյուղերը պետք է վարել նորագույն տեխնիկայով և տեխնոլոգիայով:

Խմբագիրն առանձնակի ուշադրություն է դարձնում զինեգործության զարգացման վրա: Խաղողի որթի հիվանդության պատճառով Ֆրանսիայում զինեգործությունը անկում է ապրում: Հայ վաճառական ձեռնարկատերերի ուշադրությունը հրավիրելով այդ հանգամանքի վրա, խմբագիրը կոչ է անում շահագրգռել գյուղացուն, զարկ տալ զինեգործությանը և նվաճել եվրոպական շուկաները /Արևելք, 1894, N 3031/: Մինչդեռ հայ գավառներում զինեգործությունը դեռևս կրում է տնայնագործական բնույթ, այդ պատճառով հայ զինեգործի պատրաստած զինին մեկ տարվա դիմաց կունություն չունի, շուտ է փչանում: «Հարկ է կրկնել, թե զինեշինությունը մեծ արհեստ մ' է, որ միլիոնավոր մարդիկ կապրեցնեն: Մեր երկրին այգիները եվրոպացվոց սքանչացման առարկա են, որք զինիներ գնելով, արհեստական կերպիվ կպատրաստեն և Ֆրանսիայի և Հունգարիո ամենեն սուղ զինիներուն համահավասար հանդիսացնելով քանի մը պատիկ սուղ կվաճառեն» /Արևելք, 1889, N 1784/: Խմբագիրը կոչ է անում Այնթափի և Ամասիայի խաղողագործներին՝ միջոցներ տրամադրել զինեգործությունը արհեստից արդյունագործության վերածելու համար:

«Արվեստիվ և ճարտարարությամբ» զինի է պատրաստում Ադրիանուպոլսում Հակոբ էֆենտի Սուքիասյանը, որի ստեղծած սև և սպիտակ զինիները կարող են մրցել անգամ «Մաճառական Թուրայի» հետ և դիմանալ մինչև 8-10 տարի: Նրա արտադրած զինին գնում են ոչ միայն մայրաքաղաքի փափկաճաշակ հայ պաշտոնյաներն ու մեծահարուստները, այլև անգլիացի, ֆրանսիացի և ռուս «զինեսերները» /Արևելք, 1890, N 1947/:

Տեղական կոնյակի և սպիրտի արտադրության ավելացման համար խմբագիրն առաջարկում է կառավարությանը՝ բարձրացնել ներմուծվող ապրանքների մաքսագինը, իջեցնել արտածվողինը:

Խմբագիրը անընդհատ քննադատում է կառավարական պաշտոնյաների վարած մաքսային քաղաքականությունը, գտնելով, որ այն ունի վճռորոշ նշանակություն՝ գյուղատնտեսության և նրանից բխող արդյունագործության զարգացման համար: Ըստ նրա, այդ սխալ քաղաքականության պատճառով է, որ աղքատություն է տիրում թե մայրաքաղաքում, թե գավառներում: «Առածի կարգ անցած Փոքր Ասիո բնական հարստությունները» բոլորովին չեն օգտագործվում և այդ պատճառով Կ.Պոլսի շուկան ողողված է Ռուսաստանի և Իանուբյան երկրների մսով, յուղով, ցորենով, մինչդեռ կարող էր հակառակը լինել Արևելք, 1889, N 1778/: Ուրեմն, երկրի տնտեսական վիճակի բարելավման միասնական շղթայի իրար հաջորդող օղակներն են՝ գյուղատնտեսության զարգացումը, առևտրի ընդլայնումը, գործարանների հիմնադրումը: Թերթը քննադատում էր հայ մեծահարուստներին, որ հույների հետ համեմատած պակաս ձեռներեց և նախաձեռնող են, զերծ «ընկերակցության» ոգուց: Հայերն առանձին-առանձին հաջող վաճառականներ են, բայց ընկերություն ստեղծելուն պես շատ շուտ ցրվում են և չեն հարատևում, որովհետև զերծ են ընկերական ոգուց: Խմբագիրը նկատում է, որ Թուրքիայի տնտեսական վիճակը ապրում է կերպարանափոխության մի շրջափուլ: «Հին իսլամաբանական դրությունը տեղի կուտա եվրոպյան ճարտարվեստ գործարաններու, լայնածավալ վաճառատներու և խոշոր դրամագլխովք դրամատուներու դրության մը» Արևելք, 1888, N 1607/: Երկաթուղիների կառուցումը կրճատում է հեռավոր տարածությունները և եթե հայ ձեռնարկատերերը դանդաղաշարժ լինեն, եվրոպական ձեռնարկատերերի հետ մրցության մեջ կուլ կգնան: Այդ իսկ պատճառով հողվածագիրը գտնում է, որ անհրաժեշտ է կազմել հայ դրամատերերի ընկերություններ, որպեսզի նրանք հիմնեն գործարաններ, ծավալեն ընդարձակ առևտրական գործառնություններ, շահագործեն հանքեր, ապահովեն և իրենց, և հանապազօրյա աշխատանքով ապրող ժողովրդի վիճակը:

Տնտեսական կյանքի վերափոխման, հաղորդակցության ճանապարհների բացման, Եվրոպական թուրքիայի հետ երկաթուղիներով կապվելու հետևանքով խիստ մրցակցություն է սկսվել Եվրոպական էժան ապրանքների և հայերի արտադրած ապրանքների միջև: Մրցակցության պատճառով հրապարակից դուրս են մղվում այնպիսի արհեստներ, որոնք տասնամյակներ առաջ զարգացած վիճակում էին: Եթե 70-80-ական թվականներին կոշկակարությունը և դերձակությունը Կ.Պոլսում հայերի մենաշնորհն էր, ապա 90-ականների սկզբից այդ երկու արհեստն էլ ծանր հարված են ստանում Եվրոպական էժան ապրանքների ներխուժման հետևանքով: «Վիեննայի և Փեշտայի հրեա գործարանատերք աժան հանդերձներ և կոշիկներ կը շինեն մեծավ քանակությամբ և թուրքիացիք ընդհանրապես այս հանդերձներն ու այս կոշիկները կգնեն, որով հազարավոր դերձակներ և կոշկակարներ անգործ մնացած են» /Արևելք, 1889, N 1778/:

Նույն վիճակն է տիրում նաև կերպասագործների. մետաղագործ արհեստավորների մեջ: Նշելով, որ հայ արհեստավորներն իրենց ճարտարությամբ հետ չեն մնում Եվրոպական արհեստավորներից, խմբագիրը դարձյալ հանդես է գալիս առաջարկությամբ. հայ հարուստները պետք է իրենց դրամազուլիչը ներդնեն գործարանային արտադրության հաստատման համար և այդ դեպքում հայ արհեստավորը ցույց կտա իր հմտությունը:

Հարց էր դրվում նաև արևմտահայ գավառներում զարկ տալու բանբակի մշակությանը, շերամի որդի և բոժոժի արտադրությանը, ոչ միայն սեփական կարիքները բավարարելու, այլև մրցությանը դիմակայելու և Փոքր Ասիայի նահանգական կենտրոններում, առանձնապես կայսրության մայրաքաղաքում և ծովամերձ քաղաքներում առևտուրը զարգացնելու համար: Գավառական թղթակիցը խարբերոյից բողոքում էր, որ բանբակը մշակվում է նախնադարյան ձևերով. երբ բերքը առատ է, գինը խիստ էժանանում է, որովհետև բոլորովին չի արտահանվում, այլ օգտագործվում է միայն սեփական կարիքները հոգալու համար: Գործվում է միայն պարզ կտավ, մինչդեռ անհրաժեշտ է զարկ տալ «Ամըրքանի» /ամերիքըն բառի աղճատված ձևը- է. Կ./ արտադրությանը, որից մեծ քանակությամբ կարող է սպառվել հարևան գավառներում. այդ դեպքում երկրի դրամը կմնա երկրում, ապրանքը չի ներմուծվի դրսից և այդ դրամով կարելի է նոր

տեխնիկայով հագեցված գործարաններ բացել հենց նահանգի կենտրոնում՝ Խարբերդում և նրա շրջակայքում: Դա կնպաստի այն բանին, որ բամբակի մշակությունը կստանա ավելի նպատակամղված բնույթ և արդյունքը՝ զգալի, տեղի բնակիչներին կապահովի հարակից աշխատանքով: Գավառական թղթակիցը ծայնակցելով խմբագրին, նշում էր, որ այդ գործի նախաձեռնողները պետք է լինեն Կ.Պոլսի մեծահարուստները: Ակնհայտ երևում է, որ թերթի խմբագիրը իր համախոհներով զգալի գործ էր կատարում Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի տարածքում տնտեսության զարգացման, կապիտալիստական արտադրահարաբերությունների հաստատման և զարգացման ուղղությամբ, ճանապարհ էր հարթում և նպաստում նորելուկ հայկական բուրժուազիայի զարգացման և դիրքերի ամրապնդման համար:

Ուժերի այդ բևեռացումը իր հետ բերում էր նաև բացասական երևույթներ: Քայքայվում էր հայ գավառը, ունեզրկվում և հողազրկվում աղքատ գյուղացին, օրավուր ուժեղանում էր գյուղացու պրոլետարացման գործընթացը, անասելի մեծ չափերի էր հասնում պանդխտությունը: Եվ եթե թերթի առաջին երկու էջերը նկարագրում էին դրական տեղաշարժերը, առաջարկություններ ներկայացնում կառավարական պաշտոնյաներին ու հայ մեծահարուստներին, ապա երրորդ էջը ներկայացնում էր մի այլ պատկեր: Տնտեսության զարգացման հարցերը շոշափող հողվածների մեծ մասի հեղինակները՝ գավառական թղթակիցները, դեմոկրատ մտավորականության ներկայացուցիչները հետապնդում են ավելի հեռուն միտող մի նպատակ. գյուղատնտեսության նոր ճյուղերի արմատավորումը, արհեստների զարգացումը, դրանց վերածումը արդյունագործության, պետք է նպաստեն, որ գավառաբնակ ժողովուրդը չդիմի պանդխտության կամ գաղթի: Նկարագրելով Կ. Պոլսի բազմաթիվ խաներում իրենց կյանքը մաշող պանդուխտների թշվառ կացությունը, թերթը և աշխատակիցները պայքար են ծավալում Հայաստանը հայաթափ անող այդ չարիքի դեմ: Խմբագիրը տարբերակում էր ներքին և արտաքին պանդխտությունը. ներքինը այն էր, երբ մի գավառի հայը տնտեսական հանգամանքների բերումով գաղթում կամ պանդխտում էր Արևմտյան Հայաստանի տարածքի հայկական մի այլ նահանգ կամ գավառ. արտաքինը, երբ հայությունը թողնում էր

իր բնօրրանը ու մեկնում այլ երկրներ /ԱՄՆ, Մերձավոր Արևելք կամ կայսրության ծովամերձ քաղաքները/:

Պայքարը գնում էր արտաքին պանդխտության դեմ, իսկ ներքինը խրախուսվում էր: Պանդխտությանը դիմակայելու համար առաջարկվում էր գավառական կենտրոններում հաստատել «Փոխատվական սնդուկներ» կամ «Երկրագործական դրամատունք», զարկ տալ գյուղում տնտեսության տարբեր ճյուղերի, զանազան արհեստների, արդյունագործության զարգացմանը: Սակայն դրանք կիսատ-պռատ միջոցառումներ էին. գյուղացուն պանդխտությունից հետ կանգնեցնելու առաջին սոցիալական պայմանը հողով ապահովվելն էր, մինդեռ դարի երկրորդ կեսից անընդհատ ուժեղանում էր հայ գյուղացու հողազրկման գործընթացը, նա զրկվում էր նաև արտադրության գործիքներից, մեկնում էր պանդխտության կամ ստրկական գոյություն էր քարշ տալիս տեղում, դառնալով հողատերերի մարաբան:


Գավառական հարցերը «Արևելքում»

«Արևելքի» 3-րդ էջը տրամադրված էր արևմտահայ գավառին: «Գավառական սուրհանդակ»,- այսպիսի ընդհանուր խորագիր էին կրում գավառներից եկած թղթակցությունները: Կայսրության մայրաքաղաքի հայ բնակչությունը հաղորդակից է դառնում Արևմտյան Հայաստանի տարբեր գավառների հայության կյանքին: Իսկ շնորհաշատ արձակագիր Սելջոն Կյուրճյանը Հրանտ ծածկանունով ակնարկներ է լույս ընծայում թերթի էջերում «Պանդուխտի կյանքեն» վերտառությամբ, ուր պատմվում է Կ.Պոլսում իրենց գոյությունը մի կերպ քարշ տվող պանդուխտների մասին, որոնք թողնելով տուն ու տեղ, ընտանիք ու հայրենիք, նետվել էին կայսրության մայրաքաղաք, երկրում թողած պարտքը մարելու, «ծեթկիկ զավակներին» կերակրող մի ափաչափ հողակտորը վաշխառուի ճանկերից ազատելու համար:

Գավառական թղթակիցները ընթերցողի աչքի առջև բացում էին հայ գավառի սահմռկեցուցիչ պատկերը. հողազուրկ գյուղացին, որդեկարոտ ծնողները, սիրատենչ հարսները, անհայր զավակները, վաշխառուները, քուրդ ցեղապետները, թուրք հարկահավաքները, կառավարական պաշտոնյաների հակահայկական քաղաքականությունը, այս բոլոր հարցերը

չոչափվում են գավառից եկող թղթակցություններում: Գեղամ Տեր-Կարապետյան, Մարկոս և Պողոս Նաթանյաններ, Ղևոնդ Փիրղալենյան, Հարություն Տուտուխյան, Սելջոն Կյուրճյան, Փյունիկ, Ուխտավոր ծածկանուններով հեղինակները լուրեր են հաղորդում մայրաքաղաքի հայությանը: Ինչքան էլ խմբագիրը ցանկանում է մեղմել տպավորությունը, իրադրությունը ներկայացնել իբրև կայսերական «բարեգութ» կառավարության կողմից վերահսկվող, այնուամենայնիվ, թերթը նպաստում էր Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերի մասին հավաստի տեղեկություններ ստանալուն: Լուրեր են տպվում Մարաշի, Ձեյթունի, Բաբերդի, Այնթափի, Հաճընի, Աֆիոն-Գարահիսարի հրդեհների մասին, որոնց նպաստել են կառավարական գործերն ու քրդական ավազակախմբերը: Իրար հաջորդում են հոդվածներ «Սովն ի Հաճըն», «Սովը Քյոթահիո գավառում», «Գործի սովն ի Կիլիկիա», «Հացի խնդիրն ի Սուշ» և այլն, որոնց խորագրերը խոսուն վկայություններ են հոդվածների բովանդակության մասին: Հաճընի սովին գավառական թղթակիցներն անդրադառնում են մի քանի անգամ, նշելով, որ կառավարության գործադրած միջոցները սովի հետևանքները մեղմելու ուղղությամբ չեն տվել որևէ դրական արդյունք. «Բազմաթիվ անձինք սովամահ ըլլալով կիջնեն ի գերեզման» /Արևելք, 1888, N 1943, 6 հուլիսի/: Բնության տարերային աղետները՝ երաշտը, կարկուտը միախառնվում են սոցիալական աղետներին և գավառահայությանը կանգնեցնում անլուծելի հարցականների առաջ. ինչպես պահպանել իր և ընտանիքի գոյությունը: Սովի ճիրաններում գտնվող գավառահայությունը հաճախ դիմում էր դավանափոխության կամ կրոնափոխության, որպեսզի միսիոներները կամ մուսուլմանական կրոնապետներն օգնեն իրենց. «Հաճընցի ազգայինք այլևս չկրնալով դիմանալ անոթության և որևէ կողմե օգնություն մը չունենալով ի հարկե ստիպյալ խումբ խումբ բողոքականության կդիմեն /Արևելք, 1888, N 1240, 20 փետրվարի/: Կիլիկիայի մասը կազմող այդ վայրի՝ Հաճընի հայության դառնաղետ վիճակը շարունակում է մնալ թղթակիցների և խմբագիրների ուշադրության կենտրոնում: «Ազգային տեսություն», «Օրվան խնդիրք» խորագրերով հոդվածներն ահագանգում են, որ «օտարազգի կրոնական գործիչք կրոնափոխությունը պայման դրած են իրենց դիմողներուն նյութական օգնություն մատուցանելու: ... Թշվառ ժողովուրդը կստիպվի զոհել կամ յուր հացն և կամ յուր խիղճը» /N

188364



1288, 16 ապրիլի/։ Հաճընի այդ ահավոր սովը բացատրելով նախորդ տարվա երաշտով և բնակիչների ծայրահեղ աղքատությամբ, հեղինակը կոչ է անում ողջ հայությանը՝ օգնության հասնել գավառահայությանը։

Սի այլ գավառում՝ Քյոթահիայում, աղքատ գյուղացիները սովի պատճառով ծախում են իրենց գավակներին, որ գեթ նրանք քաղցից չմեռնեն. «Գավառակին մեջ /Ուշագ/ գյուղացի աղքատ ծնողաց տղաքներու առուծախն սկսավ։ Ունևորք 3-4 արծաթ կառնուն տղաքներն իրենց գավակ ընելու և միսի գնոյն համեմատելով՝ կշռելով կգնահատեն»։ /1888թ. N 1147, 29 փետրվարի/։

Գավառների աղքատության և թշվառ վիճակի մասին պատմող հոդվածներում զգալի տեղ են գրավում Ձեյթունի և Կիլիկիայի այլ վայրերին վերաբերող նյութերը։ Շաբաթական տեսության առարկա են դառնում Ձեյթունում ծագած հրդեհները և հրկիզումները։ Տարակուսելով այն փաստի համար, որ քաղաքի 1.100-ի չափ տներից հրկիզվել են հայերին պատկանող մոտավորապես 500 շենքեր և՛ 100 խանութներ, խմբագիրն արձանագրում է, որ տեղական իշխանության մարմիններն այդ մասին դեռևս չեն ծանուցել ներքին գործոց նախարարությանը և չեն կազմակերպել տուժածներին օգնություն հասցնելու գործը /N 212/։ Սիամիտ հեղինակը կարծում էր, որ եթե ներքին գործոց նախարարությանը ժամանակին տեղյակ պահվեր այդ աղետների մասին, ապա կառավարությունը միջոցներ ձեռք կառներ։ Ըստ երևույթին հոդվածագիրը կամ չգիտեր կամ չգիտենալ էր ձևացնում, որ այդ «հրկիզումները» կատարվում էին թուրք պաշտոնեության խրախույսներով։ Այդ ամենով հանդերձ, մայրաքաղաքի հայությունն ականջալուր էր լինում գավառաբնակ եղբայրների տառապանքներին և ազգային մարմինների միջոցով կազմակերպում օգնություն /N 276/։

Ձեյթունին վերաբերող հոդվածներ են լույս տեսնում «Արևելքի» հրատարակության գրեթե բոլոր տարիներին։ Սակայն վերաբերմունքը հերոս արծվաբույնի նկատմամբ փոխվում է ամեն անգամ. նայած, թե ով է խմբագրության ղեկի մոտ կանգնած անձը։ Ձեյթունը, որ իր անկախությունը պահպանելու համար, անընդհատ ընդվզում էր և իր դեմ հարուցում Բ. Դռան ցասումը, ժամանակ առ ժամանակ ենթարկվում էր կառավարական զորքերի հարձակումներին։ Օտարերկրյա առաքելությունների

ներկայացուցիչները հողվածներ էին տալիս իրենց թերթերին, նրանց ներկայացնելով իբրև ավազակներ: Ահա այդպիսի մի հողված է տպվում «Estern Express»-ի մեջ «Ձեյթուն» խորագրով, որը թարգմանաբար ներկայացնում է «Արևելքը» /N 183/: Պատմական ակնարկ տալով Կիլիկիայի հայկական թագավորության մասին, ամերիկացի միսիոները մանրամասն նկարագրում է Ձեյթունի անառիկ աշխարհագրական դիրքը, որը հնարավորություն է ընձեռում «տաս մարդոց խմբակ մը բանակի մը դեմ դնել»: Հողվածում ակնարկներ կան զեյթունցիների «անընկճելի ոգվոյն», և թուրք կառավարության՝ նրա կիսանկախությունը վերացնելու փորձերի մասին: Նույնիսկ նշվում է. որ դեռ 20 տարի առաջ /ակնարկելով 1862-ի Ձեյթունի հերոսական ինքնապաշտպանությունը/ ինչպես են իրենց «կայծ հրացանով /չազմագլը/, լերանց նրբուղիները ծածկել հարձակողաց դիակներով» /N 183/: Միսիոնար հեղինակը քաջատեղյակ է Ձեյթունի հերոսական պայքարին և դա համեմատում է Թերմոպիլի կիրճում 300 սպարտացիների մղած անձնազոհ պայքարին, մի փոքրիկ վերապահությամբ. «Քաղաքը շրջապատող բարձր ապառաժներն հանդիսատեղ եղած են շատ մը թերմոպիլներու և մեն մի ձոր ու բլուր ունի յուր արյունռուշտ ճակատամարտներու պատմությունը»: Իր համակրանքն արտահայտելով ազատատենչ զեյթունցիների նկատմամբ, ժամանակի տիպական երևույթը համարելով «գծուծ ստրկությունը», դրան հակադրելով զեյթունցի լեռնականների «սեզ դենքն ու դիրքը», հեղինակը բավարարվում է այդ ամենով և հանկարծ, անսպասելի, հողվածը շարունակում լրիվ այլ դիրքերից: Հողվածի կեսից զեյթունցիները որակավորվում են իբրև ամօրեն ավազակներ, որոնք չեն ենթարկվում օրինական կառավարությանը, հրաժարվում են հարկեր ու տուրքեր վճարելուց և սուլթանական կառավարությունը ի դեմս Մարաշի կառավարիչ Տուտա փաշայի ցանկանում է կարգ հաստատել այնտեղ և «ժողովուրջան վիճակը բարելավել»: «Իստերն Էքսպրեսի» այս հողվածը, որի երկու մասերը բովանդակային առումով հակասական են, անփոփոխ տպելով իրենց թերթում, «Արևելքի» տնօրենները մի կողմից ժողովրդին լուրեր էին հաղորդում Ձեյթունի պայքարի մասին, մյուս կողմից գովերգում կարգ հաստատող Տուտա փաշային, որ «յուր բարեսրտության և արդարության համար երախտագիտական զգացմամբ պիտի

հիշվի երկար ատեն Ձեյթունի մեջ»: Այս վերջին քայլը հետապնդում էր գրաքննության աչքից զերծ մնալու նպատակ:

«Արևելքը» ցավով է արձագանքում գավառահայության հարստահարություններին, նշում դրանց մեջ կառավարական պաշտոնյաների խաղացած դերը, կառավարության վարած հայահալած քաղաքականությունը, քրդերին հայերի դեմ իբրև զենք օգտագործելու փաստը: Այդ իմաստով առանձնապես հետաքրքիր են Մուսա բեյի դատավարության ընթացքը արձանագրող հոդվածները և պաշտոնական զեկուցագրերը:

— Մուսա բեյը քուրդ ցեղապետներից մեկն էր, որն աչքի էր ընկնում իր արյունռուչտ վարք ու բարքով, վայրագությամբ: Նա Տարոնի հայ գյուղացիության սարսափն ու դժոխքն էր: 1888թ. ապրիլի սկզբից մշեցիները բողոքներ և աղերսագրեր են հղում Բ. Դուռ, պահանջելով դատ բացել նրա դեմ: «Արևելքը», ազդարարելով այդ մասին, հույս է հայտնում, որ «Սուլթանի կայսերական կառավարությունն յուր արդարասիրությամբ զարժանն պիտի տնօրինե յանդորրություն Մշո երկրագործ հավատարիմ հպատակաց» /Արևելք, 1888, N 1293, 23 ապրիլի/: Սակայն շուտով պարզվում է, որ «բարեխնամ» կառավարությունը բնավ էլ հետամուտ չէ արդարության հաղթանակին: Սկզբում կառավարական պաշտոնյաները հնարավորություն են տալիս Մուսա բեյին փախչել Տարոն և շարունակել «կեղեքել տեղացի ժողովուրդն»: Բողոքագրերի կրկին տարափին կայսերական կառավարությունը պատասխանում է ակնհայտ դժգոհությամբ: Այդ մասին հայտարարում է թուրքական «Թարիզ» թերթը, նշելով, որ կայսերական քննիչները սկսել են իրենց ստուգումները և եթե պարզվի, որ բողոքները ճիշտ չեն, ապա «բողոքողը կպատժվին իբրև զրպարտողը»: Հանցագործը կրկին անգամ հրավիրվում է մայրաքաղաք: Դատից առաջ թուրքական թերթի նման հայտարարությունից հետո սպասել, որ կայսերական կառավարությունը «արդարությունը ի գործ պիտի դնի», - միամտություն էր, կամ կառավարական գործելակերպի պաշտպանություն, կամ դաժան գրաքննությունից խուսափելու մի հնարք: «Արևելքը» թուրքական լրագրերից արտատպում է Մուսա բեյի աղերսագիրն ուղղված վեհափառ սուլթանին: Ապա իրար են հետևում տասնյակից անցնող հոդվածներ, ուր նկարագրվում են դատավարության ընթացքը, եվրոպական երկրների թղթակիցների դեմ թուրք լրագրերի արտահայտած բողոքները, հայ փաստաբան,

մշեցիների դատապաշտպան Թընկեր-Սիմոնի ճառը, թուրք փաստաբան, Սուսա բեյի դատապաշտպան Իզզեթ փաշայի խոսքը և այլն: Չնայած խմբագիրը ջանքեր է գործադրում դատավարության ընթացքը նկարագրել կառավարությանը «հաճո» օբյեկտիվությամբ, այնուամենայնիվ, նրան չի հաջողվում համոզել ընթերցողին Սուսա բեյի արդարացիության մեջ: Դատավարության ընթացքի նկարագրությունները հանգեցնում են մեկ եզրակացության՝ սուլթանական դատարանը կազմակերպեց դատ-կատակերգություն, արդարացրեց ոճրագործին և ազատ արձակեց նրա ձեռքերը: Եվ միանգամայն իրավացի ու սարսափով էին հնչում հայ փաստաբանի խոսքերը, որ այդ հանցագործին արդարացնելը «մինչև հիմա ներկայացնող վկայից համար շատ ցավալի հետևություններ կրնա ունենալ» /Արևելք, 1889, 20 նոյեմբերի, N 1757/: Փաստորեն, չնայած խմբագրի վախվորած ջանքերին, հավատարիմ հպատակ ցուցադրվելու ողջ ցանկությանը, թերթը նպաստում էր Արևմտյան Հայաստանի գավառների իրական կացությունը կայսրության մայրաքաղաքի հայությանը հաղորդելուն:

«Արևելքը» կատարում է շնորհակալ մի գործ, գավառի մտավորականության ներկայացուցիչները տեղագրում են իրենց նահանգը, վիճակագրում, մատակարարում ազգագրական նյութեր, մանրամասն նկարագրում տվյալ նահանգի հայկական գյուղերի թիվը, բնակչության քանակը, զբաղմունքը, արհեստները և այլն: Փաստորեն, այդ հոդվածները նպաստում էին արևմտահայության ժողովրդագրական վիճակի մասին պատկերացմանը: Թերթը տպագրում էր խարբերդին և նրա շրջակայքին /Կապան-Մատեն, Արաբկիր/, Քղի-Գասապային, Բալուին Բավավ և շրջակա գյուղեր/, Բաղեշին, Ձեյթունին, Մարզվանին ու Ամասիային, Աֆիոն-Գարահիսարին, Օրդուին, Քյոթահիային, Բաբերդին, Եվդոկիային, Սեբաստիային, Կարինին, Վանին, Երզնկային, Տիգրանակերտին և նրա շրջակայքին, Սշո դաշտին և քաղաքին, հայկական Տավրոսին և այլ վայրերի վերաբերող նյութեր: Այս ցուցակը կարելի է մեծացնել և ավելի մանրամասնել: Նման նյութերը մայրաքաղաքի հայությանը ավելի սերտորեն էին կապում իրենց արմատներին, իսկ հետևորդների համար կենդանի էին պահում Արևմտյան Հայաստանի գավառների պատկերը: Մարկոս Նաթանյանը, որ Միացյալ ընկերությանց փոխտեսուչն էր, պաշտոնի թերունով շրջում է Արևմտյան

Հայաստանի տարբեր նահանգներում. այդ շրջագայությունների ժամանակ գրված հոդվածները լույս են տեսնում «Արևելքում» և կրում են «Ուղևորություն» ընդհանուր վերնագիրը. դրանց տակ հեղինակն ստորագրում էր կամ Ն., կամ Մ.Ն., կամ՝ Սարկոս Նաթանյան: Նրա շնորհիվ սերունդներին է մնում Բալու գավառի, Հավալ գյուղի, Հազրո գավառակի, Տավրոսի կուսակալության. նրա կենտրոն Գոզաթի, Չարսանձակի, Մնծուրի, Բերդակի և այլ վայրերի մանրամասն վիճակագրությունները: Տիգրան Կանսարականը Փյունիկ ծածկանունով /Ա. Արփիարյանի վկայությամբ/ վիճակագրում է այլ գավառներ: «Ուղևորի հիշատակներ» ընդհանուր խորագրով լույս է տեսնում հոդվածների շարք՝ ստորագրված «Ուխտավոր» ծածկանունով /ինքնությունը չկարողացանք պարզել/, որը տեղագրում է Ղիարբեքիրը /Տիգրանակերտ/ ու Եղեսիան, Ուրֆան ու Այնթափը, Սպերն ու Նփրկերտը: Նահապետ Փիրղալեմյանը ընթերցողին ծանոթացնում է Խիզանի Շիրվանձոր գավառակի, Բաղեշի հայկական գյուղերի /մասնավորապես Փարխանտի/ , Բղիի և Բաբերդի հետ:

Տեղագրությունների հետ միասին գավառական մտավորականները Կ. Պոլսի հայությանը ծանոթացնում են տարբեր գավառների հայ բնակչության նիստ ու կացին, զբաղմունքներին, ծեսերին, հավատալիքներին, ավանդություններին, ժողովրդական ու հոգևոր տոներին /Ձատիկ, Սահակ Պարթևի տոն, Թարգմանչաց տոն և այլն/: Վիճաբանություն է սկսվում Սուրբ Սարգսի տոնի վերաբերյալ, որին մտավորականների հետ միասին մասնակցում են գավառի հոգևորականները /Բրանտ, Եղիշե վրդ. Այվազյան, Վարդան Ասլանյան և ուրիշներ/: Հոդվածները չէին կրում սոսկ նկարագրական բնույթ: Հեղինակներն արտահայտում էին իրենց վերաբերմունքը ժողովրդական այս կամ այն սովորության նկատմամբ, հավանություն տալիս, երբեմն մերժում կամ խարազանում հռչի սովորույթները: Առանձնապես ուշադրություն է դարձվում հայ գավառներում տարածում գտած «պաշլլխ» վնասակար սովորույթի վրա, որը դիտվում էր իբրև պանդխտության պատճառներից մեկը, հայ ընտանիքներին և անուսնություններին խանգարող մի երևույթ: Գավառների հոգևոր

առաջնորդները դիմում էին պատրիարքարանին «ղալանը» կամ «պաշլըխը»¹ վերացնելու առաջարկությամբ:

Հողվածներ են լույս տեսնում նվիրված հոգևոր բանահյուսությանը: Գրիգոր Խալաթյանի Կ.Պոլսում գտնվելու առթիվ ներկայացվում է նրա «Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների», աշխատությունը, որը մեծ դեր խաղաց հայ ազգագրությանը գիտական մակարդակի բարձրացնելու գործում: Աշխատությանը կցած խմբագրի սեղմ առաջաբանը ցույց է տալիս, թե ինչ կարևորություն էր ներկայացնում թերթի համար հայ ազգագրության դրույթների մշակումը: Այդ թեմայով հողվածներից առանձին հետաքրքրություն է ներկայացնում Հարություն Տուտուխյանի 4 մասից բաղկացած հողվածաշարը հայ գյուղացու սնահավատությունների, ծեսերի և այլ հավատալիքների վերաբերյալ: /«Արևելք», 1888, N N 1263, 1275, 1285/: Նման գործունեությամբ «Արևելքը» իր մասնակցությունն էր բերում 19-րդ դարի 2-րդ կեսին սկիզբ առած հայ ազգագրության, հնագիտության և ժողովրդագրության շնորհակալ գործին:

Ազգային սահմանադրությունը և «Արևելքը»

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Ազգային սահմանադրությանը, Ազգային ժողովի գործունեությանը վերաբերող հողվածները: Խմբագիրը իրավացիորեն նկատում է, որ Ազգային սահմանադրությունը հայության համար ունի առավելապես բարոյական ուժ և արժեք, քան իրավական: Թերթը քննադատում է հասարակական այն խավերին, որոնք մեծ հույսեր են կապում սահմանադրության հետ ազգության հասարակական-քաղաքական կյանքը բարելավելու գործում:

Ազգային Սահմանադրության երեսնամյա տարեդարձի առթիվ գրված խմբագրական հողվածում արդարացիորեն նշվում է, որ նախորդ սերունդը սին հույսեր է կապել Սահմանադրության հաստատման հետ, իսկ այն ռեալ ոչինչ չի տվել: «Սի քանի պաշտոնյաներու և ժողովներու ընտրության և գործավարության կերպը բացատրելեն անդին չէր անցներ»: Իրավացիորեն գտնելով,

¹ Փետացուի վճարած դրամ, բնամթերք հարսնացուի դիմաց

որ միապետական երկրում /Թուրքիայում/ հպատակ ժողովուրդը չի կարող հաստատել սահմանադրական կարգեր, Բ. Քեչյանը տարբերություն չի տեսնում ամիրայական և սահմանադրական ժամանակների միջև. «Ինչպես ամիրաներուն օրով, հիմակ ալ ազգային գործոց բարվոք ընթացքը անձերեն ավելի կախում ունի, քան հիմնարկություններեն: Արևելյան և միապետական երկրի մը մեջ կապրենք, արևելյան և միապետական գաղափարներով գրեթե նույնքան տոգորյալ ենք, որքան ժողովրդական գաղափարներով և այսպիսի ընկերության մեջ անձնավորությունք գերակշիռ կենան: Երբ պատրիարք և վարչության անդամք ազդեցիկ և բանիբուն մարդիկ են, գործերն առաջ կերթան, ապա թե ոչ՝ ետ կմնան, հակառակ սահմանադրական ամեն ձևակերպությանց: Այս է դառն ճշմարտությունն՝ երեսնամյա փորձեն ետքը»: Արևելք, 1889, N 1908, 26 մայիսի/:

Թերթը քննադատում է ազգային ժողովի ամուլ նստաշրջանները, ազգային երեսփոխաններին: Լևոն Բաշալյանը «Թափառիկ» ծածկանունով հողվածաշար է լույս ընծայում «Վանդակեն դուրս» ընդհանուր խորագրով, ուր գեղարվեստական տարբեր հնարքներով նկարագրում է Ազգային ժողովի երեսփոխաններին նիստից առաջ, նիստի ժամանակ և հետո: Պարոնյանի «Ազգային ջոջերի» սկզբունքով գրված այս շարքը հիացնում է ընթերցողին իր նուրբ հումորով, սուր դիտողականությամբ. «Ամենքն ալ կարծես իրենց գրպանեն մեկ մեկ դիմակ հանած ու երեսին անցուցած են», - այնքան տարբեր են մարդը և ազգային գործիչը. Նուրյան էֆենդի, Ստ. փաշա Ասլանյան, Ռեթես Պերպերյան, Տիգրան Յուսուֆյան, Ավետիս Սուրենյան, Արփիար Արփիարյան և ուրիշներ: Չմայած Կ. Պոլսի Ազգային ժողովի անպտուղ գործընթացին, թերթը բարձրացնում է գավառական ազգային ժողովների աշխատանքները բարելավելու խնդիրը, ընդգծում հոգևոր առաջնորդի մեծ դերը գավառահայության կյանքում: Գավառների հոգևոր առաջնորդներն այն անձնավորություններն էին, որոնք ղեկավարում էին տեղի հոգևոր, մշակութային, հասարակական և նույնիսկ քաղաքական կյանքը: Նրանք կարգավորում էին կառավարության և տեղերի հայ բնակչության հարաբերությունները, միջնորդի դեր խաղալով նրանց միջև: 80-ականներին Բ. Ղռան կողմից հետ Կ. Պոլիս էին կանչվել հայ գավառների հոգևոր առաջնորդների պատկառելի մասը:

Թուրքական պաշտոնյաներն ստիպում էին պատրիարքարանին գավառի հոգևոր առաջնորդ ուղարկել իրենց հաճո եկեղեցականների, մինչդեռ Ազգային Սահմանադրությամբ հաստատված էր, որ գավառի հոգևոր առաջնորդը պետք է ընտրվեր ժողովրդի կողմից: Թերթը այս դեպքում պաշտպանում էր ժողովրդի իրավունքները, նրան վերապահելով հոգևոր առաջնորդի ընտրությունը: «Եթե այդ ժողովրդային և տեղական իրավունքն այսօր կեդրոնին սեփականել որոշենք, օրինակ մը կհաստատենք, որ ապա շատ զեղծմանց դուռ կրնա բանալ»:
Արևելք, 1884, N 189, 18 օգոստոսի/:

Եկեղեցի և հոգևորականություն

Ուշադրության արժանի է ընդհանրապես հոգևորականության և հայ եկեղեցու նկատմամբ թերթի ունեցած վերաբերմունքը: Առանձին բաժին են կազմում այդ բնույթի հոդվածները: Անդրադառնալով Գևորգ Դ կաթողիկոսի մահվանից հետո նոր կաթողիկոսի ընտրության շուրջ ծավալած իրադարձություններին, թերթը 1884թ. սկզբից մեծածավալ հոդվածներ է նվիրում էջմիածնում կայանալիք ընտրությունների կանոնների, բոլոր թեմերից ընտրված պատվիրակների, ցարական կառավարության կողմից հայ եկեղեցու իրավունքները սահմանափակած «Положение»-ի քննարկմանն ու քննադատությանը:

Պետականությունից զուրկ հայության համար եկեղեցին համարելով ազգապահպանման առաջին և ամենամեծ գործոնը, թերթը հայ ազգն ու եկեղեցին համարում էր իրարով պայմանավորված իրավական մարմիններ: «Մեր եկեղեցին ապրած է և կապրի ազգի կյանքովն և ազգին՝ կյանքը սերտիվ կապված է եկեղեցվո գոյության հետ: Ինչ որ հարված մ'է մեր եկեղեցվոյն, հարված մ'է նաև մեր ազգին: Անոնք, որ թշնամություն ընել ուզած են մեր ազգին, բարեկամ չեն եղած մեր եկեղեցվո և ստեպ փորձած են եկեղեցին նվաճելով ընկճել նաև ազգը »:
Արևելք, 1884, N 106/:

Կաթողիկոսական ընտրությունների ողջ մանրամասները ընթերցողներին ծանոթացնելու նպատակով թերթը հատուկ թղթակից է ուղարկում Էջմիածին: Հոդվածներ են նվիրվում կաթողիկոսական ընտրելիներ Ներսես Վարժապետյանին, Մկրտիչ Խրիմյանին, Մելքիսեդեկ Սուրադյանին, Սակար Թեղուտեցուն: Հոդվածներ են տպվում, ուր քննադատվում է Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո ցարական կառավարության հայ եկեղեցու նկատմամբ վարած քաղաքականությունը, քննարկվում Հովհաննես Կարբեցուց /1831-1842թթ./ սկսած մյուս կաթողիկոսների գործունեությունը, նրանց հարաբերությունը ցարական արքունիքի հետ:

4. Պուլսի պատրիարքների ընտրությունները ևս արժանանում են թերթի ուշադրությանը. թերթն իր վերաբերմունքն է արտահայտում նրանցից յուրաքանչյուրի /Յ. Վեհապետյան, Խ. Ալըզյան, Ս. Իզմիրլյան/ նկատմամբ: Դատապարտվում է Կիլիկիայի կաթողիկոսի ազգադավ գործունեությունը, Աղթամարա կաթողիկոսի ապաշնորհությունը:

Հոդվածներ նվիրելով Արևմտյան Հայաստանի նշանավոր վանքերին, խմբագիրը գտնում է, որ դրանք պետք է դառնան կրթության, լուսավորության տարածման օջախներ /«Ս. Կարապետի վանք», «Տարոնի վանորայք», «Աշո Ս. Հովհաննավանքը» և այլ հոդվածներ/: Քննադատելով արևմտահայ վանքերի անշուք վիճակը, ցանկանալով բարեկարգել դրանք, որպեսզի կատարեն ժողովրդին լուսավորելու առաքելությունը, խմբագիրը միաժամանակ ընկնում է հակասության մեջ, գտնելով, որ մատաղ սերնդի դաստիարակությունը հոգևորականության ձեռքից պետք է հանձնել աշխարհիկ մտավորականներին: Դրան զուգընթաց, հայտնվում է այն կարծիքը, որ անհրաժեշտ է բարձրացնել հոգևորականների կրթական մակարդակը, որովհետև երիտասարդ սերնդի ամենօրյա բարոյական դաստիարակությունը պետք է հանձն առնի ժամանակի ոգով լուսավորված քահանայությունը. «Քահանան... պետք է բարուց վրա կատարե բարձրագույն հսկողությունն, ուղղության բերե երիտասարդության: Կղերանոց պետք է մեր ազգին, պետք է քահանա պատրաստել, պետք է վերահաստատել քահանայությունը» /Արևելք, 1888, N 1414, 21 սեպտեմբերի/: Թերթը քննադատում է իր ժամանակի հոգևորականության բարոյական բացասական հատկությունները. բարձրաստիճան

հոգևորականների մեծ մասը հրաժարվում է մեկնել գավառները հոգևոր առաջնորդի պաշտոն կատարելու, ժողովրդին ծառայելու, ցանկանում է ապրել մայրաքաղաքում, ապահով և հանգիստ կյանքով: «Օրըստօր՝ կը նվազին, կանհետանան այն հատկություններ, որք եկեղեցականությունն հարգելի, ակնածելի կը կացուցանեին աշխարհական աչքերու,-անձնվիրություն, սակավապետություն, եկեղեցասիրություն, մաքուր բարոյական և սեր կարգապահության» /Արևելք, 1884, N 148/: Այդ պատճառով էլ հասարակ ժողովրդի մեջ հետզհետե պակասում է հարգանքը եկեղեցականների նկատմամբ, դրա հետևանքով «ազգն սկսած է անտարբեր աչոք և գրեթե հակակրոյամբ նայել յուր կղերական դասուն վրա»: Այդ հանգամանքն անհանգստացնում է խմբագրին: Հավատացյալ ժողովրդի անտարբերությունը եկեղեցու նկատմամբ կբերի բազմաթիվ բարոյական կորուստներ:

Ժողովրդի մեջ քրիստոնեական հավատքը վառ պահելու նպատակով հողվածներ են տալվում նվիրված քրիստոնեությանն ընդհանրապես, մասնավորապես լուսավորչական /առաքելական/ դավանությանը: Պախարակվում են հավատափոխությունն ու դավանափոխությունը, իբրև ազգային միասնությանը հարվածող բացասական երևույթներ: Զննադատվում են օտար միսիոներները, ովքեր ցանկանում են լուսավորչական հայերին դավանափոխ անել: Սուր քննադատության է ենթարկվում Հռոմի պապ Լևոն ԺԳ-ը, որը կոնդակ էր հղել Կ. Պոլսի հայ կաթոլիկ պատրիարք զերապայծառ Ազարյանին, հորդորելով ողջ արևմտահայությանը ընդունել կաթոլիկությունը: Խմբագիրն այս հարցին մոտենում է ոչ թե կրոնական կամ դավանական տեսակետից, այլ դրան տալիս է քաղաքական նշանակություն: Այդ տեսանկյունից էլ զննադատվում են 5-րդ դարի մեր նախնիների երկու գործերը. «Սեյ մը պարսից դեմ քրիստոնեությունը պաշտպանեցին, մեյ մալ Քաղկեդոնի ժողովը մերժեցին»: Վերջին ակտը նշանակում էր «վճռականապես փարել յուր անկախության, զոր ամեն հալածանաց, ամեն դժվարությանց... հակառակ անվթար պաշտպանեցին ցայս վայր: Քաղկեդոնի ժողովոյն մերժումն հայ ազգությունը պաշտպանեց Արևմուտքեն եկող հարձակմանց դեմ» /Արևելք, 1888 N 1384, 13 օգոստոսի/: Հիմնգերող դարից սկսած լուսավորչական դավանանքը հայերին փրկել է մյուս քրիստոնյա ազգերի հետ ուծացումից, իսկ պատմությունը տվել է դրա բազմաթիվ օրինակները /Լեհաստանում, Հունգարիայում, Ռումինիայում/: 19-

րո՞ղ դարի վերջին հայերը առավել ևս պետք է պաշտպանեն իրենց կրոնական անկախությունը:

Անցնում են տարիները, նույնիսկ դարերը: Սակայն արևմուտքից եկող հայ ժողովրդին պառակտողները մնում են նույնը. «Պապականության խնդիրներն ոչ ապաքեն ճահճի մը նման տարածված են մեր հանդեպ. տարիները, դարերը կանցնին և մեզ համար միշտ միևնույն մեռյալ ջուրերը, Ղաշանց թուղթ ու Սեղեբեստրոս, Քաղկեդոնի ժողովք ու Ունիթոռք. եթե մեր հայրերեն մին առասպելական քունով քնացած ըլլար ու դար մը վերջը արթննար, պիտի կարճեր, թե իրիկունը պառկեր, առտուն ելեր է, ուրիշ խոսք չկա, միևնույն կրոնական վեճերը»: /N 1389/:

Այդ պատճառով, երբ Լևոն ԺԳ պապը հայերին հորդորում էր եկեղեցական միություն մատնանշելով դրա բարիքները հայերի համար, խմբագիրը պատասխանում էր դրան՝ շեշտելով առանձնապես «ազգային միության մեծամեծ օգուտները», գտնում, որ գերադասելի է 150000 կաթոլիկ հայերը վերստին ընդունեն իրենց նախնիների: դավանանքը, քան չորս միլիոն լուսավորչականները դավանափոխ լինեն: Խմբագիրը այնպիսի նշանակություն է տալիս պապականության հրավերին և դավանափոխության խնդրին, որ այդ հարցերի բացահայտմանը նվիրում է երեք հոդված, որոնց մեջ նշավակում է Լևոն ԺԳ պապի միության քարոզը, այն համարելով «անմիություն»: Ընդգծելով, որ հայությունը քրիստոնեությունը իբրև պետական կրոն ընդունած առաջին ազգն է, Արփիարյանը գրում է. «Մեք կըսենք, թե հայ ազգը քրիստոնեությունը Հռոմե չընդունեց: Մեք կըսենք, թե մեր հայրապետք իրենց ձեռնադրությունն ու դավանանքը պապերեն չստացան»: /N 1390/:

Խմբագրին ձայնակցում է Պոնտահայության հոգևոր առաջնորդ Գարեգին Սրվանձտյանցը, որը քննադատում է կաթոլիկ հոգևորականներին, մատնանշում հայոց ազգային միասնությանը պապականության հասցրած վնասները, հասկացնում հայ կաթոլիկներին, որոնք հայ ազգի հետ նույն մարմինը լինելով, կաթոլիկների ձեռքին դանակ են դառնում հարազատ ազգի մարմինը խոցոտելու, արմատները կտրտելու համար: Նման պատկերավոր համեմատությունը, ակնթարթային արձագանքը պապի կոնդակին, ցույց էր տալիս, թե ինչ մեծ նշանակություն ուներ ազգային միասնությունը 19-րդ դարի վերջին քառորդին և ինչպիսիքն էին դավանափոխության պատճառած չարիքները:

Խմբագիրների և հոդվածագիրների քննադատության սլաքն ուղղվում է ոչ միայն կաթոլիկությունն սերմանողների և քարոզիչների, այլև բողոքական միսիոներների դեմ: Չորս մասից բաղկացած հոդվածաշար է տպվում «Չայ բողոքականության անցյալն ու ապագան» խորագրով: /Արևելք, 1888, NN 1427, 1428, 1433, 1434/: Հոդվածաշարի կարևորությունն առավել ընդգծում է այն հանգամանքը, որ հեղինակն ինքը Սմբատ Գաբրիելյանը բողոքական է: Նա մանրամասն տեղեկություններ է հաղորդում հայ իրականության մեջ բողոքականություն տարածող միսիոներների, ամերիկյան Պորտ ընկերության ծավալած գործունեության առաջին տարիների, հայ հոգևորականության՝ նրանց ցույց տված եղբայրական օգնության և ջերմ ընդունելության մասին: Սկզբում հայ հոգևորականները նույնիսկ չէին կասկածում, որ ամերիկյան միսիոներները նպատակամղված են պառակտել հայ եկեղեցին և նրանց ընդունում էին իբրև հոգևոր գրականության տարածողների: Այդ ժամանակ բողոքական քարոզիչները դեռևս չունեին գործունեության հստակ ծրագիր, բայց ժամանակի ընթացքում նրանք սկսեցին հայ եկեղեցին բարեկարգելու, այսինքն պառակտելու իրենց քայլերը: Բողոքական հոդվածագիրը, որ կրոնական հանդուրժողականության տիպար է, խարազանում է հայ կղերի հետամնացությունը, բողոքական քարոզիչների նենգությունները, ապա մատնանշում հայոց դավանանքի և բողոքականության դրական կողմերը: Բողոքական հեղինակը հոդվածաշարի վերջում հանգում է ուշագրավ եզրակացության. «Երկու հավասարապես լավ բաներ, որոց մին ազգային է և մյուսը՝ օտար. ազգայինն է նախընտրելի»: Հենց այդ մտայնությամբ բողոքական հեղինակը վերադառնում է հայ եկեղեցու գիրկը և հայտարարում, որ հայերի շրջանում բողոքականությունն ապագա չունի. Չնայած բողոքական միսիոներների համառ ջանքերին, 70 տարվա ընթացքում երկու միլիոն չորս հարյուր հազար արևմտահայության մեջ բողոքականների թիվը հազիվ հասել է քսանհինգ հազարի: Իր արմատներին դարձած հեղինակը կարծես համոզում է բողոքական քարոզիչներին՝ դադարեցնել հայությանը պառակտելու իրենց քայլերը:

Չայ եկեղեցու ազգապահպան նշանակությունն է ընդգծում նաև «Բռնի միություն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմա» Արևելք, 1884, NN 164, 165/ պատմագիտական հոդվածը: «Մարզպան» ծածկանունով հեղինակը պատմում է դեռ X-XII

դարերում Հայաստանի տարբեր վայրերից, մասնավորապես Անիից, Լեհաստան գաղթած հայկական հոծ զանգվածների, նրանց աշխատասիրության, լեհ իշխանների կողմից նրանց տված արտոնությունների, ապա կաթոլիկ կղերի միջոցով և հայ եպիսկոպոսի /XVIIդ./ նենգությամբ նրանց դավանափոխ անելու մասին: Նիկոլ եպիսկոպոսի այդ ազգադավ քայլը սկիզբ է դնում Լեհաստանի հայության ծուլմանը: Կարծես այս հողվածի գաղափարական շարունակությունն է Կարապետ Եզյանի առաջաբանով Մինաս Բժշկյանի գրած «Ճանապարհորդություն ի Լեհաստան» գրքի գրախոսականը և Գաբրիել Այվազյանի «Նիկոլ եպիսկոպոս և պատմություն դարձին հայկազանց Լեհաստանի ի կաթոլիկություն» հողվածները / Արևելք, 1884, N 165/: Ողջ այդ շարքը գալիս է հաստատելու և հավաստելու հայ եկեղեցու և դավանանքի կարևոր նշանակությունը հայության հարատևման և միասնության գործում:

Դրսևորելով լայնախոհություն և կրոնական հանդուրժողականություն բոլոր կրոնների և դավանանքների նկատմամբ, խմբագիրը միանշանակ պատասխան է տալիս հայության կրոնական միության հարցերին, այն դիտելով իբրև ազգային միասնության կարևոր գործոն:

Մեծ տերությունների գործունեության բացահայտումը «Արևելքում»

Ուշադրության արժանի է հողվածների այն շարքը, որը բացահայտում է թերթի ուղղությունը աշխարհում կատարվող քաղաքական իրադարձությունների, եվրոպական պետությունների վարած արտաքին քաղաքականության, ռազմական դաշինքների, հեղափոխական շարժումների ծավալման, ընկերվարական շարժումների նկատմամբ:

Խմբագիրը հավատարիմ իր դավանած «Օբորոյունիստ» ուղղությանը, զնահատում է ֆրանսիայի ազգային տոնը 1789թ. Յուլիսի 14-ը, «ֆրանսիական հեղափոխության մեծ օրը», երբ ժողովուրդը կործանեց Բաստիլը՝ բռնապետության խորհրդանիշը և «ազատության դարագլուխը բացավ Ֆրանսիայի համար»: Սակայն անմիջապես դրանից հետո խմբագիրն ավելացնում է, որ Լյուդովիկոս 16-րդի գլխատումը ծայրահեղականների գործն էր, այդ գործողությունը համարելով «ֆրանսիական մեծ

հեղափոխության ամենեն արյունահեղ ու ցավալի մասը»: Քեչյանը չի ընդունում արյունահեղությունը, ցավում է, որ «նոր դրությունը» հաստատվում է «արյան լիճերու» օգնությամբ, «Պաստիլի ավերակներեն և հեղափոխության բյուրավոր զոհերու աճյունեն»: Դրա մեջ մեղավորը, ըստ խմբագրի, ոչ թե ժողովուրդն էր, որ դիմեց ծայրահեղության, այլ հին ռեժիմի ներկայացուցիչներն էին, որոնք ինքնական չթողեցին իրենց դիրքերը: Խմբագիրը կողմնակից է ոչ թե հեղաշրջումների կամ հեղափոխության, այլ աստիճանական զարգացման, սակայն չի վարանում զնահատել ֆրանսիական հեղափոխության արդյունքը հանրապետության ստեղծումը և նոր դարագլուխ բացելու իրողությունը: /Արևելք, 1884, N 158/: Ինչպես տեսնում ենք, հողվածը լի է հակասություններով և դրանք հաշտեցնելու միտումներով: Նման մտայնությամբ խմբագիրը բացասական վերաբերմունք է ցույց տալիս եվրոպայում տարածված հեղափոխական շարժումների նկատմամբ, որակում իբրև միհիլիստների՝ «ոչնչականների շարժում», վշտանում, որ դրանք մեծ չափեր են ընդունում եվրոպայում և Ռուսաստանում. «...Ոչնչականությունը միշտ կա և կգործե ցարին երկրներուն մեջ: Ընկերվարությունը կհառաջադիմե Գերմանիո մեջ: ...Ավստրիա նմանապես վարակյալ է և հարկ կլինի... զսպողական բացառիկ միջոցներ ձեռք առնուն նույն շարժման հառաջադիմությունը արգելելու համար»: Այդ շարժումների պատճառները խմբագիրը իրավացիորեն բացատրում է սոցիալական անհավասարությամբ, սակայն դրա պատճառը համարում է ոչ թե շահագործումը, այլ այն, որ նյութական բարիքները չեն աճել նույն համեմատությամբ, ինչպես բնակչության թիվը: Ընդգծելով, որ եվրոպական երկրներում հեղափոխության պատճառը գլխավորապես տնտեսական է, հեղինակը առանձնացնում է Ռուսաստանը, ուր հեղափոխության պատճառը, ըստ խմբագրի, և քաղաքական է, և տնտեսական: Ժողովրդի պահանջները բավարարելու տեսակետից օրինակելի է համարվում Սիացյալ Նահանգները, ուր «ժողովրդյան ընդհանուր վիճակը լավագույն է»: Այդ երկիրը հեղինակի երազած դրախտն է. «Ազատությունն իր ծայրագույն սահմաններուն հասած է հոն, և լիուլի կգոհացնե ամենեն ռամկավարական պահանջումներն իսկ»: /Արևելք, 1884, N 86, 16 ապրիլի/: Բացասական վերաբերմունք դրսևորելով հեղափոխական շարժումների նկատմամբ, խմբագիրը դրանց ծավալման համար մեղադրում է կառավարություններին.

որոնց ձեռք առած միջոցները «ավելի զսպողական և արգելիչ հանգամանք ունին, քան բարենորոգիչ»: Այդ պատճառով քննադատվում է Ալեքսանդր 3-րդը, որի վարած ներքին քաղաքականությունը չի նպաստում ժողովրդական հուզումների նվազմանը, բարենորոգումների նրա ծրագրերը դեռևս մնում են թղթի վրա: Խմբագրի համակրանքը Գերմանիայի կողմն է, որի կանցլեր Բիսմարկը նոր օրենքներ է հաստատում «ընկերվարականաց դեմ»: Սակայն, քանի որ Քեյլանը սկզբունքով դեմ է բռնություններին, տարակուսում է, թե արդյո՞ք օրինական է ռախստագի քննարկմանը ներկայացնել ընկերվարական կուսակցության պարագլուխներին «առանց դատաստանի արտաքսման իրավունքը»: Ինչպես տեսնում ենք, Քեյլանը ամեն անգամ ընկնում է հակասությունների մեջ:

Թերթի էջերում մեծ ուսումնասիրություն է տպվում Գերմանիայի կայգեր Վիլիելմ առաջինի մասին, որի հեղինակը դարձյալ Քեյլանն է:

Կայգերին համարելով իր ժամանակի միապետներից ամենանշանավորը, հեղինակը նրան օժտում է ամենամարդկային հատկանիշներով, նրա վայելած ժողովրդականությունը համեմատում է Աստվածաշնչի հետ. «Գերմանիո մեջ ոչ մեկ գիրք Աստվածաշունչեն ավելի տարածյալ է, բայց ճշմարտության հակառակ չէ ըսել, թե Վիլիելմ առաջինի արձանք, կիսարձանք, լուսանկարք... աստվածաշնչեն ավելի տարածված է գերման ժողովրդյան մեջ»: Այդ մեծ ժողովրդականությունը հեղինակը բացատրում է նրա կատարած գործի մեծությամբ: Յամենատեղով Նապոլեոն Բոնապարտին և Վիլիելմ առաջինին, Քեյլանը գտնում է, որ չնայած վերջինիս չուներ Բոնապարտի հանճարը, բայց իր երկրի համար կատարել է ավելի մեծ գործ, քան Բոնապարտը: Նապոլեոնի շահած հաղթանակների արդյունքները մնայուն ոչ մի հետք չթողին Ֆրանսիայի համար, քանի որ «այդ հաղթանակները ձեռք էին բերված օտար ազգաց երկիրներն ու իրավունքները բռնաբարելով»: Սինչդեռ երկարատև, համառ և տնքաջան աշխատանքով գերմանական բազմաթիվ պետությունների միավորումը մի հզոր պետության մեջ, ըստ Քեյլանի, Վիլիելմի և Բիսմարկի կատարած գործի անմահության ապացույցն է: «Այդ պատճառով շատ մը աշխարհավարներու գործեն ավելի կարևոր, ավելի հիմնավոր է Վիլիելմ առաջինի գործն և ի շարս մեծագույն

աշխարհավարաց միշտ երևելի տեղ մը պիտի բռնե Վիլհելմ կայսեր անունը»: Արևելք, 1888, N 1259, 14 մարտի/:

Առանձին հոդվածներ են նվիրված ռուս-ֆրանսիական մերձեցումներին: Ընդգծվում է, որ այդ քաղաքական մերձեցումների հիմքում ընկած են նվաճողական քաղաքականության շահերը: Հատուկ հարգանքի է արժանանում Անգլիայի «ազատական կուսակցության» /լիբերալների/ հռչակավոր պարագլուխ Գլադստոնը: Չնայած այդ հանգամանքին, խմբագիրը ընդգծում է Գլադստոնի զիջումները Ռուսաստանին Կենտրոնական Ասիայում Մերվի և շրջակա գրավումների հարցում, որին ցարական արքունիքը պատասխանում է այլ զիջումներով. այնուամենայնիվ, Քեչյանը Գլադստոնին համարում է բարոյական քաղաքագետ և փվանագետ: Իդեալականացնելով Գլադստոնին դիվանագիտության մեջ բարոյական բարձր չափանիշներ դրսևորելու համար, խմբագիրը պահանջ է դնում «քաղաքականության մեջ, ինչպես անհատական կյանքի մեջ ալ պարկեշտություն, ուղղամտություն և արդարասիրություն ունենալ»: Մեր կարծիքով, սխալվում էր խմբագիրը Անգլիայի վարած արտաքին քաղաքականության մեջ մեծ տարբերություն տեսնելով պահպանողականների և ազատականների միջև:

Ժամանակի քաղաքական իրադարձություններին արձագանքող թերթը ընթերցողներին ծանոթացնում է եվրոպական պետությունների միջև կնքված ռազմական երկու դաշինքներին, հույս հայտնում, որ դրանց գոյությունը հավասարակշռություն է ստեղծում Եվրոպայում, որն «ինքնին երաշխավորություն մ'է խաղաղության»: Սիննույն ժամանակ, այդ նույն փաստը՝ 20 երկար տարիների ընթացքում երկու ռազմական դաշինքների ստեղծման երկարատև գործընթացը, մտահոգում և անհանգստություն է պատճառում խմբագրին, որն զգուշացնում է ընթերցողներին. «Եվրոպա ամրացյալ բանակներու շարք մը դարձած է»: Պատերազմը ծագելու համար պատասխանատվությունը դնելով եվրոպական պետությունների միապետների վրա, Քեչյանը ընդգծում է, որ նրանք խուսափում են պատասխանատվությունից: Խմբագիրը համոզված պացիֆիստ է, դատապարտում է պատերազմն ու այն ծնող պատճառները: Պատերազմի ամեն մի լուր տազնապով է համակում նրան, նույնիսկ 1894թ. չին-ճապոնական պատերազմի լուրը: Այդ պատերազմի մասին ևս նա

նշում է, թե «տնտեսական շահ և քաղաքական առաջնության խնդիր ավելի զորավոր երևցան, քան մարդկային իմաստություն» /Արևելք, 1894, N 3137, 22 հուլիսի/: Թեև Չինաստանն ու ճապոնիան հեռու են Արևմտյան Հայաստանից և Թուրքիայից, այնուամենայնիվ, Քեչյանը մտահոգվում է, որ այդ պատերազմը կարող է անդրադառնալ համաշխարհային քաղաքականության վրա և անակնկալ երևույթների պատճառ դառնալ:

Թեմատիկ առումով մի առանձին բաժին են Ռուսաստանին, նրա վարած ներքին ու արտաքին քաղաքականությանը, համաշխարհային քաղաքականության ասպարեզում նրա խաղացած դերին, ռուսական մշակույթին, մամուլին և գրականությանը նվիրված հոդվածները: Դրանց մեծ մասը խմբագրական հոդվածներ են, որոնք գրվել են սկզբում Ա. Արփիարյանի, ապա Բ. Քեչյանի կողմից: Արփիարյանի կողմից գրված հոդվածներում տարբերակում է նկատվում պաշտոնական և ժողովրդական Ռուսաստանների միջև: Խարազանվում է պաշտոնական Ռուսաստանի վարած կայսերապաշտական, մեծապետական քաղաքականությունը իր կազմի մեջ մտնող փոքր ժողովուրդների նկատմամբ: Պախարակվում է «Նովոյե վրեմյա» հետադիմական թերթի վարքագիծը, որի էջերում նրա խմբագիր Մուլչանովը հակահայկական հոդված է զետեղել: Դրան հակադրվում է «Ռուսսկի կուրիերը», որպես ազատականների կուսակցության օրգան, որն արտատպում է «Մշակի» պատասխան հոդվածը Մուլչանովի դեմ: Ռուսաստանի նկատմամբ ցուցաբերած հետաքրքրությունն ուներ իր պատճառները: Հայ ժողովրդի մի սովոր մասն ապրում էր այդ լայնածավալ կայսրության տարածքում, հետևապես, նրա վարած քաղաքականության ելևէջները ամեն դեպքում պետք է շոշափեին հարազատ ժողովրդի մի հատվածի շահերը: Այդ դիրքերից էլ քննադատվում էր ցարական կառավարության քաղաքականությունը հայ եկեղեցու իրավունքների սահմանափակման ուղղությամբ, մատնանշվում ցարական բյուրոկրատիայի ստեղծած «Պոլոժենիեի» հակահայկական բնույթը: Շահագրգիռ խոսակցություն է ծավալվում ցարիզմի կողմից 1884թ. փետրվարի 14-ին ընդունված օրենքի առթիվ, ըստ որի, հայ ծխական դպրոցները պետք է ենթարկվեին ցարական լուսավորության մինիստրությանը: Այդ գործողությունը ենթադրում էր հայկական դպրոցների գոյությանն սպառնացող իրական վտանգ: Խմբագիրը խարազանում էր

ազգային փոքրամասնության հոգևոր ոլորտին հասցրած այդ հարվածը, սակայն միամտաբար կարծում էր, թե նման քաղաքականության պատճառները սուբյեկտիվ են և բացատրվում են ցարական ներքին գործերի նախարար Դմիտրի Տոլստոյի, Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետ Դոնդուկով-Կորսակովի և Անդրկովկասի ուսումնարանների ընդհանուր տեսուչ Յանովսկու հակահայկական դիրքորոշմամբ: Հոգվածի հեղինակը բացատրում է, որ այդ քաղաքականությունը ռուսական պետության շահերի տեսանկյունից վնասակար է: Խմբագիրը չէր ըմկալում ցարական կառավարության վարած գաղութային քաղաքականությունը և միամտորեն ցանկանում էր օգնել ռուսական պետական ապարատի ներկայացուցիչներին, հավաստելով, որ լուսավորության նախարարությանը ենթարկվող դպրոցները ճարակ են դարձել «ոչնչականության» գաղափարներին, և այդ հանգամանքը կառավարությանը կանգնեցնում է դժվարությունների առաջ, իսկ «հայոց դպրոցաց մեջ ոչնչականության նշույլն իսկ չտեսնվեր» /Արևելք, 1884, NN 141, 145/: Նման բացատրություններով խմբագիրը հույս ուներ հանդգել ցարական կառավարությանը վերանայել հայկական դպրոցների մասին ընդունած որոշումը: Սակայն հետզհետե փոխվում է «Արևելքի» դիրքորոշումը: Դա բացատրվում էր երկու հանգամանքով. առաջինը, որ 80-ականների վերջում ցարիզմը սկսում է վարել ընդգծված հակահայկական քաղաքականություն բարիդրացիական հարաբերություններ հաստատելով Թուրքիայի հետ և երկորդ, խմբագրական հոդվածների հեղինակության իրավունքը դեմոկրատ մտածողության տեր Ա. Արփիարյանից անտիճամաբար անցնում է պահպանողական մտայնության Բ. Զեչյանին:

Քննարկելով նախակրթական տարրակն դպրոցների վիճակը Ռուսաստանում, մեծ հոգվածաշար նվիրելով երկրի հանրային կրթության հարցերին /Արևելք, 1884, NN 196, 198, 202, 204/, խմբագիրը հանգում է այն եզրակացության, որ ժողովրդական կրթության ամենակարևոր օղակը տարրական կրթությունն է «նախակրթարանը». «Նախակրթությունը բուրգին խարիսխն է և խարիսխին ամրութենեն կախում ունի ամբողջ շենքին զորությունը»: Սակայն ցարական կառավարությունն ամեն ինչ անում է խոչընդոտելու ժողովրդի լուսավորության գործը, գտնելով, որ «ուսյալ ստրուկներ վտանգավոր ծառաներ

կլիհին, ուստի գյուղացին, ժողովրդյան ստվար մեծամասնությունը կը թողվեր խորին տգիտության մեջ»: /N 196/ Հողվածագիրը /Արփիարյանը/ փաստեր է հրապարակում Պետերբուրգում գոյություն ունեցող դպրոցների կացության վերաբերյալ և ավելացնում, որ եթե այդպիսի ողբալի իրավիճակ է մայրաքաղաքում, դժվար չէ պատկերացնել ժայրամասերի դպրոցների դրությունը: Ըստ հողվածագրի հաղորդած տեղեկությունների, ողջ լայնածավալ Ռուսաստանում միայն մեկ միլիոն երեխայի է բախտ վիճակվել դպրոց հաճախելու: Հեղինակը պատմում է ներքին գործոց նախարար Դ. Տոլստոյի և տեղական ինքնավարության մարմինների / զեմստվոների/ միջև գոյություն ունեցող հակամարտության մասին: Այդ պատճառով նախարարը լուսավորության համար նախատեսված չնչին գումարի մի մասը հատկացնում է դպրոցական ուստիկանությանը, որի խիստ հսկողությանն են ենթարկվում անգամ պաշտոնական անձինք, իսկ «լավագույն աշակերտներեն հաճախ բանտ կամ Սիպերիա կղղկեն»: Թերթը քննադատում է ցարական կառավարության նոր օրենքը, որով նախնական կրթությունը զեմստվոների իրավասությունից հանել և հանձնել էր ռուս կղերին: «Հագիվ մեկ ամիս առաջ հրատարակյալ կրթական նոր օրենքն օրթողոքս կղերին բացարձակ տնօրինության կենթարկե ժողովրդային դպրոցներն»: Ընդգծելով ռուս կղերի հետադեմ ընթացքը, նրա մեծ մասի տգիտությունն ու ապաշնորհությունը, հեղինակը կառավարության այդ քայլը համարում է սխալ, նշելով, որ «դպրոցները անհոգության և անկարողության զոհ պիտի երթան»:

Մեծ հետաքրքրությամբ են ընթերցվում ռուս մամուլին և ցարական գրաքննությանը նվիրված հողվածները: Ռուսական մշակույթին լավատեղյակ խմբագիրը /Արփիարյանը/ մեկառմեկ թվարկում է ռուս գրականության առաջադեմ գործիչներին Ռադիշչևից սկսած. «ժԸ դարու ազատ և մարդասեր գաղափարաց արձագանքն եղան Ռուսիո մեջ, ռուս լրագրապետաց և գրագիտաց բաժին ելած են միշտ աքսոր ի Սիպերիա, արտաքսում և կախադան»: Տուրգենևը բանտարկվեց, ապա արտաքսվեց, Դոստոևսկին 10 տարի դատապարտվեց, Զերնիշևսկին և Սիխայլովը պատժվեցին և արքայազններ: Ռուս մամուլը գտնվում է երկաթե մանլիչի տակ: 1865 թ. օրենքով լրագրի վերջնական դադարումը կարող էր կատարվել միայն դատարանի միջոցով: Լրագրական դատերը մեծ աղմուկ էին բարձրացնում, իսկ

դրանցից խուսափում էր կառավարությունը: Այդ պատճառով 1872-ին տպագրական օրենքը փոխվեց, դատարաններին արգելվեց միջամտել տպագրական գործերին, այդ իրավունքը հանձնելով նախարարների խորհրդի իշխանությանը: Ներքին գործերի նախարարը միաժամանակ դատավոր և դատախազ էր տպագրական գործերի մեջ, և որոշումները կայացվում էին նրա ցանկության համեմատ: Իսկ նա պաշտպանում էր երկրի շահերը իր հասկացած ձևերով, հուզումները և կարծիքների փոխանակությունը վնասաբեր համարելով երկրի անվտանգության համար: «Հրատարակություն, վիճաբանություն, կարծյաց ազատ արտահայտություն՝ ռուս կառավարության բոլորովին ատելի բաներ են: ... Ամեն ինչ լռության մեջ և գաղտնի պիտի կատարվի»: Արևելյան Հայաստանին քաջածանոթ Արփիարյանը խորամուխ է եղել ռուսական մամուլի, ռուս լրագրողների և մտավորականության գործադրած ջանքերին իրենց գործունեությունը ծավալելու, ընթերցողների հետ կապ հաստատելու, ահավոր գրաքննության պայմաններում իրենց գաղափարները քարոզելու ձևերին: «Ռուս լրագիրք գորավորին դեմ տկարին զենքը կհանեն- խորամանկություն: Այս լրագրաց խմբագիրներուն և ընթերցողներուն միջև գաղտնի հասկացողություն մը հաստատված է: Ընթերցողք տող ընդ մեջ կարդալով կհիմանան իրենց խմբագրաց բուն միտքն» /Արևելք, 1884, N 226/: Ռուս մամուլը կատարում է առաջադիմական մեծ գործ, բացառությամբ պաշտոնական լրագիրների, դրանք մեծ մասամբ «հակակառավարական են», ազատական բովանդակությամբ: Ըստ հողվածագրի տեղեկությունների, հետադիմական, պահպանողական լրագիրները չեն վաճառվում Ռուսաստանում: Այդ փաստը խոստովանում է նույնիսկ «Մոսկովսկիե վեդոմոստի»-ի խմբագիրը՝ «Ռուսիո հազվագյուտ հետադեմ խմբագրաց պարագլուխը», Կատկոյլը: Հեղինակն ընգծում է ռուսական հասարակական-քաղաքական կյանքում երկու հակամարտ ուժերի առկայությունը. «Ռուս մամուլը ազատական, բայց գյուր ազատամտությունը հազար ու մեկ հնարքներով ամեն օր կեղծելու պարտավորված և ռուս կառավարությունը՝ պահպանողական, բայց ազատական մամուլը մեկ անգամեն և ամբողջովին օճելու անկարող գոլով, ամեն օր մեկ մեկ հնարքով զայն փչացնելու հետամուտ, այս երկու ներհակ գորությունք շարունակ կռվի մեջ կգտնվին իրարու դեմ»:

Չայրույթով է նշվում այն փաստը, որ ռուսական գրաքննությունն արգելեց ուկրաիներեն լեզվով հրատարակությունները, փաստորեն մի հրամանագրով ջնջելով ամբողջ գրականության գոյության իրավունքը՝ «Ուքրենի նահանգին պատմական գավառաբարբառովն հրատարակյալ գրականությունն»: Խմբագիրն այդ գործողությունը համարում է բռնապետական տնօրինություն, որը դեռևս իր նմանը չէր ունեցել նույնիսկ Ռուսաստանի նման երկրում:

Թերթը քննադատում է Ռուսաստանի՝ փոքր ազգերի նկատմամբ վարած ծուլման քաղաքականությունը: Քաջատեղյակ լինելով պատմական փաստերին, խմբագիրը նշում է, որ Բոգդան Խմելնիցկու դաշինքը ռուսների հետ «չէր գործ հպատակության առ ձարն Ալեքսեյ Սիխայլովիչ, այլ հավասարներու միջև դաշնակցության մը հանգամանք ուներ»: Սակայն ռուսական ցարիզմը աստիճանաբար վարում է բռնի ռուսացման քաղաքականությունը 25 միլիոն ուկրաինական ժողովրդի նկատմամբ, որն անվարան պայքար է սկսում «սույն բռնապետական վարչության դեմ»: Ընթերցողներին ծանոթացնելով Ուկրաինայի աշխարհագրական դիրքին, գրականությանը, մշակույթին, հեղինակը նշում է սլավոնական ժողովուրդների մեջ ունեցած նրա տեղն ու դերը իր «Ճոխ գրականությամբ, զոր սլավազետք շատ կգովեն յուր հարազատության և հարստության համար, իրենց լեզվով, որ ծանոթ ռուսերենեն ավելի մաքուր կհամարվի»: /Արևելք, 1888, N 1364/: Խմբագիրը /Արփիարյանը/ դատապարտում է ցարական կառավարության գաղութացման քաղաքականությունը Ուկրաինայի նկատմամբ, գտնելով, որ վերջինս պատերազմով նվաճված երկիր կամ պարտված ժողովուրդ չէ, դրա համար էլ պայքարում է մեծապետական քաղաքականության դեմ, ամենևին նպատակ չունենալով բաժանվել ռուսական պետությունից, այլ առաջադրում է տեղական ինքնուրույնության պահանջներ, իրենց «ցեղային հատկանիշները» անկորուստ պահպանելու համար: Ուշագրավ է հողվածի եզրակացությունը. եթե դարերի ընթացքում Ռուսաստանին չի հաջողվել իրենց ծուլել «ցեղակից, ազգակից, կրոնակից, մինչև իսկ լեզվակից» ուկրաինական ժողովրդին, ապա ինչպես կհաջողվի ծուլել այնպիսի ժողովուրդների, «որք Ուքրաինո ժողովուրդեն շատ ավելի կտարբերեն ռուս ազգութենեն»: Ակներև է, որ այս տողերով խմբագիրը

հանգստացնում էր իր ընթերցողներին, որ ցարական կառավարությանը չի հաջողվի առաջ տանել արևելահայերին ծուլելու քաղաքականությունը, որի առաջին քայլերն արդեն երևում էին հայկական դարոցները փակելու հրամանագրի մեջ:

Տարբեր առիթներով քննադատվում է ռուսական կառավարության քաղաքականությունը նաև Ֆինլանդիայի և Լեհաստանի նկատմամբ:

Քննադատելով սլավոնաֆիլներին ծուլման վարքագծի համար, խմբագրական հոդվածով թերթն իր կարծիքն էր արտահայտում Ռուսաստանի «աշխարհվարական» հիմնադրամատական/ քաղաքականության նկատմամբ, համեմատում Ֆինլանդիան և Կովկասը, երկու տարբեր վարչական և ազգային միավորումները, ընդգծելով, որ Ֆինլանդիան՝ Ռուսաստանին առավել մերձ աշխարհագրական դիրք ունի, այդուհանդերձ, Ալեքսանդր Գ-ն չի կարողանում նրա նկատմամբ լրովին կիրառել ծուլիչ քաղաքականություն /N 185/: Դրանով ներթոյս թե հանգստացնում էր արևելահայությանը, որ Արևելյան Չայաստանի նկատմամբ Ռուսաստանը չի վարի ծուլիչ քաղաքականություն: Սակայն ցարական կառավարության ազգային քաղաքականությունը քննադատելով հանդերձ, խմբագիրը գնահատում է Ռուսաստանի պատմական առաքելությունը, մատնանշելով նրան իբրև մի երկիր, որի միջոցով եվրոպական քաղաքակրթությունը պետք է տարածվի աշխարհի ամենահեռին ու ընդարձակ մասի՝ Ասիայի մեջ: Հեղինակը գտնում է, որ անխուսափելի է ռուս ժողովրդի ազատագրումը, և ճորտերի ազատագրումից հետո ակնկալում է «երկրորդ և մեծագույն ազատագրումը մի ժողովրդի, որի ձիրքերն ու առաքինությունները գերակշռում են թերություններին»: Թերթում բարձր գնահատականի է արժանանում ռուսական մշակույթը, մանավանդ գրականությունը: Եվ խմբագիրը, և թղթակիցները մի քանի անգամ անդրադառնում են ռուս գրականության հսկաներից մեկի՝ Լև Տոլստոյի ստեղծագործությանը: Տարբեր առիթներով գնահատվում են նաև ռուս երաշտության հանճարները, մասնավորապես Պյոտր Չայկովսկին:

Հակակառավարական հոդվածներին զուգահեռ, հոդվածներ են լույս տեսնում նաև ցարական տարբեր բարձրաստիճան այրերի, մասնավորապես Ալեքսանդր 3-րդի

մասին գովաբանական հոդվածներ /այս անգամ Բյուզանդ Քեչյանի հեղինակությամբ/:

Ընդգծվում են ցարի մարդկային հատկանիշները. օրինակելի որդի, հայր, ամուսին լինելը, անձնական այլ բարեմասնությունները: Իդեալականացվում է նրա լայնախոհությունը, կրոնական հանդուրժողականությունը: Ցարը խիստ զայրանում է անգամ իր դաստիարակի՝ Ս. Սինոդի պրոկուրոր Պոբեդոնոսցևի վրա այն պատճառով, որ վերջինս հալածել էր մի խումբ լուսերականների: Չափազանցվում է Ալեքսանդր 3-րդի վայելած մեծ ժողովրդականությունը, ընդգծվում նրա խաղաղասիրական գործունեությունը: Հեղինակը, որ փլիհելն 2-րդի պաշտամունքն ուներ, դրական է գնահատում Ալեքսանդր 3-րդի՝ Գերմանիայի հետ լավ հարաբերություններ հաստատելու հարցը /Արևելք, 1894, N 3211/: Հատուկ հոդված է նվիրվում Ալեքսանդր 3-րդի վարած ներքին և արտաքին քաղաքականությանը /Արևելք, 1894, N 3214/:

Ռուսաստանին վերաբերող հոդվածների այդ երկու շարքի համեմատությունն ակնհայտ է՝ դարձնում «Արևելքի» տարբեր տարիների, նրանց խմբագիրներ /Ա. Արփիարյան և Բ. Քեչյան/ տարբերությունն ու հակասությունը: Առաջինի համար գնահատելին դեմոկրատական Ռուսաստանն էր իր հզոր մշակույթով, երկրորդի համար՝ ցարը իր զինակիցներով: Պատահական չէ այն հանգամանքը, որ արևմտահայ լրագրության նոր փուլը խորհրդանշող դեմոկրատական հակումներով «Արևելքը» 90-ականներին, Արփիարյանի և իր զինակիցների թերթից հեռանալուց հետո, դառնում է պահպանողական, պատրիարքարանի և պատրիարքի խոսափող մի օրգան:

Կանանց հարցը «Արևելքում»

Հիմնախնդիրների առումով առանձնանում են այն հոդվածները, որոնք նվիրված են կնոջ իրավահավասարության, հասարակության մեջ կնոջ ունեցած դերին, ընտանիքի ամրության խնդիրներին: Հարցը մեկնաբանվում է նախ տեսականորեն. Պատմելով Անգլիայի և Ֆրանսիայի օրենսդրական մարմիններում ընթացող բանավեճերի մասին, խմբագիրը նշում է, որ կանանց իրավահավասարության հարցը պետք է վճռել այն տեսանկյունից, թե նրանք հավասար քաղաքական իրավունքներ ունեն, թե ոչ.

կարող են ընտրել և ընտրվել, մասնակցել պետության կառավարմանը: Արևելք, 1884, N 123/: Հարյուր տարի առաջ սման հարցադրումը Օսմանյան Թուրքիայի մայրաքաղաքում հրատարակվող օրաթերթում մեծ խիզախություն էր: Ընդհանրացված հարցից խմբագիրը խոսքը կոնկրետացնում է ազգության մեջ հայ կնոջ ունեցած դերին: Նշելով մեր անցած բազմադարյան գոյապայքարի ուղին, խմբագրական հոդվածում հեղինակը գնահատում է հայ կնոջը իբրև ազգի պաշտպանության պատվարի. «Մեր պատմությունը անցյալ, թե ներկա, ցույց կուտա, թե հայ կինը միշտ կենսական պաշտոն մը ստանձնած է հայ ազգի պաշտպանության մեջ... Մարտիրոս մը, որ յուր արյունովը կանուցանե յուր ազգը»: Արևելք, 1884, N 15/: Սակայն ամեն ժամանակաշրջան առաջադրում է իր պահանջները: Հոդվածագիրը իր ժամանակի հրամայականն է համարում կրթել և լուսավորել հայ կնոջը, քանի որ նա է սերնդի առաջին բնական դաստիարակը: Եթե Կ. Պոլսում իգական սեռի հայ ներկայացուցիչները փոքրիշատե հնարավորություն ունեին դպրոց հաճախելու, ապա Արևմտյան Հայաստանի տարածքում մատների վրա կարելի էր հաշվել իգական վարժարանները: Դրա համար էլ խմբագիրը գովեստով և գոհունակությամբ է խոսում Կ. Պոլսում ստեղծված «Ազգանվեր հայուհյաց» և «Դպրոցասեր տիկնանց» ընկերությունների գործունեության մասին, որոնք իրենց նպատակ էին դրել ամեն գնով սատարել իգական վարժարանների ստեղծմանը հայ գավառներում: Մի քանի անգամ հոդվածներ են նվիրվում այդ ընկերություններին, նրանց տասնամյա գործունեությանը, հետապնդած խնդիրներին, առաջադրած նպատակներին: Խմբագրից բացի, այդ թեմայով հանդես են գալիս Շղիշե վարդապետ Այվազյանը, Արփիար Արփիարյանը, Մելքոն Կյուրճյանը, պատմում գավառներում նրանց կողմից բացած դպրոցների մասին: «Ազգանվեր հայուհյաց» ընկերությունը իգական վարժարաններ է բացել Քղիում /1880թ./, Հաճնում /1881-ին/, Մուշում /1882-ին/, Սղերդում /1888-ին/, Ալաշկերտում, օժանդակել է Երիզայի Քրիստինյան և Կ. Պոլսի Սանդիստյան վարժարաններին: Դրանց ծախսը հոգում է ընկերությունը, որն իր գումարները հայթայթում է բարեգործական պարահանդեսներ կազմակերպելու միջոցով: Նման գործունեություն է ծավալում նաև «Դպրոցասեր տիկնանցը», որը ձրի կրթություն է տալիս որբ

ու աղքատ աղջիկներին, նրանց պատրաստում հայ գավառներում ուսուցչության անձնավեր գործին:

Թերթն անհրաժեշտ խորհուրդներ է տալիս գավառի հայ կնոջը գյուղատնտեսական գիտելիքներով զինելու համար, որպեսզի նա կայուն գիտելիքներ ձեռք բերի անասնապահությունից, ագարակային տնտեսությունից, հմտանա տարբեր արհեստների մեջ՝ ոստայնանկության, ջուլհակության, գորգագործության, ասեղնագործության: Համեմատելով մայրաքաղաքի և գավառի հայ կանանց, խմբագիրը և գավառական թղթակիցները նախապատվությունը տալիս են գավառի հայ կնոջը, որն իր ամուսնուն պանդխտության ճանապարհից հետո ինքը միայնակ սնուցում է իր գավակներին, փոխարինելով նաև ամուսնուն:

Հայ կինը մեծ առաքելություն ունի կատարելու, ընտանիքը ամուր է նրա շնորհիվ. «Կյանքի հովերեն կծեծվի, քակայն կանգուն կեցած է միշտ ալիքներե զարնված. ժայռի մը պես: ... Այո, այսօր իսկ, ավերակաց փոշիներու մեջ արցունքով ու կակիծով շինված ժողովրդի մը կյանքի մեջ հայ կինն է, որ վիշտը դրած ոտքին տակ, կերևի իբրև դյուցազնուհի տառապանաց, սիրտն ավերակներու վրա, հոգին՝ Աստուծու և կյանքը տանն ու գավակներուն վրա ... /Արևելք, 1890, N 1947/: Խմբագիրը խարազանում է պոլսեցի քաղքենի հայ կանանց, որոնք իրենց գավակներին զրկում են հայեցի դաստիարակությունից, նրանց տալիս օտարալեզու դպրոցներ, կտրում ազգային արմատներից, եկեղեցուց ու պատմությունից: Դրան հակառակ՝ գավառահայ կինը ազգային ավանդությունների պահապանն է, հետևապես, կրթական լուսավորական նպատակներ հետապնդող ըկերությունները պետք է մեծ աշխատանք կատարեն նաև մայրաքաղաքի կանանց շրջանում: Այդ միտումով «Արևելքը» ընթերցողներին պարբերաբար ծանոթացնում է Կ.Պոլսի հայ արժանավոր կանանց գործունեությանը /Եղիսաբեթ Յուսուֆյան, Նազլը Վահան՝ Ս. Տյուսաբի մայրը և ուրիշներ/: Նրանք իրենց շուրջը բոլորելով ազգային մտածողության տեր այլ կանանց, կազմեցին «Խնամակալ ընկերությունը», որը քառորդ դարից ավելի մեծ աշխատանք կատարեց ոչ միայն թշվառների արցունքը սրբելով, վշտեր անոքելով, հիվանդին դեղ տալով և աղքատին՝ հաց, այլև իրենց ստեղծած ընկերությամբ հիմքը դրեցին իզական վարժարաններին և իրենց անմիջական օրինակով քսանհինգ

տարուց ավելի կրթեցին «հայ ազգության օգուտ բերող անդամներ» /N 166/:

Սի քանի անգամ հողված է տպվում Գայանե Մատակյանի ազգանվեր գործունեության մասին, խոսվում նրա բացած առաջին մանկապարտեղ-ժաղկոցի մասին, ցույց տրվում, թե քանի սանուհիներ է պատրաստել և գավառներ ուղարկել տիկին Մատակյանը: Իր կիրակնօրյա դասախոսություններով նա լրացնում է այն բացը, որ գոյություն ունի իգական վարժարաններում. նա ուսուցչուհիներ է պատրաստում այդ դպրոցների համար «մանկավարժական նորագույն մեթոդներու համաձայն», իր սանուհիների մեջ պատվաստելով ոչ միայն մասնագիտական գիտելիքներ, այլև անձնվիրություն, բարոյական բարձր հատկանիշներ, որոնց շնորհիվ «ճշմարիտ բուրաստան» կղառնան «խամրոցները»: Արևելք, 1896, N 3593, 5 փետրվարի/:

«Տիկին Մատակյան երկու տարի է, որ Գառը գյուղի մեջ մանկապարտեզներ հաստատած է, նույն և նման ալ Սկյուտարի մեջ ունեցավ: Ի՞նչ մասնակցություն ունեցով կեդրոնական ուսումնական իշխանությունն, ի՞նչ օգնություն ըրավ այդ արի և անվիատ կնոջ, որ հարյալ իր սրբագույն իղեալին, մանուկներու համար քսակեն ցայսօր ալ դրամ կծախսե. օր մը չպիտի ըսվի՞, թե կովկասցի կին մը ինքն իր ուժին ու դրամական զոհողությանցը կրթնած, կրթական նոր դրություն բերավ ի Պուլխ և Ազգն, իբրև անտարբեր ոք, լոկ հեռուեն հանդիսատես գտնվեցավ»: /1889, N 1779/:

Առանձին հողվածներ են նվիրվում «Հռիփսիմյանց», «Ազգանվեր հայուհյաց», «Դպրոցասեր տիկնանց» ընկերությունների նշանավոր հայ անդամների ազգանվեր գործունեության մասին: Հմուտ գրչով կերտվում են «Դպրոցասեր տիկնանց» գանձապետ, վարչության անդամ, անձնվեր ուսուցչուհի Արուսյակ Շիշմանյանի /«Արևելք», N 87/, «Հռիփսիմյանց» ընկերության անդամներ դերաճանուհի Սարի Նվարդի և դերասանուհի Աստղիկի կերպարները, գնահատվում նրանց ներդրումները: /«Արևելք», N 166/:

Գովեստով արտահայտվելով հայրենասեր հայուհիների մասին, օրինակ վերցնելով եվրոպական քաղաքակիրթ երկրներից, թերթը բարձրացնում է կնոջը տղամարդուց տնտեսապես անկախ դարձնելու հարցը: Այդ տեսանկյունից էլ քննարկվում է և գնահատվում Իբսենի «Նորա» պիեսը. «Կինը բարոյական,

մտավորական և հոգեկան կերպով պետք է ամուսնուն հավասար քարձրություն ունենա, անոր պես զգա, մտածե, դատե, իբրև պեպեք մը չնկատվի տանը մեջ, այլ իբրև կին» /1899, N 3065,26 ապրիլի/:

Իրերի կացությունն ստիպում է խմբագրին քննարկել այն հարցերը, որոնք վերաբերում են կնոջ դերին, նրա՝ հասարակության մեջ զբաղեցրած տեղին: Քննադատվում են արական սեռի այն ներկայացուցիչները, որոնք կնոջն ընդունում են իբրև զվարճալի ժամանցի առարկա, ժխտում նրա ինացական կարողությունները, զլանում նրա տարրական բնական իրավունքները: Ըստ Քեչյանի, հենց այստեղից էլ առաջացել է «կնոջական ազատագրության» դատը: Այս վերաբերմունքը քննադատելով հանդերձ, խմբագիրը գտնում էր, որ հայ հասարակության համար ամենից կարևորը և առաջին չափանիշն է. «Նախ և առաջ պատրաստենք մեր աղջիկները տան մեջ իրենց կատարելիք պաշտոնին: Երբ մեր իգական կրթության աստիճանը այս չափին հավասարեցնենք,՝ ժամանակ կուներանք ավելին պահանջելու: /N 3084/

Անշուշտ, գավառի հայ կնոջ վիճակը խիստ տարբերվում էր քաղաքի կնոջ վիճակից. նա շատ հեռու էր տիկնիկ լինելուց, նրա աշխատանքը, գուցե և տղամարդու աշխատանքից էլ ծանր, խիստ անհրաժեշտ էր ընտանիքի գոյության համար:

Հետևելով բուրժուական լուսավորության իր ծրագրերին, թերթը խնդիր էր դնում շեշտը դնել առանձնապես աղքատ աղջիկների կրթության վրա, որպեսզի վերջիններս իրենց աշխատանքով կարողանան դրամօժիտ վաստակել հաջողությամբ ամուսնանալու համար, քանի որ քաղաքացի կնոջը դրամ էր պետք ամուսնանալու:

Թերթի խմբագիր Բյուզանդ Քեչյանը մի քանի խմբագրական է գրում հատուկ այդ երևույթի մասին «Ասպարեզ աղջկանց համար» խորագրով /Արևելք, N 3000, 3009/: Խմբագրի համակրանքը տառապալից աշխատանքով ընտանիքի հոգսերը հոգացող գավառացի կնոջ կողմն է: Գավառի հայուհին իր ամուսնու ամենամեծ օգնականն է և ընտանիքի նեցուկը: Խմբագիրը ցանկանում է նույն դիրքում տեսնել նաև քաղաքի հայուհուն. «Քանի թշվառություններ պիտի դարձանվեին, եթե մեր կիները գյուղացի կիներու պես կյանքի ծանր լուծը քաշելու գոնե չափով մը մասնակցեին» /Արևելք, N 3062/: Գավառում

կատարվում էր հակառակ երևույթը ամուսնանալու համար փեսան պետք է ծանր «պաշլըխ» կամ «ղալան» վճարեր աղջկա ծնողներին: Երկու երևույթներն էլ հավասարապես բացասաբար էին անդրադառնում ազգության ընտանեկան կյանքի, աճի և քվաքանակի վրա: Սակայն ցանկալի արդյունքների հասնելու համար անհրաժեշտ է մեծ աշխատանք կատարել գավառացի կնոջ «մտավորական մշակումը» առաջ տանելու ուղղությամբ: Զննարկվում է տարբեր գավառներում հայ կնոջ տարբեր իրավիճակի հարցերը. մի տեղ հայ կինը գտնվում է «աղախնական գերության» մեջ, մի այլ տեղ՝ փոքր-ինչ տարբեր: Բայց բոլոր վայրերում էլ կարիք էր զգացվում «հացի խնդրոյն հավասար եարևորություն տրվիլ պետք էր աղջկանց դաստիարակության» /N 2065/: Այդ երևույթը իր վրա է գամում Կ.Պոլսի հայոց պատրիարքի ռւշադրությունը, որը շրջաբերական է ուղարկում գավառի հոգևոր առաջնորդներին ամուսնական հարցերը տեղում կանոնավորելու ուսմար: Թերթը քննադատում է պատրիարքարանին, «Ամուսնական խնդիրներ և շրջաբերականք պատրիարքարանի» -ուրագրով հողվածաշար /4 հողված/ նվիրում այդ շրջաբերականին /Տես, «Արևելք», 1889, NN 1749, 1750, 1751, 1763/ և դիտողություն անում, որ նման կիսակտուր միջոցներով լնտանիքի ամրության հարցերը չեն վճռվում: Անհրաժեշտ է լուրջ քննության ենթարկել ամուսնական կնճռոտ խնդիրները, որոնք դժվար թե հարթվեն մեկ-երկու շրջաբերականով . «Կարծե, որ եկեղեցական իշխանությունը՝ ժամանակիս ընկերաբանական, տնտեսագիտական և օրենսդրական լույսերեն առաջնորդյալ լրջորեն ուսումնասիրե ամուսնական խնդիրն յուր բազմազան երևույթից ներքև և իմաստուն տնօրինության առարկա ընե գայն /1889, N 1763, 27 նոյեմբերի/:

Պատրիարքարանին քննադատելով հանդերձ, ամուսնական խնդիրները լուծող մարմինը թերթը համարում էր հենց նրան, կամ տեղերի եկեղեցական իշխանություններին: Միևնույն ժամանակ խմբագրությունը գտնում է, որ այդ դժվար լուծելի հարցը մեկ-երկու շրջաբերականով հնարավոր չէ լուծել և առաջարկում է պատրիարքարանին. «Ժամանակիս ընկերաբանական, տնտեսագիտական և օրենսդրական լույսերեն առաջնորդյալ լրջորեն ուսումնասիրե ամուսնական խնդիրն յուր բազմազան երևույթներից ներքև և իմաստուն տնօրինությանց առարկա ընե գայն»: /N 1763/

Թերթն իր վերաբերմունքն է արտահայտում նաև այն ժամանակվա խիստ կենսական նշանակություն ունեցող ամուսնալուծության խնդիրներին: Ուժգին պայքար մղելով հայկական ընտանիքի ամրության համար, թերթը միաժամանակ իր համաձայնությունն է արտահայտում պատրիարքարանի այն տնօրինությանը, որը խիստ անհրաժեշտ դեպքերում թույլատրում էր ամուսնալուծությունը: Սակայն խմբագիրը գտնում էր, որ չի կարելի չարաչափել այդ թույլտվությունը և ամուսնալուծության պետք է դիմեն խիստ հազվադեպ:

Կրթության և լուսավորության հարցերը «Արևելքում»

Առանձին բաժին են կազմում այն հոդվածները, որոնք վերաբերում են կրթության և լուսավորության հարցերին: Թերթը պարբերաբար հոդվածներ է տպել նվիրված արևմտահայ մշակութային, կրթական ընկերություններին: Առանձնապես շատ են Միացյալ ընկերության մասին հոդվածները, որոնք ունեն տեղեկատվական բնույթ և միաժամանակ բարձրացնում են կրթության ու լուսավորության հիմնախնդիրներ: «Միացյալ ընկերությանը» ստեղծումը համընկնում է 80-ականների սկզբին, իսկ 1884-ին, երբ սկսվում է հրատարակվել «Արևելքը», համընդհանուր ոգևորությունը տեղատվություն էր ապրում, արևելահայերը հազվադեպ էին դարձրել նվիրատվությունները: Ընկերությունները հոգում էին իրենց ծախսերը հանգանակությամբ, պարահանդեսների և բարեգործական այլ ձեռնարկումների միջոցով:

Այդ պատճառով թերթը հաճախ անդրադառնում է «Միացյալի» տարեկան հաշվետվություններին, տարբեր վայրերում նրանց բացած ուսումնարանների կացությանը, կրթական տարբեր ընկերությունների՝ «Միացյալ ընկերությանը», «Դպրոցասեր տիկնանցի», «Ազգանվեր հայուհյացի» հարաբերություններին: Արևմտահայության կրթական հոգսերը հոգացող կենտրոնական այդ ընկերություններից բացի, տարբեր գավառներում ստեղծվել էին մշակութային, կրթական զանազան ընկերություններ. Խարբերդի և Աֆիոն-Գարահիսարի Սմբատյան ընկերությունները, Ամասիայի «Դպրոցասիրացը» և այլն: Խմբագիրը իբրև հրատապ, մեծ կարևորություն ունեցող հարց

բարձրացնում է գավառները միջնակարգ դպրոցներով ապահովելու խնդիրը, որպեսզի միջնակարգ կրթություն ստանալու համար հայ երիտասարդը գավառից չմեկնեն Կ.Պոլիս: Ղազեթ մի փոքր չափով կարող էր դիմակայել պանդխտություն կոչվող ահավոր չարիքին: Այդ առիթով գրված խմբագրականում շոշափվում են Կ.Պոլսի և հայ գավառների հարաբերությունները սերտացնելու, գավառական ընկերություններին ավելի շատ ինքնուրույնություն և ձեռներեցություն ներարկելու հարցեր: Խմբագիրը գտնում է, որ անհրաժեշտ է գավառներում պատրաստել տեղի ուսուցչական կադրերին, ոչ թե նրանց հրավիրել Կ.Պոլսից. «Գավառացիները պետք է կրթենք գավառաց մեջ մնալու և իրենց հայրենի երկրին ուղղապես և անուղղապես ծառայելու համար միայն և ոչ թե ի Կ.Պոլիս թափելու համար»: /1888, N 1534, 13 փետրվարի/:

Չի կարելի թույլ տալ, որ գավառը զրկվի ֆիզիկական ուժից և «մտավոր կորուվից»: Գավառահայության կրթության խնդիրը պետք է հուզի անմիջապես գավառացիներին: Ամեն գավառ պարտավոր է բացել իր մշտական գործող դպրոցը և ապահովել ուսուցչական կադրերով: Իսկ Կ.Պոլսից եկած կրթական օգնությունը «լույ խմոր մ' է գավառացի ժողովուրդը խմորելու համար ազգային նախակրթությամբ»: Կրթության ոգին պետք է համաձայնեցվի ամեն մի գավառի «տեղական և ազգային հանգամանաց»: Թեև կարևոր է լեզուների իմացությունը, սակայն եթե գավառական դպրոցներում չկան օտար լեզուների հնուտ մասնագետներ, դրա համար պետք չէ մեկնել Պոլիս. «Փույթ չէ, որ եվրոպական լեզուներ և եվրոպական ուսմունք քիչ սովորին: Բավ է, որ սովորին իբրև հայ ապրիլ»: Գավառը պետք է դառնա հայության ազգային հատկանիշների, հայեցի կրթության և հայ ապրելու կենտրոն: Եթե մակաբերենք, որ այն ժամանակ գավառ արտահայտությունն օգտագործվում էր ողջ Արևմտյան Հայաստանի տարածքի համար, ապա պարզ կդառնա, որ խմբագիրը արդարացի էր բարձրացնում գավառը հայաթափ չանելու և իր երիտասարդ ուժերից չզրկելու հարցերը:

Քննարկելով դպրոցական ծրագրերի, միասնական դասագրքերի խնդիրը, խմբագրին հուզում էին նաև դպրոցների բարելավման միջոցները, ծեծի անհապաղ վերացում, պատժական միջոցների արգելում, երեխայի ներդաշնակ զարգացում: «Առողջ հոգին առողջ մարմնի մեջ» ասացվածքին հետևելով, անհրաժեշտ

է աշակերտի միտքը մշակել, սիրտը կրթել և մարմինը մարզել: Զննադատվում են բոլոր այն դպրոցները, ուր վարքի մրցանակ են տալիս այն երեխային, որը ողջ դասի ընթացքում նստում է անշարժ: Խմբագիրն առաջարկում է վարքի մրցանակը փոխել կայտառության մրցանակով, հետևել եվրոպական, առավելապես ֆրանսիական դպրոցներին, ուր դասավանդվող կարևոր առարկաների թվին է պատկանում մարմնամարզությունը: Կարևոր է համարվում արհեստների ուսուցումը ևս: Խմբագիրը պահանջ է դնում դպրոցների տնօրենների առաջ՝ հետևել Սանասարյան վարժարանի օրինակին, հասնել այն բանին, որ շրջանավարտ յուրաքանչյուր սան տիրապետի որևէ արհեստի: Առաջ էր քաշվում նաև արհեստագործական վարժարան բացելու հարցը: Առանձին հոդվածներ էին նվիրվում Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերի դպրոցական գործի դրվածքին: «Մշո դպրոցներու վիճակը» /«Արևելք», 1889 N 1789/ հոդվածում հեղինակն անդրադառնում է քաղաքի հինգ թաղերի՝ Ս. Սարինե, Վերին թաղ, Բրտի թաղ, Չորո թաղ և Ջիկրաշեն թաղերի վարժարանների կացությանը, որտեղ սովորողների թիվը 450 է: Դպրոցներում դեռևս մուտք չեն գործել միասնական ծրագիրն ու կանոնները, գրասեղանները և գրատախտակները, տիրապետում է ծեծը, «Ֆալախան և գալարուն վարոցը»: Ըստ հեղինակի /Վահե/, այդ վիճակը հետևանք է ոչ այնքան մշեցիների անտարբերության, որքան իրար հետևից փոխվող հոգևոր առաջնորդների անտարբերության: Զննարկվում է ողջ Տարոնի կրթական գործի դրվածքը: Այդ «բազմահայ դաշտի» 100-110 գյուղերի մեջ սկզբում եղել են վարժարաններ, ճիշտ է, ոչ փայլուն վիճակում գտնվող, սակայն 80-ականների կեսերից սկսած, աստիճանաբար փակվել են, մնացել է միայն Ջիարեթ գյուղի վարժարանը /«Արևելք», 1888, N 1269/:

Համեմատաբար լավ է Աֆիոն-Գարահիսարի Սմբատյան վարժարանի վիճակը, որի տնօրեն ուսուցիչը հրատարակել է նույնիսկ 20 հոդվածից բաղկացած վարժարանի կանոնագիրը:

Խմբագրի ուշադրությունից զերծ չեն մնում նաև Արևմտյան Հայաստանի տարբեր քաղաքների դպրոցները: Առանձնապես նշվում է Կարինի Սանասարյան վարժարանի կարևոր նշանակությունը ողջ Բարձր Հայքի հայության համար: Նրա հիմնադիր պարոն Սանասարյանը քառորդ դար առաջ, երբ միտք հղացավ վարժարան բացել Արևմտյան Հայաստանում, նախ

որոշեց ստեղծել ունակ և կարող դաստիարակներ և ուսուցիչներ: Այդ նպատակով նա ընտրեց ուշիմ պատանիներ, ուղարկեց Գերմանիա ուսանելու և «ուսուցչական մեծ արվեստի» մեջ հմտանալու համար: Այդ պատճառով էլ Սանասարյան վարժարանն իր մակարդակով էապես տարբերվում է արևմտահայ կրթական հաստատություններից: Այդ հաստատությունն ավարտողները աչքի են ընկնում և «իմացական» մակարդակով, և դառնում են նաև հմուտ արհեստավորներ, ինչը խիստ անհրաժեշտ է երկրի համար: / 1889, N 1692/:

Քննադատվում էր Կ.Պոլսի Ազգային վարչության ուսումնական խորհուրդը, որն անտեսել էր որբերին արհեստներ սովորեցնելու հանգամանքը: Ս. Փրկչի հիվանդանոցին կից հայ «ողորմած մեծահարուստները» տեղավորել էին որբանոցը: Խմբագիրը, որ քաջ գիտակ էր մեծահամբավ այդ հիվանդանոցին, նաև ազգային այլ հաստատությունների պատմությանը և աշխատություն էր հրատարակել այդ մասին, իրավացիորեն առաջարկում էր որբանոցը անջատել հիվանդանոցից և որբերի համար ստեղծել արհեստանոց, արհեստագործական վարժարան:

Բոլոր դպրոցների համար դաստիարակության անհրաժեշտ նախապայմանը ուսուցումը մաքուր հայերենով վարելն էր: Քննադատվում էին մայրաքաղաքի դպրոցները, ուր երբեմն խեղաթյուրվում էր հայերենը: Կ. Պոլսի բարբառում տեղ էին գրավում օտարամուտ ներմուծությունները: Արևմտյան Հայաստանի տարածքում գտնվող դպրոցներում ավելի անաղարտ էր պահպանվում հայերենը: Այնտեղ ավելի վառ ու կենդանի էին ազգային ավանդույթները: Հարց էր բարձրացվում դպրոցներում դասավանդման առարկա դարձնել հայ ժողովրդական երգը: Իրավացիորեն քննադատվում էր , որ արևելահայ և արևմտահայ դպրոցները «բարձիթողի են արել այս հարցը և երգը տակավին վերջին տեղն է բռնում»: Գոյություն չունի երգի դասավանդման միօրինակություն, իսպառ բացակայում է դասատվության սիստեմը, երգի ուսուցիչները չունեն անհրաժեշտ կրթություն, նրանք մնացել են միջնադարյան «պատվելիների» մակարդակին: Մինդեռ երգը ազգային ոգու պահպանման կարևոր գործոններից է:

Ընթերցողներին հաղորդելով սուլթանի հրամանը թուրք պատանիներին միայն թուրքական դպրոց հաճախելու վերաբերյալ, որպեսզի նրանք չկտրվեն իրենց ազգային արմատներից, խմբագիրը այդ հարցը քննարկում էր այլ

տեսանկյունից: Ըստ նրա, եվրոպական դպրոցները թեև երտասարդությանը դաստիարակում են քաղաքակրթության աստիճանին համընթաց, սակայ դրանք իրենց հետ բերում են նաև վնասակար գաղափարներ, ներարկելով «աշխարհքաղաքացիության» /կոսմոպոլիտիզմ/ ոգի: Եթե թուրքերը, որ տիրապետող ազգ են, խուսափում են այդ բանից, ապա առավել մեծ պատասխանատվություն է ընկնում մեր նման փոքր ազգերի կրթական գործի կազմակերպիչների վրա: «Սեզ պես տկար ազգերու վրա որչափ մեծ պարտավորություն մը կա զգուշանալու օտար և օտարամիտ կրթութենէ: Օտար վարժարաններու մեջ քրիստոնյա տղայք ոչ միայն զգացում և գաղափար, այլև կրոն և ազգություն կրնան փոխել» /1888, N 1231/: Օտար կրթությանը դիմակայելու ամենալավ միջոցը հայկական դպրոցների մակարդակի բարձրացումն է: Այդ պատճառով էլ ժամանակի հանրային գործիչները իբրև հրամայական պահանջ առաջադրում էին Կ.Պոլսի «Կեդրոնական վարժարանի» ստեղծումը, որն իրականացավ 1888-ին և որի շրջանավարտներն առանց դժվարության կարող էին քննություն բռնել եվրոպական բարձրագույն դպրոցներում:

Դպրոցների վիճակը բարելավելու ամենաճիշտ ուղին ուսուցչական կադրերի մակարդակի բարձրացումն էր: Սակայն դա կարող էր իրականանալ ուսուցիչների սոցիալական վիճակը բարելավելով, նրանց պաշտպանվածությունը ուժեղացնելով: Այդ նպատակի համար անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ, որոնց խիստ պակասից միշտ տառապել են հայկական դպրոցները: Եվ քանի որ թուրքական կայսրության տարածքում բնակվող հայությունը, ի թիվս այլ հարկերի, վճարում էր նաև կրթական հարկ, խնբագիրը հարց է բարձրացնում, որ պետական գանձարանը իր բյուջեից միջոցներ տրամադրեր նաև հայկական դպրոցներին: Նա միամտաբար կարծում էր, որ եթե Ազգային ժողովը կամ պատրիարքարանը այդ հարցը բարձրացնեն կայսերական կառավարության առաջ, ապա հայկական դպրոցների ծախսերը կհոգա թուրք պետությունը /1884, N 184/: Սինչդեռ հենց 80-ականների կեսերից սկսվում է թուրքական կառավարության արշավանքը հայկական դպրոցների վրա, ուր, ի թիվս այլ խստությունների, արգելվում էր հայ ժողովրդի պատմության ուսուցումը:

Թերթը «Արծազանքից» արտատպում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի ուսուցիչ Նիկողայոս Քարամյանի «Տաճկահայոց դպրոցական վիճակը» հոդվածաշարը, /1889, N 1783/, որը մանրամասն վերլուծության է ենթարկում արևմտահայ դպրոցներում տիրող կացությունը, անդրադառնում դպրոցական ընկերությունների, քաղաքային, թաղական և գյուղական վարժարանների գործունեությանը:

«Արևելքը» տեղեկատվական բազմաթիվ հոդվածներ է տպում Կ.Պոլսի համարյա բոլոր թաղային վարժարանների, մասնավոր դպրոցների, գավառական աչքի ընկնող դպրոցների մասին: Կ.Պոլսի թաղային վարժարաններից խմբագրի զովեստին է արժանանում «Ղալաթիո կեդրոնական վարժարանը», որի «ձեռնհաս խնամակալությունը և ուսուցչական ընտրելագույն խումբը» ամեն ինչ անում են ազգի համար արժանավոր գավակներ դաստիարակելու գործին ի նպաստ:

Հուսալից հաստատություն է համարվում նաև Մեզպուրյան իզական վարժարանը, որի հիմնադիր Սկրտիչ էֆենդի Մեզպուրյանն իր տկար միջոցներով հանդգնում է մրցել Սկյուտարի ամերիկյան վարժարանի հետ և հաղթանակով դուրս գալ այդ մրցությունից:

Կ.Պոլսի Պերպերյան վարժարանը ևս զովեստով է հիշվում խմբագրի կողմից, գնահատվում է առաձնապես նրա հիմնադիր Ռ. Պերպերյանը, որն իր երիտասարդական օրերից եղել է «կրթական գործի համառ աշխատավորը»:

Լավագույն վարժարանների շարքին է դասվում նաև Օրթագյուղի Հռիփսիմյանց վարժարանը: /Արևելք, 1888, N 1378/:

Գովեստով նշվում և մեծարվում են հայ ազգային գործիչները, որոնք իրենց նվիրել էին մատաղ սերնդի հայեցի դաստիարակության գործին /Ռ. Պերպերյան, Հ. Գուրգենյան, Գ. Մատակյան, Մ. Սարղյան, Հ. Տուտուխյան և ուրիշներ/:

Արևմտահայ ընթերցողը ծանոթանում է արևելահայ դպրոցներին /Տփլիս, Երևան, Էջմիածին, Արցախ, Շամախի, Աստրախան և այլն/:

Գնահատելով արևելահայ դպրոցի համեմատաբար բարձր մակարդակը, խմբագիր Արփիարյանը իր քննադատական վերաբերմունքն է դրսևորում ցարական կառավարության՝ արևելահայ դպրոցի մասին ընդունած 1884թ. օրենքի նկատմամբ: Ըստ այդ ուղղման հայ ազգային դպրոցները, որ ենթարկվում էին

հայոց հոգևոր իշխանություններին, պետք է ենթարկվեին Կովկասի ուսումնական մասի վարչությանը, որի պետ Յանովսկին աչքի է ընկնում փոքր ազգերի նկատմամբ տածած անհանդուրժողական վարքագծով: Փաստորեն, այդ օրենքով աստիճանաբար շարքից դուրս էին գալու հայերեն դասավանդող ուսուցիչները, նրանք՝ «Կովկասու հայոց գլխավոր պարծանքը՝ ուսուցչական խումբը մահացու հարված ընդունած է»: Այդ օրենքն ստիպելու էր հայ ուսուցիչներին խաղալիք դառնալ ռուս հոգաբարձուի ձեռքին և կատարել նրա կամքը, «մի կտոր հացի համար կույր գործիք լինել Յանովսկիներու ամբերու մեջ», իսկ մյուս ազնվագույն մասին՝ հրաժարվել իր աշխատանքից: Արփիարյանը գտնում է, որ ցարական կառավարության գաղութային քաղաքականությունն իրականացնող «Դոնդուկով-Կորսակովների կետ նպատակն է այդ»: /Արևելք, 1884, N 163/:

Հիացմունքով և հպարտությամբ է գրվում Ս. Ղազար կղզում Մխիթարյանների բացած դպրոցի մասին, որը «արհամարհելով ամեն ձմեռ և ամեն կացին, կվերածլի և կվերընծյուղի»: Պատասխանելով ընդդիմախոսներին, Ա. Արփիարյանը ընդգծում է, որ Մխիթարյանները հայ պատանուն ներարկում են ոչ թե հռոմեադավան, այլ հայկական կրթություն: Հարգանքի տուրք է մատուցվում նրա պատվելի տեսչին՝ հայր Ալիշանին, որը մանկավարժական գործունեությունից բացի, տեղագրում է պատմական Հայաստանը, որ «երեկ Սիսվանը տվավ մեզ, վաղն Այրարատը պիտի տա»:

Մի այլ հոդվածում՝ «Ազգային տեսություն» խորագրով առավել հանգամանալից գնահատվում է Ալիշանի «հայերենագիտությունը, ցեղագրությունը և աշխարհագրության վրա յուր խղճամիտ մանրակրկիտ ուսումնասիրությամբ... յուր գրվածոց կուտա գորություն մը, զոր սոսկ գիտական գրիչ մը չկրնար ունենալ երբեք»: Բարձր է գնահատվում գիտնական Ալիշանը այդ բառի եվրոպական իմաստով: Սակայն դրա հետ մեկտեղ, քննադատվում են Մխիթարյան միաբանության այն անդամները, ովքեր գործիք դարձան «կրոնական փրովականդային» և վիճի բացեցին ազգի ու միաբանության միջև: /N 1895/

Մյուս կողմից գնահատվում է Մխիթարյանների ներդրումը հայագիտության մեջ, առանձնապես «հայկազյան բառգիրքը», որը «մեր հին մատենագրությունը ավերակներե հանելով՝ նոր

Գրականության և արվեստի հարցերը «Արևելքում»

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում գրականության և արվեստի զարգացման հարցերին նվիրված հոդվածները: Հրատարակության առաջին տարիներին «Արևելքը» դարձավ դեմոկրատ գրողների հավաքատեղի: Գրաքննության հետզհետե սաստկացման պայմաններում, գիրքը 80-ականներին դուրս էր մղվում հասարակական ասպարեզից, գեղարվեստական մտքի միակ հանգրվանը դառնում էին օրաթերթն ու հանդեսները: Ա. Արփիարյանի համառ ջանքերով և հոգածությամբ «Արևելքի» շուրջն է համախմբվում երիտասարդ շնորհալի գրողների մի բույլ, որը դառնում է 80-ականների արևմտահայ ռեալիստական գրականության ստեղծողն ու նրա տեսական դրույթները հիմնավորողը: Արփիարյանից բացի, այդ խմբի մեջ էին Տիգրան Կամսարականը, Լևոն Բաշալյանը, Մելքոն Կյուրճյանը, Հրանտ Ասատուրը, Գրիգոր Ջոհրապը և ուրիշներ: Արփիարյանը ղեկավարում էր գրական բաժինը: Նրա գրչին են պատկանում «Օրվան կյանքը» ընդհանուր խորագիրը կրող քրոնիկները, ստորագրված «Հրազդան» ծածկանունով, որոնք աչքի էին ընկնում ուժգին նպատակասլացությամբ, գրականության, արվեստի նորույթները գնահատելու, արժեքավորելու, հրատապ հարցեր բարձրացնելու ձգտումով:

Մինչև 80-ականները արևմտահայ գրական ասպարեզում իշխողը կլասիցիստական և ռոմանտիկ ուղղություններն էին: Վերը հիշված գրողները դրեցին կյանքը գրականության նյութ դարձնելու հրամայական պահանջը, պայքարելով այն տեսաբանների դեմ, որոնց համար գրականությունը պետք է ունենար ոչ թե ճանաչողական արժեք, այլ դառնար ժամանցի առարկա, մխիթարեր հուսահատ հոգիներին: Կյանքի բազմակողմանի ճանաչումը և նրա վերափոխմանը նպաստելը՝ պետք է դառնար գրականության հիմնական խնդիրը: Ըստ 80-ականների նոր սերնդի, գրողի հիմնական պարտքն էր բոլոր ուժերը ծառայեցնել կյանքի առաջընթացին: Գրողը պարտավոր էր կյանքը նկարագրել այնպես, ինչպես կա, իր ողջ բազմազանությամբ, ամենից առաջ բացահայտել ժողովրդի ամենափոքր, բայց կարևորագույն բջիջի

ընտանիքի, բարքերի անկման պատճառները: «Թող հայ վիպասանները... իրենց ոյուսիք գրիչներով ներկայացնեն մեզ մեր ընտանեկան վիճակը յուր բոլոր իսկության մեջ: Թող հոշոտեն մեր սրտերը, բայց հեղափոխեն մեր բարքերը» /1884, N. 39/:

Գրականությունը ժողովրդին պետք է ներշնչի ապրելու և հարատևելու կորով, իսկ այն ստեղծագործությունները, որոնք «ազգ մը տրտում կ'ապահեն, կ'հյուծեն զնա», դրվատանքի արժանի չեն: Այդ սկզբունքով էլ Արփիարյանը մոտենում է Հ. Սեթյանի «Հուզման ժամեր» ժողովածուին /1888, N 1389/: «Հուզման ժամեր» ժողովածուն Արփիարյանը բնութագրում է իբրև «տրտմության երաժշտություն», որը «ժողովուրդ մը ի գերեզման հուղարկավորելու նշանովն է»: Արփիարյանը քննադատում էր ժամանակի կին գրողների /մասնավորապես Ս. Տյուսաբի/ ստեղծագործությունները, որոնց հատկանիշը նրբությունն ու փափկությունն է, միմչդեռ, ըստ նրա, «գրականություն մը ջիղերու կարոտ է, կորովի պետք ունի, որ զորանա և զորացնե ժողովրդին միտքն ու հոգին, կին հեղինակները չեն կարող բնականաբար դրոշմել մեր գրականության այդ առնական դրոշմը»: /1884, N 3/ Տյուսաբի ստեղծագործությունները քննադատվում են նաև մի այլ տեսանկյունից: Տյուսաբն իր ստեղծագործություններում բարձրացնում է հայ կնոջ ազատագրության հարցը, առանց նրան ճանաչելու: Հայ կնոջ փոխարեն նա պաշտպանում է ֆրանսուհիների դատը, որովհետև ելնում է ժորժ Սանդի, տիկին Սթալի և Դյումա որդու ստեղծագործություններից: Տյուսաբը հեռու էր հայ կնոջ հոգսերից, նրա միջավայրից. «Հայ կինը հայ հողին վրա է, ով որ անոր դատը պաշտպանել կուզե, պետք է, որ նախ անոր կյանքը ուսուննասիրե՝ հետը ապրելով...»:

Հայացք նետելով արևմտահայ գրականության ամենամյա մեռքբերումների վրա, Արփիարյանն անդրադառնում է առանձին հեղինակների ստեղծագործություններին, նշում դրանց դրական և բացասական կողմերը: Առանձնապես սուր քննադատության է ենթարկվում Գ. Չիլինկիրյանի «Ուղևորություն ի Կ. Պոլիս» ստեղծագործությունը: Նշելով վերջինիս ծառայությունները ֆրանսիական գրականության ընտիր նմուշները արևմտահայ ընթերցողին թարգմանաբար ներկայացնելու գործում, Արփիարյանը միաժամանակ դատապարտում է նրան, որ սեփական ստեղծագործության մեջ նա չի նկարագրել հայ ժողովրդի տարբեր խավերի ներկայացուցիչներին: Նրա աչքից

վրիպել են և հայ կինը, և հայ երիտասարդությունը, և արհեստավորները: «Անուշադիր մեր ներքին կենաց, անուշադիր մեր զարգացման կամ հետադիմության... վերջապես ինչ-որ կյանքը կը կազմե, ինչ-որ ազդեցություն մը կհորինե, ամենն ալ անտես եղած են և գոյություն չունին Պ. Չիլինկիրյանի գրքին մեջ»: /1884.N 170/ Արփիարյանը խնդիր է դնում գրականության հերոս դարձնել ժողովրդի ներկայացուցիչներին, որոնք կազմում են «ազգության սիրտը», նրանք են ոսկերիչ, նավավար, ժամագործ, դերձակ, խանութպան, նրանք «անարգ արարածներ» չեն, այլ ողջ հանրությունը շաղախող հիմնական «խմորը»: Մի այլ հոդվածում Արփիարյանը դրվատանքով է արտահայտվում Միհրան Յովհաննիսյանի «Սփոփանք ռամկին» խորագրով ժողովածուի մասին, որի հեղինակը իր ստեղծագործությունների հերոսն է դարձրել բեռնակրին ու ձկնորսին, կոշկակարին ու ներկարարին, դարբնին ու հոտադին: «Բեռնակիրն ու ձկնորսը, ստնտուն ու բաղնեպանը, կոշկակարն ու ներկարարը Յովհաննիսյանի մտատանջության ու հոգածության առարկաներն են: Եվ որ գիրք ազգին ավելի օգտավետ, քան այն գիրքն է, որ կը ծայնե. «Ել, հայ գործավոր, գոտեպնդե, թող գոռան դարբնոցին մուրճն ու սալ, թող խեղդեն գանգատն ու տրտունջ»: /Արևելք, N 1389/:

Արփիարյանը չի երկմտում տարբեր առիթներով օգնել երիտասարդ հեղինակներին, վերլուծել նրանց երկերը, «գրադատականներ» գրել և սովորեցնել: «Ազգի մը կյանքը ժողովուրդն է, իմաստուն հայրենասերը ժողովրդին համար կխորհի, այդ ժողովուրդն երկրագործն է, արվեստավորն է, աշխատողն է, «անարգյալ ռամկին է»: Ըստ քննադատի, արևմտահայ գրողները պետք է ըմբռնեն այդ տարրական ճշմարտությունը և համոզվեն, որ իսկական գրականություն կարելի է ստեղծել միայն ժողովրդի կյանքից: Սակայն Միհրան Յովհաննիսյանը իր ստեղծագործությունը գրել է ժողովրդին ոչ պարզ, ոչ հասկանալի, այլ խրթին լեզվով. ու՜մ է հասցեագրել հեղինակն իր գիրքը. արդյո՞ք ռամկին, բայց նա անհաղորդ է այդ լեզվին: Ուրեմն բավական չէ այն հանգամանքը, որ ստեղծագործության նյութը ժողովրդի կյանքն է, պետք է այն գրված լինի նաև հասկանալի լեզվով, այլապես չի կարող կատարել իր վրա դրված պատմական առաքելությունը: Լևոն Բաշալյանը այդ նույն ժողովածուի մասին արտահայտում է ավելի խիստ կարծիք. հեղինակի քերթվածները համարելով կյանքից

հեռու ստեղծագործություններ: Ուրեմն, ռեալիստական գրականության համար կարևոր է ոչ միայն հերոսի ընտրությունը. «Իրապաշտությունը միմիայն ժողովուրդը, ռամիկը հետազոտության նյութ ընտրելու մեջ չկայանա, այլ պետք է իրապես անոր կյանքը պատկերացնել այնպես, որպես կտեսնենք իրականին մեջ և ոչ այնպես, որպես բանաստեղծը կերևակայե իր անուրջներուն մեջ» /1889, N 1562/:

Արևմտահայ ռեալիստական գրականության տեսակետից ուշագրավ երևույթ էր Տիգրան Կամսարականի «Վարժապետին աղջիկը» վեպի հրատարակությունն «Արևելքում» թերթին ձևով: Առաջին իսկ հատվածներից այն իր վրա գամեց ժամանակի գրականագետների ու գրողների ուշադրությունը, իսկ վեպի ավարտից հետո, հենց «Արևելքում» սկսեցին լույս տեսնել բազմաթիվ քննադատականներ /օրիորդ Նուրանիա, օրիորդ Մելանիա ծածկանուններով հանդես եկավ եղիա Տեմիրճիպաշյանը, Ջատիկ Չայկյան, Հրազդան, Դիմակ, Հակոբ Մեղավորյան, Հրանտ Ասատուր և ուրիշներ/: Նուրանիայի (Ե. Տեմիրճիպաշյան) հոդվածին պատասխանեց հեղինակը՝ Տիգրան Կամսարականը, որը տվեց ռեալիստական գրականության իր ընկալումները: Սահմանազատվելով նատուրալիստական ուղղությունից, նա գրում է «Իրապաշտությունը կբավականանա հանապազօրյա կենաց պարզ նկարագրությամբ և չիջնար յուր հետազոտության մեջ ընկերական շենքին ժահահոտ նկուղներն, ուր կդեգերի նյութապաշտությունը... Նյութապաշտ դպրոցը հաճախ հրեշ կհամարի մարդն, իրապաշտն հրեշին և հրեշտակին խառնածինը կնկատե զնա, այսինքն իրական մարդն» /1888, N 1297/:

Այնքան մեծ էր վեպի ազդեցությունը արևմտահայ գրական կյանքի վրա, որ «Արևելքում» — շարունակվեցին գրախոսությունները: Այդ բոլորի ամփոփումը եղավ երկու համարում շարունակաբար լույս տեսած Հակոբ Մեղավորյանի «Վարժապետին աղջիկին» քննադատներուն առթիվ» հոդվածը, որի մեջ հեղինակն ընդգծում է անաչառ քննադատության մեծ նշանակությունը գրականության զարգացման համար: «Մշակված քննադատությունը հեղինակի գրչին թռիչք կուտա, հայիոյանքը կիսմրեցնե զայն, իսկ անմիտ գովեստը կբթացնե: Զննադատությունը միշտ մեծ դեր ունեցած է հանճարներուն զարգացման գործին մեջ»: /1888, N 1449/:

ընդգծվում է արևելահայ գրական կյանքը, ուր գրաքննադատությանը, ըստ Սեղավորյանի, գտնվում է բարձր մակարդակի վրա: Ուստի նպաստել է արևելահայ գրականության զարգացման վրա: Իսկ Կ. Պոլիսը, դարձյալ, ըստ քննադատի, չունի լավ գրողներ, որովհետև «լուրջ քննադատություն չկա մեր մեջ. գրադատներ չունինք»: «Գրադատությունը գրականության մեկ նշանավոր ճյուղն է», կարծում է հոդվածի հեղինակը, ինքը տալով ճշմարիտ «գրադատի», գրաքննադատի բարձր օրինակ, վերլուծելով ոչ միայն Կամսարականի վեպը, այլև նրա մասին մոտ 20 լրագրական հոդված-գրախոսությունները: Անդրադառնալով Նուրանիայի, օրիորդ Սելանիայի /Ե. Տեմիրճիպաշյանի/, Դիմակի, Ջատիկ Չայկյանի հոդված քննադատավարներին, Սեղավորյանը բարձր է գնահատում Յրագրան-Արփիարյանին, որը «ընդունակ է լավ գրադատ լինելու» և Յակոբ Պարոնյանին, որն «ազնվորեն կգրե»: /N 1449/: Սեղավորյանը ևս շարադրում է իր սկզբունքները գրականության ռեալիստական ուղղության վերաբերյալ, քննադատում է Ս. Պալասանյանին /Գրիչ/, որ «Փորձի» մեջ գրում էր, թե մեր կյանքից վերցրած թեմայով հնարավոր չէ վեպ գրել, քանի որ մեր կյանքն աղքատ է. «Կյանք ամեն տեղ կա, ճոխ, թե աղքատ: Վեպը կյանքի պատկերն է, գրականությունը կենաց պատմությունը: Որչափ գրականությունը իրական կյանքի նմանի այնչափ հաջողած կհամարին վեպն: Ուրեմն ամեն կյանքն կարելի է վեպ գրել. Մի՛թե կյանքը վեպ չէ»: Եվ քանի որ «Վարժապետին աղջիկը» արևմտահայ գրականության առաջին հաջողված փորձն էր վիպագրության ասպարեզում, քննադատները բարձր են գնահատում այդ ստեղծագործությունը, որի հեղինակը «իբրև իրապաշտ դպրոցի ճշմարիտ աշակերտ» իր հերոսներին խոսեցնում է յուրաքանչյուրին հատուկ կենդանի լեզվով. «այն լեզվի մեջ կյանքը կեռա և կենդանություն կբուրե անկե»:

Արփիարյան-Յրագրանը ամփոփում է Կամսարականի «Վարժապետին աղջիկը» վեպի վերաբերյալ արտահայտած կարծիքները: Վեպի գլխավոր հատկանիշը համարելով կորով ներշնչելը, նա ընդգծում է նաև այն տխրությունը, փափկությունը, զորովը և գուրջը, որ հատուկ են նրան, բայց ոչ իբրև հոռետեսություն, այլ կենսասիրություն: Գտնելով, որ Կամսարականին հաջողվել է թափանցել գեղարվեստական գրականության գաղտնիքների մեջ, խմբագիրը համաձայնվում է Մարկոս Ալարեկյանի՝ Կամսարականի մասին արտահայտած

կարծիքի հետ. «Ինչպե՞ս ժողովրդի լեզուն, ժողովրդի հոգին կփայլի այդ վեպին մեջ... Մեր Աբովյանը պիտի լինի: Մենք այլ բան մը պիտի ցուցնենք ռուսահայոց: /Արևելք, N 1338/:

80-ականների արևմտահայ գրականության մեջ իշխողը եղավ առավելապես նորավեպը /նովելը/: Այդ ժանրի մեջ անգերազանցելի էր Գր. Չոհրապը: Արևմտահայ քննադատները ըստ արժանվույն գնահատեցին Չոհրապին. «Երկաթե նկարագիր, խիզախ և անվեհեր գրող, փառավոր հայտնություն եղավ մեր գրականության համար... Ինքնատիպ ոճ, համակ գորություն և կորով», - այդպես բնութագրեց Յրանտ Ասատուրը արժեքավորելով Չոհրապի «Անհետացած սերունդը» և նովելները:

Չոհրապի գնահատականը շարունակվում է նաև գրադատական մի աշխատության մեջ՝ «Հայ գրական Պառնաս» խորագրով, որի հեղինակն է Գասպար Նեմցեն: Այդ աշխատության մասին գրախոսական է տպվում «Արևելքում», ուր առավելապես գնահատվում է Չոհրապը, ոչ թե նրա մասին գրված աշխատությունը: Տրված է Չոհրապ գրողի նկարագիրը, որը գրական հրապարակ է իջնում «մարտնչելու ու մաքառելու անիրավությանց բույնին դեմ»: Համարձակախոս, ուղղախոս, հանդուգն ու աներկյուղ այդ գրողը խորությամբ ուսումնասիրել է ազգի կյանքը, մարդկային կրքերի ու հուզումների անեզր ու անվերջանալի շրջանը և իր հերոսները դարձրել տարաբախտ ներսեսներն ու անհետացած սերունդները: Եվ քանի որ նրա ստեղծագործությունը ժողովրդի կյանքի արտացոլումն է, ուրեմն՝ անմեռ է հեղինակը: «Իրապաշտ» դպրոցի այդ հեղինակը /ռեալիստական ուղղության մասին է խոսքը/ «անհատի պատկերեն ավելի ազգի մը պատկերը կրելու է և մարդու մը կյանքեն ավելի ժողովրդյան մը կյանքը ներկայացնելու է», այդ պատճառով էլ նա անմեռ է իր պատկերած ժողովրդի նման:

Ահա իսկական գրողի գնահատականը: /N 1583/:

Արևմտահայ առանձին գրողների մասին հողվածներից բացի «Արևելքում» լույս են տեսնում ամփոփիչ տեսություններ, որոնք տալիս են արևմտահայ գրականության ամբողջ տարվա (1888-ի) գրական զարգացումները: Այդ առումով ուշագրավ է Լևոն Բաշալյանի «Թուրքիո հայ գրականությունն 1888 տարվան մեջ» վերտառությամբ հողվածը /N 1562/: Ժխտելով արևմտահայ գրականության զարգացման վերաբերյալ ողբերն ու երեմիականները, որոնք նվնվոցով և հուսահատությամբ

հայտարարում էին, որ անցյալի զարգացած և ճոխ արևմտահայ գրականությանը հաջորդել է դարի վերջի անկումը, Լևոն Բաշալյանը սթափ մտքով և փաստերով ապացուցում է, որ 19-րդ դարի 80-ականների արևմտահայ գրականությունը մտել է զարգացման նոր փուլ և «գրական ճաշակը կդիմե կատարելության» /N 1562/: Հին ճոռոն ճամարտակություններին հաջորդում են նոր գրվածքներ, որոնց մեջ «կյանքը կթրթռա իր բովանդակ ճշմարտությամբ և զորությամբ»: Նոր քայլեր կատարող գրական շարժման առաջամարտիկներն, ըստ Լ. Բաշալյանի, Եղիա Տենիրճիպաշյանն ու Արփիար Արփիարյանն են: Առանձնապես շեշտվում է Տիգրան Կամսարակյանի «Վարժապետին աղջիկը» վեպը, որպես նոր երևույթ արևմտահայ գրականության մեջ, գրական այդ ժանրի հաստատման փաստը: Բարձր գնահատականի է արժանանում Գրիգոր Չոխրապն իբրև արևմտահայ գրականության վերջին տարիների ամենատաղանդավոր գրողը: Փաստորեն, Արփիարյան-Կամսարակյան-Չոխրապ եռյակը դասվում է արևմտահայ գրականության ընտրանիի մեջ:

Քննարկելով նոր բանաստեղծների տարբեր ժողովածուներ, Բաշալյանը կարևոր բնորոշում է տալիս իրապաշտական գրականությանը: «Իրապաշտությունը միմիայն ժողովուրդը, ռամիկը հետազոտության նյութ ընտրելու մեջ չկայանա, այլ պետք է իրապես անոր կյանքը պատկերացնել այնպես, որպես կտեսնենք իրականին մեջ և ոչ այնպես, որպես բանաստեղծը կերևակայե իր անուրջներուն մեջ»:

Կատարելով քննադատի իր ծանրակշիռ գործը, Բաշալյանը քննարկում և արժեքավորում է նաև պատմական (Բ. Քեչյանի «Պատմություն Ս. Փրկչի հիվանդանոցին»), բժշկական (Վահրամ Թորգոմյան «Դիեցում»), մանկավարժական (Զ. Տեր-Վրթանեսյան «Դպրոցական կարգապահություն») աշխատությունները և ամփոփում 1888-ի ստեղծած ողջ արժեքները, նշելով որ գրաքննության պատճառով աստիճանաբար պակասում է գիրքը և գրական ստեղծագործությունների հիմնական հրատարակության վայրը դառնում է օրաթերթը:

Քեչյանի աշխատության մասին գրվում են մի քանի զրախոսություններ. տարբեր գրադատներ տարբերակված գնահատական են տալիս դրան: Բաշալյանը քննադատական մոտեցում է ցույց տալիս այդ գործին, նշելով, որ պատմությունը ոչ

թե դեպքերի ու պատահարների չոր ու ցամաք շարք է միայն, այլ «պատմության իմաստասիրությունն, ընկերական հեղմանց ու բարոյական կերպարանափոխությանց վերլուծում»- ահա հենց դա է, որ պակասում է Բ. Բեչյանին: Եթե դա լիներ գրքի մեջ, նրա արժեքը անհամեմատ կբարձրանար:

Այդ հողվածից առաջ «Արևելքում» հանդես է գալիս Բյուզանդ Բեչյանը, որը ընթերցող հասարակությանն է ներկայացնում իր աշխատությունը, այն համարելով ազգային պատմության էական մասերից մեկը և ըստ երևույթին, ելնելով գրաքննական տեսանկյունից, վերամբարձ խոսքերով շնորհակալություն է հայտնում սուլթան Սահմուդին, Աբդուլ-Մեջիդին, Աբդուլ-Ազիզին և նույնիսկ Աբդուլ-Չամիդին: /N 1291/: Բեչյանի աշխատությունը բարձր է գնահատվում մասնագիտությամբ բժիշկ, ազգային-հասարակական գործիչ Չարություն Թիրյաքյանի կողմից, որը «Արևելքում» լույս տեսած բաց նամակով շնորհակալություն է հայտնում հեղինակին Ս. Փրկչյան հիվանդանոցի պատմությունը գրելու համար, գտնելով, որ այն «Ազգին կեսդարյա ընդհանուր պատմության անբաժանելի մասն է»: /N 1330/:

Առավել խիստ հարցադրումներով է հանդես գալիս Չրանտ Ասատուրը Բեչյանի աշխատության մասին գրախոսականի մեջ: Չամեմատելով Ավ. Պերպերյանի «Չայոց պատմություն» ուսումնասիրության հետ հեղինակը գտնում է, որ նրա մեջ էլ կան ազգային պատմության շատ մութ կողմեր, որոնց մի մասը, ինչպես բարեգործական հաստատությունները, լուսաբանվում են Բեչյանի կողմից: Դրվատելով Բեչյանին Ազգային հիվանդանոցի պատմությունը գրելու համար, միաժամանակ շատ խիստ և պահանջկոտ խոսքեր է ուղղում նույն Բեչյանին, որին առավելապես հետաքրքրում են Նապոլեոն Բոնապարտի մղած ճակատամարտերը, Ջուլյի վեպերը, որը «Արևելքում տասից ավելի խմբագրական հողվածներ նվիրեց գերմանական Վիլհելմ Ա կայսրին, մինչդեռ «գրեթե տող մը չգրեց Շիշմանյանի մասին և հակիրճ հողվածներ միայն հրատարակեց Օտյանի պես ազգային գործիչներու վրա»: /N 1350/: Չրանտ Ասատուրը հարց է բարձրացնում արևմտահայ մտավորականության առաջ ուսումնասիրել հայ տպագրության, բարենպաստակ ընկերությունների, հայ թատրոնի պատմությունը և աշխատություններ նվիրել այդ հարցերին: Բայց քանի որ հայ

ուսումնասիրողը սոցիալապես անապահով վիճակում է գտնվում, Ասատուրն առաջարկում է ստեղծել «Ազգային պատմության ընկերություն», որի նպատակը լինի նախապատրաստել և իրականացնել «հայոց ժամանակակից կամ հին պատմության զանգան ճյուղերուն վրա» աշխատություններ: Դա փաստորեն աշխատանքի ծրագիր էր:

Արևելքի» ուշադրության կենտրոնում է նաև արևելահայ գրականությունը: Բարձր է գնահատվում Խ. Աբովյանն իբրև արևելահայ նոր գրականության և աշխարհարաբար լեզվի հիմնադիր, նշվում Պ. Պոռոչյանի ստեղծագործությունը իբրև արևելահայ գյուղացու կյանքի ռեալիստական արտացոլում: Ա. Աբփիարյանը, Լ. Բաշալյանը, Կ. Տյուրյանը հանդես են գալիս «Արարատյան գրականություն», «Երևույթներ ռուսահայոց հասարակական աշխարհին» /1888 N 1340, 1388/ ընդհանուր խորագիրը կրող հոդվածներով, անդրադառնում արևելահայ գրականության զարգացման տենդենցներին, քննարկում Շիրվանզադեի նոր գործերը, տալիս արևելահայ մամուլի, մասնավորապես «Մշակի» և «Մուրճի» տեսությունը: Հատկանշական է այն խորը հանգանքն ու ակնածանքը, որ տածում է 80-ականների «Արևելքը» Գրիգոր Արծրունու և նրա «Մշակի» նկատմամբ: Հատուկ հոդվածներ են նվիրվում Գրիգոր Արծրունուն, նրա կատարած գործին, արժեքավորում «Մշակի» ներդրած ավանդը, նշում համայն հայության, առանձնապես կովկասահայության անչափելի հարգանքը նրա նկատմամբ: 1890թ. մայիսի 6-ին ամբողջ կովկասահայությունը առանձնահատուկ շուքով նշում է Գրիգոր Արծրունու գրական գործունեության 25 ամյակը: Այդ առիթով «Արևելքը» հրատարակում է Կ. Տյուրյանի «Գրիգոր Արծրունի» հոդվածը /N 1889/, որտեղ հեղինակը իրավացիորեն հայտնում է, որ արևելահայ մամուլի պատմության մեջ մինչև այդ ժամանակները ոչ մի լրագիր չի ստանում այն դիրքին և ձեռք չբերեց այն ազդեցությունը, ինչ «Մշակը»: Հոդվածի մեջ առանձնակի գնահատվում է, որ Արծրունու թերթը չչողոքորթեց հարուստներին, չվարանեց խարազանել հոգևորականների զեղծումները, հավատարիմ մնաց իր սկզբունքներին և «Հյուսիսափայլից» հետո դարձավ հայ իրականության ամենաառաջադիմական լրագիրը: «Մշակական» ուղղությունը հեղինակը բնորոշում է չորս կետերով.

1. Մշակը անվախ և անաչառ խարազանում է մեր ժողովրդի

«պակասությունները», 2. Պաշտպանում է կանանց ազատության և իրավահավասարության հարցը, 3. Խտրություն չի դնում հայության կրոնական դավանանքների մեջ և 4. Մեծ ուշադրություն է դարձնում հայության կրթության վրա: Գոգուտ արևմտահայերի «Մշակը» հավաքել է 100 հազար ռուբլի և ուղարկել «Միացյալ ընկերությանը»: Փաստորեն արժեքավորում է «Մշակի» կատարած դերը արևելահայ հասարակական կյանքում, ներկայացնում նրան իբրև «Հյուսիսափայլի» և Նալբանդյանի ավանդույթների շարունակող:

Աննախադեպ է այն ժողովրդականությունը, որ արևմտահայերի շրջանում վայելում է վիպասան Րաֆֆին: Ա. Արփիարյանը նկարագրում է իր վերադարձը Արևելյան Հայաստանից .«Տեսար Րաֆֆին, խոսեցար հետը, ինչպե՞ս մարդ է, ի՞նչ կընէ: Սինչև իսկ կային այնպիսիք, որք երանի կկարդային այն աչաց, որք արժանի եղած էին հայ վիպասանը տեսնելու: Որպիսի փոփոխություն ժամանակի: Ատեն մը նոցա համար էին երանիները, որք Ա. Գեղարդն յեջմիածին համբուրած ի տուն կդառնային...»:

Արփիարյանը համոզում է խմբագրության անդամներին «Արևելքում» արտատպել Րաֆֆու երկերը: Սակայն դրանց հակապետական ոգին կարող էր պատճառ դառնալ թերթի խափանման: Փորձ է կատարվում, որպես թերթոն, լույս ընծայել «Խաչագողի հիշատակարանը» /Արևելք, 1884, N 24-155/, այն վերջանում է հաջողությամբ: Կառավարությունը ուշադրություն չդարձրեց: Զաջալերված Արփիարյանը ձեռնարկեց «Խամսայի մեկիքությունների» տպագրմանը, որը նույնիսկ Արևելյան Հայաստանում հանդիպել էր մեծ դժվարությունների. «Կովկասու գրաքննությունը արդեն հաշմած է այդ շատ պատվական երկը: Մենք ալ մեր կարգին կհանդիսանանք ավելի խիստ գրաքննիչ մը. իրավ է, ձեռքերնիս առաջ չէրթար, բայց զայս կպահանջե անհրաժեշտ հարկը»: /1884, N 289/: Այդ գործի հրատարակությունը արևմտահայ ընթերցող հասարակության վրա կարող էր կատարել հեղափոխիչ դեր, հուշել, թե ոչ շատ վաղ անցյալում հայերն ունեցել են կիսանկախ իշխանություններ /մեկիքություններ/ և դրդել վերականգնել դրանք: Կառավարության ուշադրությունը շեղելու նպատակով «Խամսայի մեկիքությունները» լույս տեսան վերապատմած ձևով: Սակայն այն չվրիպեց կառավարության ուշադրությունից և արգելվեց գործի հրատարակությունը մինչև

վերջ: Բարեբախտաբար, շարադրանքի մեծ մասը արդեն լույս էր տեսել:

Բաֆֆին արժեվորվում է ոչ միայն իր ստեղծած պատմական ստեղծագործություններով, այլև ազգի տաղանդներու ստեղծող մը միանգամայն»: Ըստ Արփիարյանի, այն գրողները, որոնք խոսում են ժողովրդի սրտի հետ և նրա հոգեկան պահանջների թարգմանն են դառնում «արդեն ժողովրդի տերը կը համարվին» /N 1338/: Դրանով է պայմանավորված այն անհուն վիշտը, որ արտահայտեց ոչ միայն կովկասահայությունը, այլև արևմտահայությունը, որն իր ներկայացուցիչներն ուղարկեց Թիֆլիս Բաֆֆու թաղման ծիսակատարությանը մասնակցելու համար: Հրազդան-Արփիարյանը գտնում է, որ Բաֆֆու հայտնագործությանը և իբրև գրող ձևավորելուն մեծապես նպաստել է «Մշակը»: «Օր մը մեր ժամանակակից կյանքի պատմագիրները պիտի գրեն, թե ինչ մեծ ահագին ներգործություն ունեցան մեր կյանքի, մեր զարգացման վրա «Մշակ» և «Բաֆֆի» /1338/: Այդ երկու անձնավորությունները նոր դարազուլիս բացեցին հայ գրականության համար ընդհանրապես և հայ վիպասանության համար մասնավորապես: Ըստ հոդվածագրի նրանք են խթանել ոչ միայն արևելահայ գողների /Շիրվանզադե, Լեո և ուրիշներ/, այլև արևմտահայ երիտասարդ գրողների՝ Գրիգոր Չոիրապի և Տիգրան Կամսարականի հանդես գալուն և ստեղծագործելուն: Փաստորեն, այդ նկատառումներով Արփիարյանը հայ գրականությունը քննարկում է իբրև միասնական մի երևույթ, ոչ թե անջատում երկու հատվածների:

1880-ականներին «Արևելքը» իր էջերում հյուրընկալում է բազմաթիվ նոր դեմքերի, փաստորեն արևմտահայ գրականության զարգացումը այդ ժամանակ սերտորեն կապված էր նաև այդ թերթի հետ: Մեր թվարկած գրողներից բացի, «Արևելքի» էջերում իրենց ստեղծագործություններն են տպագրում Ա. Չոպանյանը, Հ. Տուտուխյանը, Գ. Կարապետյանը, կին գրողներ Վարսանույշը, Անայիսը և ուրիշներ:

90-ականներից փոխվում է թերթի ուղղությունը Այդ տասնամյակում Արփիարյանը իր գրական զինակիցներով վերջնականապես սահմանազատվում է «Արևելքից» և առանձնանում «Մասիս» գրական հանդեսում և «Հայրենիք» օրաթերթում: «Արևելքի» շրջադարձը երևում է գրականության նկատմամբ ունեցած վերաբերմունքից: Մի փոքրիկ փաստ. 80-

ականների կեսերին Եվգինե Օտյանը հայերեն է թարգմանում Գալեվիի «Աբբա Քոնսթանթին» վեպը, որի առաջաբանը գրում է Գր. Օտյանը, այդտեղ հիմնավորելով իր կարծիքը գրականության, վեպի մասին, իբրև սփոփող, կյանքի դժվարություններից հեռացնող և մխիթարող գործոն: 1885-ին Արփիարյանը «Արևելքում» մերժում էր Գր. Օտյանի այդ տեսությունը, «Երբ Օտյան էֆենդի կը հայտարարե, թե «վեպն ինչու՞ է, որպեսզի մարդը մխիթարվի իրականութենե», այդ վճիռ կրնա՞նք իբր անհերքելի ճշմարտություն ընդունիլ: Մխիթարությունը վերջին ապավենն է անոնց, որոնք իրենց ցավերուն այլևս դարման չեն կրնար հուսալ. արդի՞ վիպասանությունը չուզեր վշտերու սփոփանք հայթհայթելով միայն շատանալ... Սուրբ պարտականություն է աշակերտել իրականության: Պետք է, որ հայ երիտասարդությունը այդ պարտականությունը կատարե»: Ուղիւ 10 տարի անց, 1895-ին «Արևելքի» երկրորդ խմբագիր Տիգրան Արփիարյանը նորից է անդրադառնում «Աբբա Քոնսթանթինին» այս անգամ ներկայացմանը և իր լիակատար համաձայնությունը հայտնում Գր. Օտյանին, գրականության կոչումը գտնելով կյանքից հեռացնելու, անուրջների գիրկը ընկնելու մեջ: «Եւ այն տպավորությունը կուտա ներկայացումն ալ, որուն մեջ մաքուր ու սփոփարար շունչ մը կա, որ գոնե քանի մը ժամ մոռցնել կուտա տպավորությունը տգեղ բարքերու ու աղտոտ զգացումներու, զորս իրականությունը, վեպն ու թատրոնը իրարու ձեռքեն կլլեն հիմակ»: Այս խոսքերով փաստորեն անհամաձայնություն և դժգոհություն է արտահայտվում գրականության ռեալիստական ուղղության նկատմամբ, որի կոչումն էր կյանքը պատկերել ինչպես կա, դրդել մարդուն վերափոխել այն, գրականության մեջ բարձրացնել հասարակական հնչեղություն ունեցող հարցեր:

«Արևելքը» իր գոյության ողջ ընթացքում համարյա բոլոր թվերում հողվածներ է նվիրել հայ թատրոնի պատմությանը, ժողովրդի կյանքում խաղացած նրա դերին, անցած ուղուն, նրա նվիրյալների, առանձնապես Պետրոս Աղամյանի, դերասանուհիներ Մարի Նվարդի և Աստղիկի կերտած կերպարներին /N166/: Զննադատվում է Մնակյանը, որը իր ողջ գործունեությունը նվիրել է թուրքական թատրոնի զարգացմանը, իսկ հայ թատրոնի հոգսերը մնացել են Աղամյանի և Մաղաքյանի ուսերին: Արժևորվում է թատրոնն ընդհանրապես իբրև ժողովրդի մեջ մշակույթը զարգացնելու առաջին գործոն. «Թատրոնը ամենեւն

հզոր, զի ամենեն ժողովրդական միջոցն է լեզու մը կոկելու, մշակելու և տարածելու» /N 1639/: Այդ դիրքերից գնահատվում է Կ.Պոլսի հայ թատրոնի անցած ուղին, նշում «Քուռիե տ' Օրիոնի» /Ֆրանսերեն լրագիր/ տված գնահատականը. «Չայք երեք տարվա մեջ գրեթե նույն չափ յառաջ գնացին քաղաքկրթության շավղին մեջ որչափ ուրիշ ազգեր՝ 50 տարվա մեջ: Չայ դերասանության ամենեն անաղարտ փառքերեն մին՝ Ադամյան» /N1756/: Գուցե մի փոքր չափազանց էր ֆրանսիական լրագրի՝ հայ թատրոնին տված գնահատականը, մեր կարծքով տեղին են Ադամյանի մասին ասված խոսքերը: «Արևելքը» արևմտահայ թատրոնի զարգացումը իրավացիորեն կապում է Կ. Պոլսի հետ, նշում, որ Արևմտահայ գավառը /այսինքն բուն Արևմտյան Չայաստանը/ չի ունեցել պրոֆեսիոնալ թատերախմբեր, տեղերում եղել են վարժարանային կամ աշակերտական մակարդակի: Չամանման մոտեցում է ցուցաբերում նաև արևելահայ թատրոնի զարգացման ուղին լուսաբանելիս /N1820/: Արևելահայ թատրոնի զարգացումը կապվում է նախ և առաջ Թիֆլիսի հետ, իսկ նրա ամենակարկառուն ներկայացուցիչը, հեղինակի բնորոշումով, «արևելահայ ժողովրդական թատերգության հիմը կծգվեր շնորհիվ Գ. Սունդուկյանցի»:

Ազգային-ազատագրական շարժումները և «Արևելքը»

Չետագա շրջանի «Արևելքի» և ոչ թե առհասարակ «Արևելքի» պահպանողականությունը առավել ընդգծվում է ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ ունեցած դիրքորոշումներով: Եթե 80-ականների կեսերին առաջավոր մտավորականությունը, ինչպես նշեցինք, ցանկանում էր անգամ գրականության ազդեցությամբ հեղաբեկել մարդկանց մտքերը, կասկած հարուցել օտար լծի հարատևության նկատմամբ, ապա 80-ականների վերջին այդ խումբը հեռանում է Արևելքից, ասպարեզը մնում է առավել գործարար, Բ Ղռան հետ հարաբերություն պաշտպանող գործիչներին: Դրանց ներկայացուցիչն է դառնում թերթի խմբագիր Բյուզանդ Քեչյանը. Դատապարտելով ազգային հեղափոխական ելույթները, վրդովվելով «անխոհեմ» հայերի եվրոպական երկրներում հրատարակած հակաթուրքական հողվածների առթիվ, դրանք

Ներկայացնելով իբրև սադրիչ երևույթներ, խմբագիրը հույսը կապում է «բարեխնամ սուլթանի» հայանպաստ հայտարարությունների հետ, գտնելով, որ նա ի վիճակի է երկրում կարգ ու կանոն հաստատել: Հայերը, ըստ խմբագրի, դարեր շարունակ եղել են հավատարիմ հպատակներ և օսմանյան կառավարությունը ի դեմս հայերի տեսել է իր վստահությունը վայելող ազգի. «Տերության վստահությունը այն առանցքն է, որովրա կդառնան մեր ազգային գործեր, երբ առանցքը կխանգարի», ազգային գործերն ալ բոլորովին անգոհացուցիչ վիճակի մեջ կմատնվին» /1888, N 1215/: Այդ պատճառով էլ մի քանի անգամ նույն խորագիրը կրող հոդվածներում՝ «Վեհափառ սուլթանն ու հայ ազգը», մեղադրելով գավառի թուրք պաշտոնյաներին, որոնք վիրավորելով հայության կրոնական զգացումները, զենք որոնելու պատրվակով խուզարկել են տեղի վանքերը, այդ թվում Վարազա վանքը, խմբագիրը գովերգում է արդարադատ սուլթանին, որը մեղավորներին պատժելու համար ազգային խտրություն չի դնում. նրա համար միևնույն է , թե հանցագործը ինչ անունով է կոչվում Մեհմետ թե Գրիգոր, կարևորը հանցագործությունը արգելելն է : Սակայն բազմաթիվ ձերբակալությունները գավառներում, խուզարկությունները Կարինում, ընդհարումները տեղի հայ բնակչության և թուրք ոստիկանության միջև, մեկ ամիս անց Գում-Գափուի ցույցը Կ.Պոլսում օտարերկրյա դեսպանների աչքի առաջ, ստիպում են Քեչյանին փոխել իր կարծիքը Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակի վերաբերյալ: Տպելով պաշտոնական զեկուցագիրը Գում-Գափուի ցույցի, նրա մասնակիցների կազմի և նրանց տված տարբեր պատժաչափերի մասին, Բ.Քեչյանը բանակրիվ է սկսում թուրքական պաշտոնական օրգանների՝ «Միզանի» և «Թերճիմանը հագիզաթի» դեմ, մատնանշելով, որ Արևմտյան Հայաստանի գավառներում տարվում է նպատակասլաց հակահայկական քաղաքականություն, որը հետապնդում է Հայաստանը հայերից դատարկելու միտումներ: Թուրքական լրագրերը ժխտում էին Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կատարելու անհրաժեշտությունը, նշում, որ այդ բարենորոգումները պետք է անցկացվեն օսմանյան կայսրության ողջ տարածքում, և հայկական գավառների համար առանձնաշնորհումների կարիք չկա: Թուրքիան համեմատելով եվրոպական երկրների հետ, թուրք խմբագիրները ցանկանում են ապացուցել, որ միշտ էլ բազմաթիվ

ոճրագործություններ են կատարվում ինչպես Լոնդոնում և Փարիզում, այնպես էլ ողջ Թուրքիայում: Դրան «Արևելքի» խմբագիրը պատասխանում է, որ հայկական նահանգներում կատարվող ոճրագործությունների մեծ մասը ուղղված է ազգությամբ հայ մարդկանց դեմ, հետևապես, դրանք կրում են քաղաքական բնույթ: Միևնույն ժամանակ, խմբագիրն իր անհամաձայնությունն էր արտահայտում հեղափոխական վերափոխումներին, ժխտում ազգային-ազատագրական շարժումները և պահանջում վերափոխումներ կատարել վերևից: Խմբագիրը բողոքում էր, երբ թուրքական «Միզանը» հայերին վերագրում էր անկախ պետականություն կամ ինքնավարություն ստեղծելու ցանկություն և վախեցած հայտարարում էր. «Հայոց փափաքը կենաց, պատվո և ընչից ապահովություն, բարեկեցություն և խաղաղ զարգացումն է քաղաքակրթության շավղին մեջ, և ապահով են, թե այս բարիքը կրնան միշտ վայելել ընդ գերիշխան հովանավորությամբ և պաշտպանությամբ իրենց վեհապետին...» /1890, N 1960/: «Միզանի» մեկ հոդվածը Մայր եկեղեցվո դեպքին առթիվ», «Միզանի» մեկ նոր հոդվածը Մայր եկեղեցվո դեպքին վրա» /N 1971/ «Միզան», Թերճիմանը հագիգաթ և իրենց հակասությունը» /N 1975/, «Լիբերթե լրագիրը և Կարնո դեպքը» /N 1976/, «Թերճիմանը հագիգաթ, հայք, քուրտք և Ղերսիմ», /N 1976/ , «Թերճիմանը հագիգաթի հայացքը քուրդ ցեղերուն վրա», /N 1977/, «Քաղաքակրթություն քրդաց և բարեկարգություն քրդաբնակ վայրյաց», /N 1978/, «Թուրք մամուլ և ավազակությունը ու ոճրագործությունը յեվրոպա և յԱսիա», /N 1980/ «Մյուսթեվելիի հայացքը բարեկարգությանց խնդրույն վրա» /N 1983/, խորագրերով հոդվածները գրվում են Գում-Գափուի ցույցը թուրքական թերթերում հակաօրինական, հակապետական քայլ գնահատելու փորձերի դեմ: Այս հետաքրքիր բանավեճը բացահայտում է խմբագիր Բ. Զեչյանի ապրած հակասությունները հայերի ազգային-ազատագրական ձգտումների նկատմամբ: Ընդվզելով թուրք լրագրողների դեմ, միաժամանակ, խմբագիրը հավատարիմ է մնում իր իսկ նախանշած՝ «օբրոդյունիստ» ուղղությանը, խարազանում է հայազգի «անխոհեմ, սակավաթիվ անձանց» քայլերը «օրինականության» և «բարեխնամ» սուլթանի դեմ. մի կողմից արդարացնում է հայ ժողովրդի ձգտումը իր ազգային ինքնությունը պահպանելու և իր պատմական հայրենիքում ապրելու հնարավորություն ձեռք բերելու համար,

մյուս կողմից, հետ է մղում թուրք խմբագիրների հարձակումները, որտեղ «անխոհեմ արարքները» վերագրվում են ողջ հայությանը, իսկ Քեչյանը նրան ներկայացնում է իբրև օսմանյան հայրենիքի հավատարիմ հպատակ:

Գում-Գափուլի ցույցից երեք ամիս հետո /հոկտեմբերի 11-ին/ ձերբակալվեցին «Արևելքի» արտոնատեր Ս.Տամատյանը և «Մասիս» շաբաթաթերթի խմբագիր Ա.Արփիարյանը: Արտոնատերը որոշ ժամանակ անց, իսկ Արփիարյանը 1891-ի հունվարին 73 այլ ձերբակալվածների հետ, ազատվեցին: Այդ դեպքը վճռականապես խզեց նրանց հարաբերությունները: Ազգային հեղափոխական այդ շարժումները իրենց ազդեցությունը թողին մտավորականության վրա: «Արևելք», որ տիրապետող միակ վառարանն էր կը կրե արտաքին խմորումներու ազդեցությունը: Անոր վարչության անդամներեն ոմանք դեպի ձախ կը հակին և նույնիսկ հեղափոխական կազմակերպությանց հետ հարաբերություններ կը մշակին, մինչ ուրիշներ հետզհետե ավելի աջ ու պետական ազնվապետական նկատումներով կը շարժին», այդպես է բնութագրում թերթի վարչության երկփեղկունը Ա.Ալպոյաճյանը¹: Վարչության երկփեղկունը պատճառ է դառնում, որ Բ.Քեչյանը դառնա թերթի խմբագրապետ: «Արևելքը» մնաց պահպանողականների տնօրինությանը: Ըստ Արփիարյանի, 1890-ի փետրվարից ի վեր «Արևելքը» դարձավ զուտ պահպանողական թերթ, զուրկ «որևէ գաղափարից»: Քեչյանի խմբագրությամբ այն դարձել էր գործարար շրջանների թերթ: Արփիարյանը Գում-Գափուլի ցույցով ավետում էր նոր շրջանի վերջը, որ սկսվել էր ռուս-թուրքական պատերազմից հետո: «...Տույցը անցյալի մը վերջակետն էր ու ապագայի մը մեկնակետը»²: Այդ օրը հայ ժողովուրդը կորցրեց իր վստահությունը, համարվեց խռովարար ու ապստամբ: Նա նմանվեց «թշնամի բանակե մը պաշարյալ ժողովրդի» մը, որուն պահապան զինվորներեն սակավածեռն ջոկատ մը էր մտաբերե և կը փորձե հանկարծական հարձակումով մը պաշարողները ահաբեկե և նահանջի պարտավորե: Չի հաջողվեր, բավական կորուստ տալե հետո կվերադառնա իր

¹ Ա.Ալպոյաճյան, Գրիգոր Չոհրապ, էջ 98:

² Ա.Արփիարյան, Պատմություն ժԹ դարու Թուրքիո Գայոց գրականության, Գահիրե, 1944, էջ 177

պարիսպներուն մեջ, որպեսզի նոր պատրաստութիւններ տեսնե, նորեն հարծակի, փրկե երկիրն ու ժողովուրդը»¹:

1891-ին վերջանում է «Արևելքի» «տիրապետության» շրջանը: Նրա աջ և ձախ թևերի պառակտումից ստեղծվում է երկու ուղղություն, որոնք իրար հետ մաքառում են «բուռն սաստկությամբ: Հիները կառչած կը մնային իրենց բեմին «Արևելքին», ուր իր տիրապետությունը ավելի զգալի կըներ բեղմնավոր հրապարակագիր մը Բյուզանդ Քեչյան»²: Նոր ուղղությունը համախմբվում է Արփիարյանի շուրջը, որը 1891-ին սկսում է հրատարակել «Հայրենիք» օրաթերթը: Այս դեպքերից հետո «Արևելքը» աշխատում է այլևս չանդրադառնալ խռովահույզ դեպքերի նկարագրությանը, հաստատ պահել «հավատարիմ հպատակի» իր համարումը: Սակայն 4-5 տարի անց, 1894-ի վերջերից, Սասունի ինքնապաշտպանական ելութների և 1895-96թթ. հայկական կոտորածների ընթացքում, սկսում են տավել նմանօրինակ հողվածներ: Այս անգամ մայրաքաղաքի հայությանը հաջորդակից դարձնելով թուրքական «Իգտամ», «Սապահ» և «Թերթիմանը հագիգաթ» թերթերում հայկական հարցին նվիրված հողվածներին, ուր թուրք խմբագիրները հարծակվում էին «հայերի ինքնավարության ձգտումների» վրա, զրպարտություն էին համարում եվրոպական թղթակիցների հողվածները հայկական կոտորածների վերաբերյալ, թերթի խմբագիրը չէր ցանկանում տալ իր դիրքորոշումը: Թուրքական թերթերի հաղորդագրությունների օգնությամբ նա ընթերցողին հաղորդում էր իրադարձություններ և փաստեր: Թերթը հրատարակում էր նաև կառավարության պաշտոնական զեկուցագրերը, ուր հաղորդվում էր, թե գավառների հայությունը շնորհակալություն է հայտնում Բ.Ղռանը «հանրային ապահովությունը» վերականգնելու համար գործադրած ջանքերին, դրանից կողմնակի հասկացվում էր, որ կառավարությունը ճնշել է գավառներում ծագած շարժումները և համատարած արյունահեղությունները «կարգ հաստատելու» ամենաընդունված միջոցներն են: Հատկանշական է, որ այդ շնորհակալագրերը վերբերում էին այն վայրերի բնակչությանը, ուր թուրքական կառավարության կազմակերպած հայկական կոտորածներին ի պատասխան, հետևել էին ինքնապաշտպանական մարտեր Ձեյթունից, Վանից, Ուրֆայից,

¹ Նույն տեղում:

² Ա Ալպոյանյան, Գրիգոր Չոհրապ, Կ Պոլիս, 1919, էջ 99

Բիթլիսից/Սասուն/, Ամասիայից, Զյոթահիայից, Խարբերդից, Չոք-Սարգվանից և այլն: Շնորհակալագրերի հետ միասին նշվում էր, որ կառավարությունը «խաղաղությունը» հաստատելու համար ստիպված ձերբակալել է խռովարար հայերին, որոնց պատժաչափը պետք է որոշեր թուրքական դատարանը:

Օրավուր ահագնացող կանխարգել գրաքննության պայմաններում բնական է թերթի այս «օբյեկտիվ» վերաբերմունքը հայկական խնդրի և ազատագրական շարժումների նկատմամբ: Հ.Շահնագարի և Արփիարյանի «Հայրենիքը», որ չէր ցանկանում խեղդվել երկաթե ճիրաններում, համարյա ամեն ամիս դադարման հրաման էր ստանում: Իրադրությունը երկրում շիկանալուն զուգընթաց դժվարանում էր «Արևելքի» հրատարակության գործը, նույնիսկ այդպիսի համակերպված արտահայտությամբ: 1896-ին «Բանկ Օտոմանի» գրավումից հետո ոստիկանությունը ցանկացավ իր կողմից պատվիրած հողվածներով խեղաթյուրված ներկայացնել դեպքի պատճառները, սակայն Բ.Բեչյանը մերժեց այդ առաջարկները և գրավումից հետո 8-9 օր թերթը լույս չտեսավ, որպեսզի խուսափի ոստիկանության հրամանը կատարելուց: Հայկական այն թերթերը, որոնք այդ օրերին շարունակվեցին հրատարակվել, թուրքական գրաքննության կողմից արգելվեցին, հրապարակի վրա մնաց միայն հայատառ թուրքերեն «ճերիտեի շարգիյեն»:

Գիտության նվաճումների արտացոլումը «Արևելքում»

Չի կարելի վերջացնել «Արևելք» օրաթերթի պատմությունը, առանց գոնե համառոտակի անդրադառնալու թերթի էջերում տեղ գտած գիտական հոդվածներին: Թերթը կատարում է գնահատելի մի գործ՝ պարզ ու հասկանալի լեզվով ժողովրդին ծանոթացնում էր իր ժամանակի գիտության նվաճումներին: Թերթի գիտական բաժինը անփոփոխ վարում էր Հովսեփ Յուսուֆյանը: Ընթերցողները ծանոթանում են աստղագիտության, ֆիզիկայի, բժշկության, տեխնիկայի ձեռքբերումներին:

«Էլեկտրականությունը և իր կիրառությունը», «Արեգակ-սպեքտրոսկոպ», «Աստղագիտության» ճաշակ» հոդվածները և դրանց նման շատերը, ֆիզիկայի նվաճումները ժողովրդին հասկանալի դարձնելու հմուտ փորձեր են:

Ձարմանալի է այն հանգմանքը, որ գիտության մի ճյուղ չէ, որի վրա փորձ է առվում հրավիրել զանգվածների ուշադրությունը: Կարելի է խոստովանել, որ տեխնիկայի և գիտության ոչ մի նորություն չի վրիպում գիտական բաժինը վարող և Գրիգոր Զոհրապի կողմից «մեր ազգին մեծագույն գիտնականը» բնութագրվող Դոկտեպի Յուսուֆյանի կողմից:

Առավել հետաքրքիր են բժշկությանը նվիրած հոդվածները, որոնցում նշվում են և տարբեր հիվանդությունները, և դրանց բուժման եղանակները, և այդ ասպարեզում եղած նորությունները: Այդ հոդվածներն ընթերցողներին տալիս են տարրական գիտելիքներ մարդու հիգիենայի կանոնների վերաբերյալ: «Լուսի Բասթեռռի նոր գյուտը» /Արևելք, N 113/, «Պատմություն մարդկային պատվաստման» /122/, «Մանկանց հիվանդություն» /N 3168/, «Տեսություն հնտախտին վրա» /N 3169/, «Զլորոֆորմանգոպայություն» հոդվածները նվիրված են տարբեր հիվանդությունների բուժման եղանակները: Առաջին՝ «Լուսի Բասթեռռի նոր գյուտը» /Շանց կատաղության վրա/ ժողովրդականացնում է բժշկագիտության նվիրյալներից մեկի՝ Պաստյորի գյուտը. հազարավոր, ավելի ճիշտ՝ միլիոնավոր մարդկանց փրկող հայտնագործությունը, պատվաստման միջոցով հիվանդությունները կանխարգելելու եղանակը: Կարծես այդ հոդվածի տրամաբանական շարունակությունն է «Պատմություն մարդկային պատվաստման» հոդվածը: Այն Յուսուֆյանի գրախոսությունն է հայտնի բժիշկ-գիտնական, Փարիզի բժշկագիտական բարձրագույն հաստատությունը ավարտած, ժամանակի անվանի հասարակական գործիչ Տիգրան Փեշտիմալճյանի «Պատմություն մարդկային պատվաստման» գրքի մասին: Սկզբում հեղինակը մեծ ուրախություն է հայտնում հայերեն այդպիսի արժեքավոր գիրք կարդալու համար: Գրախոսի ուշադրությունից չի վրիպել Փեշտիմալճյանի պարզ ու հստակ ոճը, բարդ հարցերը պարզ /ոչ պարզունակ/ մեկնաբանելու կարողությունը: Գիրքը նվիրված էր «ծաղիկ» հիվանդության դեմ պատվաստը հայտնաբերելուն և կիրառելուն: Մինչդեռ «ծաղիկը», ինչպես փաստում է Յուսուֆյանը, մարդկությունից խլել է անհաշիվ զոհեր. ոչ մի պատերազմ չի ոչնչացրել մարդկության մեկ քառորդը, ինչպես արել է «ծաղիկը»: 19-րդ դարը դեռևս գտնվում է նրա հարվածների տակ: Գրախոսության հեղինակը հորդորում է ժողովրդին՝ ժամանակին ընդունել պատվաստումը և կանխել

հիվանդությունը: Բարձր է գնահատվում գիրքը նաև գիտական տեսանկյունից. «Միայն նյութոց ցանկը տեսնել, բավական է տեսնելու համար, թե լոկ պատմություն մը չէ այդ գրվածքը, այլ կպարունակե այն ամեն, ինչ որ պատվաստի վրա կը գիտցվի ցարդ»:

Թերթը տեղեկություններ է հաղորդում նաև քաղաքակիրթ երկրներում միջազգային առողջապահական ժողովների ընթացքի մասին: Ընթերցողներին տեղեկացնում են Փեշտայում /Բուդապեշտ-Յունգարիա/ բացված միջազգային առողջապահական համաժողովի ընթացքի մասին /N 3167/: Գիտաժողովում հատուկ բաժիններում լսվել և քննարկվել են հիվանդությունների բուժման մասին տարբեր գեկուցումներ. առանձին քննության առարկա են դարձել դպրոցների /սովորողների/ առողջապահությանը հետևելու հարցերը /«Առողջապահություն վարժարանաց»/, մեծ քաղաքներում ժողովրդի առողջությունը հսկելու գործընթացի հարցերը /«Ժողովրդական առողջությունը քաղաքաց մեջ»/:

Ժողովրդի սեփականությունն է դարձվում նաև իր ժամանակի տեխնիկայի նվաճումները: «Թորբիլանավք» /N 97/ հոդվածը մանրամասն պատմում է տորպեդանավերի ստեղծման մասին: Եվրոպական ռազմատենչ պետությունները հսկայական գումարներ ներդրեցին ռազմական նավատորմիղներ և «ավերիչ ու մարդասպան գործիքներ» հայտնագործելու համար:

«Գետնափոր» հոդվածը նվիրված է մետրոյի ստեղծման պատմությանը ընդհանրապես, Ամերիկայի մետրոյի և երթևեկությունը դյուրացնելու միջոցների մասին:

Յոդվածներ են նվիրվում համաշխարհային գիտության զարգացման առաջամարտիկներին: Այդպիսի մի հոդված է տպվում Ջորջանո Բրունոյի ծննդյան առթիվ /N 1640,1641/: Զաղաքակիրթ մարդկությունը իր խորը հարգանքն է հավաստում հենց Յոնում կանգնեցնելով էտտորե Ֆերրարի ստեղծած Բրունոյի արձանը և իբրև երախտիցի արտահայտություն՝ արձանի առաջ խոնարհում են 1970 դրոշ և զարդարում 2000-ից ավելի պսակներով: Ազատատենչ գիտնականի կյանքի գիտական սխրանքը նկարագրող տարեգրության շարադրանքը /հոդվածի հեղինակ՝ Ա. Ֆեթվաճյան/ իր վրա հրավիրեց հետադեմ կղերի զայրույթը և կաթուղիկ պատրիարք Ազարյանը «Արևելքի» դադարեցման հրաման կորզեց տպագրական տեսչությունից:

Արժեքավոր են «Արևելքում» լույս տեսած *հայագիտության* տարբեր ծյուղերի վերաբերյալ գիտական հոդվածները: *Հնագիտության* մասին լույս են տեսնում առանձին հոդվածներ, վերծանվում են տարբեր արձանագրություններ: Աչքի է ընկնում վրաց գիտնական Դ. Բագրատաձեի «Հայկական հնագիտություն» հոդվածը, որում հեղինակը անդրադառնալով հայ և վրաց ժողովուրդների նախնական պատմությանը, նմանության եզրեր և առնչություններ է գտնում երկու հարևան ժողովուրդների հնագիտության միջև /N1259/: Հետաքրքրությամբ է ընթերցվում Մարկոս Նաթանյանի՝ Կոտառիճի հնություններին վերաբերող հնագիտական հոդվածը: Հեղինակն ընդգծում է որ երեք տարբեր մշակույթների՝ հեթանոսության, քրիստոնեության և իսլամության հնագիտական արժեքները իրար հետ համերաշխ գոյատևում են մի վայրում: Դա Կոտառիճի շրջակայքում է /Չարսանջակ, Բերի/, 1000մ բարձրության բնական աշտարակի վրա, որի ներքև խոր անդունդ է: Հեղեղատի «ահեղագոչ, մեծադղորդ արծագանքների» տակ Նաթանյանը հայտնաբերում է երեք տարբեր քաղաքակրթությունների համերաշխ գոյակցությունը, «որք զործնական կենաց թեպետ այնքան հակակիր բայց ավերակաց մեջ այնքան համակերպյալ միմյանց կկանգնեին առընթեր ի տեսիլ ապագայից և ի նշան անցելոյն» /N129/: Հեղինակը պրպտումներ է կատարում, ցանկանում պարզել, թե որ քաղաքի ավերակներն են այդ հույակապ մնացորդները: Հետազոտությունները, տարբեր ավետարանների ընթերցումները և պեղումները նրան բերում են այն եզրակացության, որ դրանք Ակիսի քաղաքի ավերակներն են: Որքանով է ճիշտ Նաթանյանի կռահումը, ասել հնարավոր չէ: Արժեքավորը հնությունների նկարագրություններն են:

Հայագիտության մի բնագավառ էլ *բառարանագիտությունն* է: Բարձր գնահատականի է արժանանում Ղևոնդ Ալիշանի «Հայքուսակ» բառարանը, որի մեջ ամփոփված են 3400 անուն՝ Հայաստանում աճող բույսերի, ծաղիկների և պտուղների մասին /N 3374/: Գրախոս Տիգրան Արփիարյանը /Տ.Ա./ գտնում է, որ այս աշխատությունը բնութագրել իբրև բառարան, ճիշտ չէ. «Բառարան բառը շատ տկար ու անկատար է բացահայտելու համար այս գործը, որ բառագիտության և բանաստեղծության զուգընթաց կերթա»... Մի այլ հոդվածում, այս անգամ Արփիար Արփիարյանի հեղինակությամբ /Զրազդան/ բարձր է գնահատվում բառարանագետ Նորայր Բյուզանդացու նոր ավարտած

«Բառգիրքը» /N 201/, նշվում նրա բերած նորությունները: Նույնիսկ «Բառգիրքը» Հրազդանի համար միջոց է հայ ժողովրդի պատմության տարբեր շրջանները մեկնաբանելու համար: Գրադատականի մեջ Հրազդանը միանգամայն ճիշտ գնահատական է տալիս պատմությանը. «Պատմությունը շղթա մըն է որո օղակները սերտ կերպով կապված են միմյանց»: Եթե կտրվի այդ շղթայի օղակներից մեկը, ապա կխաթարվի շղթայի ամբողջական պատկերը. ուրեմն անհրաժեշտ է քրտնաջան աշխատանք՝ շղթայի բոլոր օղակները հայտնաբերելու, ապա իրար կապելու համար:

Գիտական հետաքրքրություն է ներկայացնում Կ. Տյուրյանի /Առաքել Սարուխան/ «Հարազատ հայկաբանություն» հոդվածը, որում քննարկվում է Մխիթարյաններից մեկի՝ հայր Այտնյանի «Նոր քննական քերականություն» աշխատությունը, որն ունի մեծ կարևորություն հայոց պատմության, գրաբարի և աշխարհաբարի կապի ուսումնասիրության համար: Գրախոսը բարձր է գնահատում «Քննական տեսությունը» /N1253/: «Արևելքը» արժեքավորում, գնահատում և քննադատական դիտողություններ է անում նաև Մխիթարյան հայրերից մի ուրիշի՝ Գրիգորիս Ժ. վ. Գալենջարյանի «Հայ լրագրության պատմություն սկիզբեն մինչև մեր օրերը» աշխատության մասին: Դա հայ լրագրության հարյուրամյակի առիթով լույս ընծայած աշխատություն էր: Գրախոս Տիգրան Արփիարյանը իր անհամաձայնությունն է արտահայտում մամուլի տարբեր օրգանների մասին հեղինակի տված գնահատականների հետ /N 3186/:

«Արևելքի» ուշադրությունից չի վրիպում այն հանգամանքը, որ ռուս հետազոտողները իրենց ուսումնասիրության առարկա են դարձնում հայ ժողովրդի պատմությունը: Այդ փաստը իր ընթերցողներին ծանոթացնելու նպատակով «Մշակից» արտատպում է Վիկտոր Աֆանասևիչ Աբազայի «Հայոց պատմություն» գրքի մասին Գրիգոր Արծրունու գրած գրախոսականը:

Աբազայի գրքում գնահատվում են հայերի բարոյական հատկությունները՝ քրիստոնյա աշխարհին մատուցած ծառայությունը իբրև «քրիստոնեական լույսի դրոշակակիր»: Տեղեկությունները հայերի մասին այլ ժողովուրդների մեջ դրանով սահմանափակվել են, և երկրագործ ժողովուրդը աշխարհին հաճախ ներկայացվել է ծուռ հայելու մեջ՝ իբրև առևտրական

գեղծումներ կատարող: Արծրունու գնահատականով Աբազայի գիրքը մեծ արժեք ուներ իբրև «խղճմտավոր պոպուլյարիզացիա» «հայոց ազգի կյանքի ու բնավորության մասին»: «Մշակի» խմբագիրը ցանկալի էր համարում, որ այդ գիրքը մեծ տարածում գտներ ռուս ընթերցող հասարակության լայն շրջաններում /N 1236/: Ինքնատիպ գրախոսություն է գրվում նաև «Акты Кавказской Археологическои Комиссии» Թ /IX/ հատորի հրատարակության մասին: Գիրքն ընդգրկում էր 1838-1844թթ. ընկած ժամանակահատվածը: Ռուսական պետական արխիվներում գտնվող այդ վավերագրերի հրատարակությունը մեծ նշանակություն ուներ կովկասյան ազգությունների կրոնական, հողատիրական, վարչական, տնտեսական, ընտանեկան հարաբերությունները, նաև նրանց նվաճման փաստերը բացահայտելու տեսակետից: Գրախոսը իրավամբ բարձր է գնահատում «Акты» հատորների լույս ընծայումը, «որովհետև այն ներկայացնում է մի անգնահատելի աղբյուր, որից կովկասի ամեն ազգը կարող է քաղել անթիվ տեղեկություններ յուր մոտավոր անցյալի մասին և այդ տեղեկությունները հիմնված լինելով դիվանական գրությունների վրա, կլինեն նույնչափ ևս ճշմարիտ, ինչքան և թանկագին» /N 217/:

Հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության համար մեծ արժեք են ներկայացնում առանձին հայ գաղթօջախների մասին գրված հոդվածները: Դրանցով թերթը նպաստում էր հայ գաղթօջախների պատմության ստեղծման գործին: Ծավալուն հոդվածներ են տպվում Ամերիկայի հայ գաղութի /առանձնապես Ուսթր քաղաքի/ կազմավորման մասին /հեղինակ Մ. Թովհիանայան/: Ռումինիայի հայ գաղթօջախի մասին հոդվածաշարի հեղինակն է Մ. Սիրախորյանը /N 1674, 1679, 1685/: Տպվում է մեծ հոդվածաշար Նոր Զուղայի հայ գաղթականության մասին /NN 1223, 1227, 1231, 1235, 1241, 1245, 1263/: Հոդվածներ են տպվում նաև ծայր Արևելքի՝ Հնդկաստանի և Բիրմայի հայ գաղթօջախների մասին: «Հայ գաղթականություն ի Հնդկիս» /N 1273/ հոդվածի հեղինակը Վարսանույշն է: Անտոն Ասլանյանի «Հայոց ժառանգություն ի Հնդկաստան» հոդվածը բարձրացնում է Հնդկաստանի հայ մեծահարուստների՝ հայությանը կտակած զումարները վերադարձնելու հարցը: Այս հոդվածների մեծ մասն ունեն աղբյուրագիտական ուրույն արժեք:

Ինչպես սկզբում նշեցինք «Արևելքի» գիտական բաժինը անփոփոխ վարել է ժամանակի հասարակական գործիչ, «ազգին մեծագույն գիտնական» Յովսեփ Յուսուֆյանը: Գնահատելով նրա կատարած գործը Չոհրապը գրել է. «Իր ջանքը եղած է գիտական հողվածներով, որ «Արևելքի» ամենեն պատվաբեր էջերը կը կազմեն, գիտությունը ռամկացնել, հասկանալի ու մատչելի, նույնիսկ հրապուրիչ ընծայել ամեն անոնց, որոնք կը կարծեն, թե չոր ու ցամաք անապատ է այն»¹:

*

1896-ի աշնանից «Արևելքը» չի հրատարակվում: Բյուզանդ Բեչյանին մեծ դժվարությամբ հաջողվում է արտոնություն ստանալ և հրատարակել «Բյուզանդիոնը»: 1898-ին գրաքննությունը թույլ է տալիս «Արևելքի» վերահրատարակությունը, սակայն իր գոյությունը մինչև 1908թ. երիտթուրքերի հեղաշրջումը մի կերպ չարունակող թերթը շատ հեռու էր նախկին օրգանից: Այն լիովին կորցրել էր 80-ականների դեմոկրատական ավանդույթները, դարձել տիրող կարգերի ջատագով, խիստ պահպանողական մի օրգան, որի համար հաճախ վրդովեցնող և անհանգստացնող էին անգամ պատրիարքարանի ձեռնարկումները: Այժմ թերթում մեծ տեղ էին գրավում պաշտոնական զեկուցագրերը հայերին զսպելու մասին, իսպառ բացակայում էին ազգային կյանքի վերաբերյալ նյութեր, գրվում էին մեծ խմբագրականներ «Արտաքին տեսություններ» խորագրով: Այդ հանգամանքը նշել է թերթի ժամանակակից Գր. Չոհրապը դիպուկ նկատելով, որ նույնիսկ մեծ հողվածների տեղը չի հերիքում փաստառատության պատճառով: Առավել դիպուկ ընդգծվում է Բեչյանի ուղղությունը, որը պարտադրվեց նաև թերթին: «Այն տրամաբանության թանձրացյալ զանգվածը, որ Բյուզանդ Բեչյան կը կոչվի հակասության հազվագյուտ մեկ մարմանցումն է միանգամայն: Երբեք պաշտպանողական ոգին այսքան հարձակողական մարդու մը մեջ մուտք գործած չէր.. Ոչ ոք իրեն չափ քաջ գիտե ոսոխ մը պարտության մատնել, հարվածին ուժգինները ուղղելով տկարագույն կողմերուն, տասն և հինգ տարիէ ի վեր գրական կրկեսին ամենօրյա պայքարին մեջ ստացած սովորություն մը»²:

¹ Գր. Չոհրապ, Օանոթ դեմքեր ու պատմածքներ, Փարիզ, 1932, էջ 69-70

² Նույն տեղում, էջ 17, 19:

«Արևելք» օրաթերթի պատմության համառոտ շարադրանքը ցույց է տալիս, որ չնայած պահպանողական կողմնորոշմանը, նա խորը ակոսեց 19-րդ դարի վերջի հայ ռասարակական միտքը և իր արժանի տեղն ունի հայ մամուլի պատմության մեջ:



[40577]

A II
88364